

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ՏԱՐԵԳԻՐՔ

⑦

ԵՐԵՎԱՆ 2003 YEREVAN

ՀՏԴ 02
ԳՄԴ 78.3
Հ 253

Տպագրությունը իրականացվել է «Կարնեգի» հիմնադրամի, Նյու Յորք,
ֆինանսական աջակցությամբ

Տպագրության պատրաստեցին՝
ՆԵՐՍԵՍ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ
ՈԱՖԻԿ ՂԱԶԱՐՅԱՆԸ

Հ 253

Տպագրվում է Հայկական գրադարանային միության վարչության որոշման
համաձայն

Հրատարակվում է տարեկան մեկ անգամ

ISBN 99930-65-14-5

©2003, Հայկական գրադարանային միություն

ՄԻՈՒԹՅՈՒՆԸ 2003 ԹՎԱԿԱՆԻՆ

Սիրելի գրադարանավարներ,

Պատմություն դարձավ հերթական տարին: Վերջին տասնամյակում գրադարանային գործը թերևս ավելի ընդգծված և ցավագին կերպով կրել է երկրի հասարակական-քաղաքական իրողությունների, սոցիալ-տնտեսական վերելքների ու վայրէջքների կնիքը: Ոչ ոք չի կարող հաշվարկել այն հսկայական նյութական և ոչ նյութական, ուրեմն և անհաշվելի կորուստները, որոնք պատճառվեցին մեր երկրին, բաժին ընկան մեր սերնդին: Գիտական գրադարանները զրկվել են ֆոնդերը հարստացնելու և զարգացնելու հնարավորությունից և տարիներ շարունակ փորձում են գրքային «կարկատաններով» լցնել իրենց ընթերցողների իրական պահանջարկի զամբյուղը: Հանրային գրադարանների ֆոնդերը միջազգային չափորոշիչներով անդառնալիորեն հնացել են և ենթակա են դուրս գրման: Դպրոցական գրադարանների համակարգը լծված է դասագրքերի վաճառքի կամ վարձակալության գործին, որի պատճառով գրադարանային սպասարկման հիմնական առաքելությունը մնացել է երկրորդ պլանում: Գրադարանները շնչահեղձ են, ծերացած, մաշված, տասնամյակներով խնամքի կարոտ: Մեծ հաշվով, գրադարանների մասին հասարակությունը և, դրանից առաջ իշխանությունները, չեն հիշում:

Սա իրողություն է:

Սակայն գրադարանավարներն, այնուամենայնիվ, անկոտրում շարունակում են իրենց առաքելությունը:

Գրադարաններն աննկատ ոտք են դրել մի նոր ժամանակամիջոց, մի նոր դարաշրջան, որտեղ նրանք կարևոր դերակատարություն ունեն: Պարադոքս է գուցե, սակայն նախկին գրադարանային ցանցի վերականգնումն այլևս ոչ միայն անհնար է, այլև՝ անհիմաստ: Ժամանակակից պայմաններում մեր երկրին նոր գրադարաններ են անհրաժեշտ: Ավանդական գրադարանները պետք է վերափոխել, հաշվի առնելով նոր իրողությունները և ԻՖԼԱ-ի, ՅՈՒՆԵՍԿՕ-ի և Եվրոխորհրդի հանձնարարականները:

Ակնհայտ է, որ դեռ երկար տարիներ մեր երկրում գրադարանային ցանցի բնականոն զարգացումն ապահովելու համար ֆինանսական միջոցները չեն բավարարելու: Այդ պայմաններում լավագույն լուծումը գրադարանների ցանցի օպտիմալացումն է, գրադարանային-տեղեկատվական խառը համակարգերի, միավորումների և կոնսորցիումների ստեղծումն է: Միայն այս եղանակով է հնարավոր եղած սուղ միջոցների արդյունավետ օգտագործումը:

2002 թվականը միության գործունեության առավել արդյունավետ տարիներից մեկն էր: Տարին սկսվեց Հայաստանի գրադարանների կյանքում երբևէ կազմակերպված ամենազանգվածային միջոցառումով: Ապրիլի 14-20 անցկացված Ազգային գրադարանային շաբաթը համահայաստանյան ընդգրկում ունեցավ, վերածվելով իսկական գրադարանային տոնի: Շաբաթվա օրերից յուրաքանչյուրը յուրովի անկրկնելի էր և նկատելի հետք թողեց տարվա մշակութային իրադարձությունների վրա: Միության կոչին արձագանքեցին հանրապետության բոլոր մարզերի գրադարանները, որոնք այդ օրերին կազմակերպեցին ավելի քան երկու հարյուր տարբեր բնույթի միջոցառում: Շաբաթվա առիթով մենք լույս էինք ընծայել հատուկ գրադարանային պաստառներ, որոնք սիրով ընդունվեցին գրադարանային աշխատողների կողմից: Դրանք Հայաստանում հայ գրադարանային աշխատողների կողմից տպագրված *առաջին գրադարանային պաստառներն էին*: Շաբաթը լայն հասարակական արձագանք ունեցավ: Միջոցառումները լուսաբանվեցին հանրապետության կենտրոնական և տեղական ՁԼՄ-ով, այդ մասին հոդվածներ տպագրվեցին ամերիկյան և ռուսական մամուլում նույնպես:

Միությունը անցյալ տարի դարձավ «@Քո գրադարանը» միջազգային շարժման մասնակիցը: Միության անդամները հնարավորություն ունեցան մասնակցելու ԻՖԼԱ-ի Գլազգոյի գլխավոր ժողովին, Սուդանի կոնֆերանսին, Մոսկվայում, Բուդապեշտում, Ֆորտ Լոթրեյլում և այլուր կազմակերպված միջազգային սեմինարներին և կոնֆերանսներին:

Անցյալ տարվա սեպտեմբերի 27-30 երևանում տեղի ունեցավ կարևոր տարածաշրջանային գիտաժողով, որին մասնակցում էին Հարավային Կովկասի երեք երկրների և Ամերիկայի Միացյալ Նահանգների 37 գրադարանային մասնագետ: Խորհրդային կայսրության փլուզումից հետո սա առաջին գրադարանային միջոցառումն էր, որտեղ ներկա էին նաև Ադրբեջանի տասը գրադարանային աշխատողները: Նրանց մասնակցությունը առաջին հերթին ադրբեջանցի գրադարանավարների անձնական

ջանքերի արդյունքն էր, որը վկայում է նրանց ձգտումը աջակցելու մեր երկրների միջև հարաբերությունների կարգավորմանը:

Սեպտեմբերի սկզբին Հայաստանի Ազգային գրադարանում բացվեց Հայկական գրադարանային միության գրադարանավարների վերապատրաստման «Կովկաս» կենտրոնը: Այստեղ կազմակերպած երկշաբաթյա դասընթացների 32 մասնակից գրադարանային աշխատողներ ստացան ավարտական վկայականներ: Դեկտեմբերից ուրբաթ օրերին կենտրոնում կազմակերպվում են անգլերեն լեզվով գրադարանային ուսուցողական տեսաֆիլմերի դիտումներ:

Տարվա կենտրոնական իրադարձություններից էր հոկտեմբերի 2-ին անցկացված հաշվետու-ընտրական համագումարը: Համագումարն ընտրեց միության վարչության նոր կազմ բաղկացած 11 անդամից: Համագումարում միության նախագահ ընտրվեց Հայաստանի ազգային գրադարանի փոխտնօրեն Ներսես Հայրապետյանը, փոխնախագահ՝ Հայաստանի ամերիկյան համալսարանի «Փափազյանի» անվան գրադարանի տնօրեն Սաթենիկ Ավագյանը, քարտուղար՝ Հայաստանի ազգային գրադարանի փոխտնօրեն Ռաֆիկ Ղազարյանը:

2003 թվականի համար միության վարչությունը մշակել է գործունեության մանրամասն ծրագիր: Ապրիլի 8-14 նախատեսվում է կազմակերպել Ազգային գրադարանային շաբաթը: Տպագրության է պատրաստվում է «Տարեգրքի» հերթական 7-րդ համարը: Բազմաբովանդակ ծրագրեր է իրականացվելու նաև «Կովկաս» վերապատրաստման կենտրոնում: Առաջիկայում լույս կտեսնի կենտրոնի հայերեն լեզվով ուսումնական ձեռնարկը: Տպագրության է պատրաստվում «Հարավային Կովկասի գրադարանների տեղեկատու և ով ով է Հարավային Կովկասի գրադարաններում» անգլերեն և ռուսերեն լեզուներով ուղեցույցը:

Միության գործունեությանը առաջարկում ենք հետևել նաև մեր ինտերնետային սեփական էջում www.nla.am/ala հասցեով:

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ՇԱՐԱԹ

ՓԵՓՐՈՆԵ ՄԵԺԼՈՒՄՅԱՆ

Խնկո-Ապոր անվան հանրապետական
մանկական գրադարանի աշխատակից

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ՇԱՐԱԹ 14-20 ԱՊՐԻԼԻ, 2002

2002-թ. ապրիլի 14-20-ը Հայկական գրադարանային միությունը Ամերիկյան գրադարանային միության համագործակցությամբ կազմակերպել էր Ազգային գրադարանային շաբաթ (ԱԳՇ): Այդ ծրագիրն ընդունվել էր 2001թ. մայիսին Թբիլիսիում անցկացված եռօրյա սեմինարի ընթացքում:

Շաբաթվա հիմնական նպատակն էր գրադարանների դերի բարձրացումը, գրադարանային հիմնահարցերի, գրքի և ընթերցանության, հայ և համաշխարհային գրական հուշարձանների ներկայացումը, գրադարանների իբրև մշակույթի, կրթության և տեղեկատվության դերի կարևորումը, հասարակության լայն խավերի հետ գրադարանների երկխոսության քաջալերումը: Կարևորվում էր նաև ծրագրի շրջանակներում մշակութային կապերի հաստատումը, գրադարանների բարեկամների ակումբների հիմնադրումը և այլն:

Շաբաթվա ընթացքում եղան բազմաբնույթ միջոցառումներ՝ Երևանի և հանրապետության մարզերի տարբեր գրադարաններում: Տպագրվել էին ճաշակով ձևավորված գրադարանային պլակատներ և հրավիրատոմսեր:

Մշակվել էր ԱԳՇ-ի անցկացման ծրագիրը և ժամանակացույցը, ըստ որի նախատեսվել էին հանդիսություններ և միջոցառումներ մարզային և քաղաքային գրադարաններում, «Բաց դռների օր», «Հայաստանը և աշխարհը» միջազգային գրքային կամուրջներ (ցուցահանդեսներ, հանդիպումներ, շնորհանդեսներ):

ԱԳՇ բացման արարողությունը անցավ Ազգային գրադարանի լեփ-լեցուն դահլիճում, որին մասնակցում էին գրողներ, գիտնականներ, մտավորականներ, գրահրատարակիչներ, կրթության բնագավառի աշխատակիցներ, ընթերցողներ: Պաշտոնական բացման խոսքով հանդես եկավ միության նախագահ Ներսես Հայրապետյանը: Ողջույնի խոսքով հանդես եկան Սիլվա Կապուտիկյանը, ՀՀ ԳԱԱ փոխնախագահ, ակադեմիկոս Վլադիմիր Բարխուդարյանը, Հայաստանի Ազգային գրադարանի տնօրեն Դավիթ Սարգսյանը, ՀՀ ԱՄՆ արտակարգ և լիազոր դեսպան Ջոն Օրդուեյը:

Մեծ ոգևորություն ու խանդավառություն առաջացրեց «Ընտանեկան ընթերցանության երեկոն», որի ժամանակ Հայաստանում ապրիլի 17, երեկոյան ժամը 8³⁰-9⁰⁰ բոլոր ծնողները պիտի կարդային իրենց մանուկների համար: Այս ծրագրին արձագանքեցին բազմաթիվ դպրոցներ և մանկական գրադարաններ: Ընտանեկան ընթերցանության երեկոյի քարոզչությանը շատ օգնեց հատուկ այդ օրվան նվիրված պլակատը, որի ձևավորման համար սիրով համաձայնվել էր լուսանկարվել մեծահամբավ բանաստեղծուհի Սիլվա Կապուտիկյանը:

Մի ամբողջ օր մանուկներին հյուրընկալեց Խնկո-Ապոր անվան հանրապետական մանկական գրադարանը: Միջոցառումները հաջորդում էին մեկը մյուսին: Մանուկ ընթերցողները մեծ խանդավառությամբ տոնում էին գրքի ու գրականության օրը իրենց սիրելի օջախում:

Ընթերցողներն ու գրադարանի աշխատակիցներն անհամբերությամբ էին սպասում ապրիլի 18-ին հայտարարված «Բաց դռների օր» միջոցառմանը, որի ժամանակ ընթերցողները հանդիպեցին ԱԺ պատգամավորների և կառավարության անդամների հետ, առաջ քաշելով խիստ հրատապ ու արդիական հարցեր:

Հետաքրքիր միջոցառումների շարքով («Լավագույն գրադարան, լավագույն գրադարանավար» մրցույթ) հանդես եկավ Երևանի Ավ. Իսահակյանի անվան քաղաքային կենտրոնական գրադարանը:

Յուրօրինակ մասնակցություն ցուցաբերեց նաև գիտաերաժշտական գրադարանը՝ համերգ կազմակերպելով ՀՀ կոմպոզիտորների միության դահլիճում:

Հանրապետության գրեթե բոլոր մարզային գրադարաններում մեծ հանդիսավորությամբ անցկացվեցին խոշոր միջոցառումներ, որոնք լուսաբանվեցին մարզային հեռուստատալիքներով, դառնալով նշանակալի երևույթ՝ մարզերի մշակութային կյանքում:

ԱԳՇ շրջանակներում Հայկական գրադարանային միության վարչության անդամներին ընդունեց ՀՀ ԱԺ նախագահ՝ Ա. Խաչատրյանը: Շաբաթվա եզրափակիչ օրը տեղի ունեցավ մամուլի ասուլիս Հայաստանի ժողովրդավարության օրը, որի ընթացքում վարչության անդամները և մի քանի գրադարանների տնօրեններ արժարժեցին գրադարանային բազմաթիվ հիմնախնդիրներ, պատասխանելով լրագրողների հարցերին:

Ազգային գրադարանային շաբաթվա ծրագիրն ընդունելիս կազմակերպիչները մտավախություն ունեին. միջոցառումն իր նախադեպը չունեց, չգիտեին թե հանրապետության գրադարանային հանրությունը ինչպես կարծագանքի ծրագրին: Բայց միջոցառման անակնկալ հաջողությունը ոգևորեց բոլորին, մեկ անգամ ևս ապացուցելով, որ գործի հաջողության համար, լավ աշխատել է պետք: Ազգային գրադարանային շաբաթին տարբեր միջոցառումներով մասնակցեցին հանրապետության 100-ից ավելի գրադարաններ:

Մեծ էր հատկապես մարզային գրադարանավարների ուրախությունը, որոնք անմիջապես նամակ-ողջույններով հաստատեցին իրենց մասնակցությունը ծրագրին:

Գրադարանների կենտրոնացված համակարգի փլուզումից հետո, փակվել են բազմաթիվ քաղաքային ու գյուղական գրադարաններ: Շատ գրադարաններ տարիներ շարունակ ոչ մի տեղից օգնություն չստանալով հուսահատվել էին և Շաբաթն ընդունեցին ոգևորությամբ: Գրադարանավարներից մեկը իր ուրախությունն արտահայտել էր այսպես. «Վերջապես հիշեցին նաև մեզ՝ «քամուց քշվածներին...»:

Հայկական գրադարանային միության վարչության անդամները մեկնեցին հանրապետության տարբեր մարզեր: Հանրապետության երկրորդ քաղաքը՝ Գյումրին, պահպանելով մշակութային իր լավագույն ավանդույթները, վարչության անդամներին դիմավորեց փողային նվազախմբով՝ իսկական տոնի վերածելով շաբաթվա միջոցառումները:

Միջոցառումների բարձր մակարդակով աչքի ընկան ոչ միայն Երևան քաղաքի, այլև մարզային շատ գրադարաններ: ԱԳՇ միջոցառման արձագանքները հասան մինչև հանրապետության հեռավոր մարզեր: Շաբաթը լայն հասարակական արձագանք գտավ: Միջոցառումները լուսաբանվեցին լրատվության բոլոր միջոցներով: Արմավիրի, Գեղարքունիքի, Կոտայքի, Շիրակի, Սյունիքի մարզային գրադարանների, Նոյեմբերյանի քաղաքային գրադարանի միջոցառումները ցուցադրվեցին տեղական հեռուստաալիքներով:

Գրադարանային շաբաթին իրենց ակտիվ մասնակցության համար հանրապետության 10 գրադարաններ, ՀԳՄ վարչության կողմից իբրև խրախուսանք՝ արժանացան երկու անուն հայկական պարբերականի բաժանորդագրության:

Ցավոք, ազգային գրադարանային շաբաթին ակտիվորեն չմասնակցեցին բուհական գրադարանները (բացառությամբ Հայկական գյուղատնտեսական ակադեմիայի գրադարանի):

Հուսով ենք, որ Ազգային գրադարանային շաբաթը կկազմակերպվի ամեն տարի և կդառնա ավանդական գրադարանային տոն:

ՄԵՐ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԸ

Ներսես Հայրապետյան

ՀԱՐԱՎԱՐԵՎԵԼՅԱՆ ՖԼՈՐԻԴԱՅԻ ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Հարավարևելյան Ֆլորիդայի գրադարանային և տեղեկատվական համակարգը, որը հայտնի է ՍԵՖԼԻՆ անվանումով, կազմում է ԱՄՆ Ֆլորիդա նահանգի խոշոր գրադարանային համակարգերից մեկը: Ընդհանուր առմամբ Ֆլորիդան բաժանված է 67 շրջանների, որոնք միավորված են 6 գրադարանային համակարգերի մեջ: Այդ համակարգերն են՝ Փանհանդլի գրադարանային մուտքի համակարգը, որն սպասարկում է 17 համայնք 1 միլիոն բնակչությամբ, Հյուսիսարևելյան Ֆլորիդայի գրադարանային տեղեկատվական համակարգը (20 համայնք, 1.8 միլիոն բնակիչ), Կենտրոնական Ֆլորիդայի գրադարանային միավորումը (8 համայնք 2.7 միլիոն բնակիչ), Թամպայի ծովածոցի գրադարանային կոնսորցիում (12 համայնք 3.8 միլիոն բնակիչ), Հարավարևմտյան Ֆլորիդայի գրադարանային տեղեկատվական համակարգը (5 համայնք 0.75 միլիոն բնակիչ) և Հարավարևելյան Ֆլորիդայի գրադարանային և տեղեկատվական համակարգը (5 համայնք 5 միլիոն բնակիչ):

ՍԵՖԼԻՆ-ը հիմնադրվել է 1984 թ-ին: Այն շահույթի նպատակ չհետապնդող կազմակերպություն է (տես www.seflin.org), որը միավորում է Հարավարևելյան Ֆլորիդայի տարբեր բնույթի գրադարաններ, գրադարանային համակարգեր և տեղեկատվական հաստատություններ: Կազմակերպության նպատակն է նպաստել անդամ գրադարանների հավաքածուների զարգացմանը և նրանց միջև տեղեկատվական պաշարների ազատ փոխանակությանը և շրջանառությանը, կազմակերպել գրադարանավարների շարունակական կրթությունը և վերապատրաստումը, աջակցել գրադարաններին Հարավարևելյան Ֆլորիդայի համայնքների բնակչության տեղեկատվական, կրթական, մշակութային կարիքների բավարարմանը:

ՍԵՖԼԻՆ-ի իրականացրած առաջին ծրագրերից մեկը այս տարածքի գրադարանների միջև միջգրադարանային բաժնույթի համակարգի ստեղծումն էր: ՍԵՖԼԻՆ-ի հատուկ գրքատար ավտոմեքենաներով ամեն օր գրադարանների պատվերները հասցնում էին ցանցին անդամագրված գրադարաններին: Հետագայում այս ծրագիրը սկսեց ֆինանսավորվել ֆեդերալ բյուջեի հաշվին և ներկայումս այդ համակարգում ներգրավված է ավելի քան 200 գրադարան:

ՍԵՖԼԻՆ-ը սպասարկում է Բրոուարտ, Դեյդ, Մարտին, Մոնրո և Փալմ Բիչ համայնքների գրադարաններին: 2002 թ. սեպտեմբերի կազմակերպությանը անդամակցում էին 25 գրադարան, քուլեջ և համալսարան, այդ թվում՝ !6-ը լրիվ իրավունքներով անդամ են, մնացածները՝ ոչ լրիվ անդամի կամ անդամության թեկնածուի կարգավիճակով: Լրիվ անդամների համար սահմանված նվազագույն տարեկան անդամավճարը կազմում է 15.000 դոլար (անդամության թեկնածուների համար՝ \$3000): Սակայն սա միայն տարեկան մինչև 500 հազար դոլար բյուջե ունեցող գրադարանների համար է: Ավելի հարուստ գրադարանները ավելի շատ են վճարում: Օրինակ, ավելի քան մեկ միլիոն մուտքերի դեպքում գրադարանը վճարում է \$18.150, հինգ միլիոնից ավելի դեպքում անդամավճարը կազմում է \$26.573, իսկ արդեն քսանհինգ միլիոն դոլարից անդամավճարը կազմում է \$56.962:

ՍԵՖԼԻՆ-ին կարող են անդամակցել ոչ միայն Հարավարևելյան Ֆլորիդայի, այլև ԱՄՆ նահանգների և արտասահմանյան երկրների գրադարանները, ովքեր ցանկանում են օգտվել այդ կազմակերպության ծառայություններից: Ոչ տեղական գրադարանները անդամագրվելիս կազմակերպության կառավարման մեջ ձայնի իրավունք չեն ստանում: Միայն ՍԵՖԼԻՆ-ի լիարժեք անդամներն իրավունք ունեն իրենց ներկայացուցիչն ունենալ խորհրդի կազմում: Սովորաբար տա տվյալ կազմակերպության տնօրենն է կամ նրա կողմից լիազորված անձը:

Կազմակերպությունն ունի կառավարման հետևյալ կառուցվածքը: ՍԵՖԼԻՆ-ի կառավարման բարձրագույն մարմինը Տնօրենների խորհուրդն է, որի նիստերը դեկավարում է նախագահը: Նախագահը և փոխնախագահը ընտրվում են մեկ տարով: Հաջորդ տարի ընտրվում է նոր փոխնախագահ, իսկ նախորդը ստանձնում է նախագահի պարտականությունները և իրավունքները:

ՍԵՖԼԻՆ-ի գործադիր ողջ իշխանությունը պատկանում է գործադիր տնօրենին, որը աշխատանքի է ընդունվում և ազատվում է աշխատանքից Տնօրենների խորհրդի կողմից:

Նա ունի իր ապարատը, աշխատակիցները: ՍԵՖԼԻՆ-ի նստավայրը գտնվում է Բրոուարտի համայնքային գրադարանում, որտեղ զբաղեցնում է շենքի 6-րդ հարկի մի ամբողջ թևը: 2002թ. նոյեմբերին կազմակերպությունում աշխատում էին 10 հոգի:

Տնօրենների խորհուրդի նիստերը հրավիրվում են երկու ամիսը մեկ անգամ: Նիստերի միջև ընկած ժամանակամիջոցում գործադիրի աշխատանքին հետևելու համար գոյություն ունի մի այլ, ավելի փոքրաթիվ, սակայն բավական լայն լիազորություններով օժտված մարմին՝ գործադիր կոմիտե: Նրա կազմի մեջ մտնում են նախագահը, նախկին նախագահը, փոխնախագահը, գործադիր տնօրենը, ինչպես նաև երկու անդամ, որոնք ընտրվում են տնօրենների խորհրդի կողմից: Գործադիր կոմիտեն նիստեր է գումարում ըստ անհրաժեշտության: Նրա նպատակն է վերահսկել տնօրենների խորհրդի որոշումների կատարման ընթացքը, ինչպես նաև տարեկան բյուջեի ծախսումները և այդ մասին գեկուցել տնօրենների խորհրդին:

ՍԵՖԼԻՆ-ի տարեկան բյուջեն կազմում է մեկ միլիոն դոլարից ավելի գումար, որի 45-50 տոկոսը ձևավորվում է անդամավճարներից, 25 տոկոսը ստացվում է նահանգային և ֆեդերալ հատկացումներից, իսկ մնացածը լրացվում է տարբեր դրամաշնորհներից, որով զբաղվում են կազմակերպության մի քանի աշխատողներ: Նահանգային և ֆեդերալ բյուջեում հատկացումների բաշխումը իրականացնում է Ֆլորիդայի նահանգային գրադարանը: Նահանգի բյուջեից Ֆլորիդայի բոլոր վեցը համակարգերը ստանում են հավասարաչափ՝ 200 հազար դոլարի տարեկան հատկացումներ: Ֆեդերալ բյուջեից ստացվող գումարների չափը տարբեր է՝ կախված տվյալ ռեգիոնում գրադարանային ցանցի մեծությունից: Քանի որ ամբողջ ծախսերի մասնաբաժնում անդամավճարները կազմում են ոչ ավելի քան տարեկան բյուջեի կեսը, ուստի ստացվում է, որ անդամ գրադարանները իրենց վճարած յուրաքանչյուր դոլարի դիմաց, ծառայությունների մատուցման և տեխնիկայի տեսքով ստանում են մոտ երկու դոլար ներդրում:

ՍԵՖԼԻՆ-ը իր անդամ-գրադարաններին առաջարկում է բյուջեում առանձնացնել հատուկ նպատակային տող՝ գրադարանավարների ուսուցման և վերապատրաստման համար, ընդհանուր բյուջեի ծախսերի 5 տոկոսի չափով: Այդ գումարի մոտավորապես կեսը անդամավճարի տեսքով փոխանցվում է ՍԵՖԼԻՆ-ին, իսկ մնացածը գրադարանները տնօրինում են իրենց հայեցողությամբ՝ գրադարանավարներին հնարավորություն տալով մասնակցելու տեղական, ազգային և միջազգային կոնֆերանսների, վճարելով երիտասարդ գրադարանային մասնագետների ուսման վարձերը, ճանաչված մասնագետներ հրավիրելով և այլ նպատակներով:

Վերջին տարիներին կատարված հետազոտությունները ցույց են տվել, որ առաջիկ 10 տարում ԱՄՆ գրադարանների թիվ մեկ պորբլեմը կարող է դառնալ գրադարանային մասնագետների պակասը: Հաշվարկված է, որ մեկ տասնամյակ հետո գրադարանային աշխատողների մոտ 40 տոկոսը հասնելու է թոշակի տարիքի, ուստի կարևոր խնդիր է դառնում երիտասարդ գրադարանավարների հերթափոխի պատրաստումը:

ՍԵՖԼԻՆ-ը առաջարկում է գրադարանավարների վերապատրաստման բազմազան ծրագրեր: Գրադարանավարների և տեղեկատվական մասնագետների վերապատրաստումը և ուսուցումը կատարվում է ինչպես ավանդական մեթոդներով, այնպես էլ ժամանակակից, ներառելով ինտերնետային հնարավորությունները: ՍԵՖԼԻՆ-ը 1989-1999 տարեշրջանում կազմկերպել է 68 տարբեր բնույթի վերապատրաստումներ, որոնց մասնակցել են ցանցի 1299 գրադարանային աշխատողներ:

ՍԵՖԼԻՆ-ը առաջարկում է հեռուստուցման տարբեր ծրագրեր, ներառյալ, այսպես կոչված, «Element K» վեբ ուսուցման առարկաների ցանկը: Սա Նյու Յորքում հաստատված մի կազմակերպություն է, որը հեռուստուցման հավատարմագրված ծրագրեր է մատուցում աշխարհի ավելի քան 144 երկրում, այդ թվում նաև Հայաստանում: Element K-ի առարկայական փաթեթում կա համակարգչային ծրագրերի, ֆինանսների, բիզնեսի, մենեջմենթի և այլ բնագավառների վերաբերյալ ավելի քան 1000 տարբեր թեմաներ: Այդ առարկաները մատուցվում են ինչպես սկսնակների, այնպես էլ ավելի փորձառու աշխատողների համար: Ավելի մանրամասն տեղեկություններ կարելի է ստանալ այդ կազմակերպության ինտերնետային սեփական էջից՝ www.elementk.com

Ֆլորիդայի նահանգային գրադարանի ֆինանսական օժանդակությամբ ՍԵՖԼԻՆ-ը կազմակերպության անդամ-գրադարանների համար ստեղծել է միասնական համահավաք էլեկտրոնային գրացուցակը: Այդ նպատակով ստեղծվել է հատուկ համակարգչային ծրագրային ապահովում, որը 2002 թվականին դեռևս լրացվում և հարստացվում էր: Եթե բացենք www.MyLibraryService.org հասցեն, ապա կարող ենք տեղեկություններ ստանալ Հարավարևելյան Ֆլորիդայի գրադարանային և տեղեկատվական համակարգում եղած ցանկացած գրքի առկայության վերաբերյալ: Հաշվի առնելով Ֆլորիդայում իսպանախոս հոծ զանգվածի առկայությունը էջը օգտագործելի է երկու լեզվով:

ԱՆԱՀԻՏ ՍՈՒՐԱԴՅԱԼ

Հայաստանի Ազգային գրադարանի
գլխավոր գրադարանավար

ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՍՈՒՐԲ ԱԹՈՒԻ ԿՅՈՒԼՊԵՆԿՅԱԼ ՄԱՏԵՆԱՊԱՐԱՆԸ

Մատենադարանները ազգերի մտավոր արժեքները ներկայացնող գանձարաններ են: Հայ ժողովուրդը միշտ ունեցել է այդ գանձարանները մեծ մասամբ իր վանքերի և եկեղեցիների մեջ. և այսօր էլ իրողությունն այն է, որ վանքերի և եկեղեցիների մեջ կենտրոնացված են նախնիների գրչից ելած բյուրավոր ձեռագրերի մնացորդները՝ բազմաթիվ կորուստներից հետո:

Երուսաղեմի Հայոց Պատրիարքության Աթոռը եղել է ձեռագրական ճոխ գանձարանի ավանդապահը: Դա մի պատկառելի հարստություն է ձեռագրերի որակի և քանակի իմաստով:

Երուսաղեմի Հայոց Պատրիարքության Կյուլպենկյան մատենադարանը կառուցվել է մեծանուն ազգային բարերար Գալուստ Կյուլպենկյանի նվիրատվությամբ, և այս պանծալի հաստատությունը բարեհիշատակ կոթող է Սիոնի բարձունքին:

Մատենադարանի հիմնարկեքի օրհնությունը կատարվել է 1929 թ. երջանկահիշատակ Եղիշե պատրիարք Դուրյանի ձեռամբ: Շինություններն ավարտվել են 1931թ., հանդիսավոր բացումը կատարվել է 1932թ. հոկտեմբերի 23-ին Սրբոց Թարգմանչաց տոնի առիթով՝ նախագահությամբ երջանկահիշատակ Թորգոմ պատրիարք Գուշակյանի: Այդ գրապալատը կանգնած է ի հիշատակ Գալուստ Կյուլպենկյանի հանգուցյալ ծնողների՝ Սարգսի և Տիրուհու:

Հիմնադրման օրից սկսած նվիրատվություններով և այլ օժանդակություններով նոր գրքեր են ավելացվում ձեռագիր և տպագիր հավաքածուներին: Հավաքածուն հարստանում է ազգային բարեգործների թողած կտակներով, գնումներով: Մատենադարանի գրքերը դասավորված են Դյուիի տասնորդական համակարգով, որն ընդունված է որպես գիտական արդիական դրություն և կիրառվում է աշխարհահռչակ մատենադարաններում: Գրքերը զետեղված են պողպատյա արկղներում: Կյուլպենկյան մատենադարանը սիյուռքում ճանաչված է որպես հայկական երեք մեծագույն մատենադարաններից մեկը՝ Վենետիկի և Վիեննայի Մխիթարյանների մատենադարանների կողքին: Մատենադարանը ստանում է շուրջ 250 անուն թերթ, հանդես և այլն, որոնց կեսը հայերեն է, մնացածները՝ օտար լեզուներով, առավելաբար՝ անգլերեն:

Կյուլպենկյան մատենադարանի առաջին տեսուչը եղավ Կյուրեղ վրդ. Իսրայելյանը, որը մինչև իր լուսարարապետության շրջանը /1939/ ձեռնհասորեն վարեց գործը:

Երուսաղեմի Սբ. Հակոբյանց մատենադարանը երկրորդն է Երուսաղեմի մատենադարանների թվում Հրեական համալսարանի մատենադարանից հետո՝ իբրև կառույց, թվաքանակ, որակ և հատկապես դասավորման ճշգրտություն և ներքին կարգ ու կարգապահություն:

Կյուլպենկյան մատենադարանի գոյությունը «ավելի քան մըն է»:

ՄԱՐԼԵՆ ՀՈՎԱԵՓՅԱՆ

*Խնկր Ապրր անվ. մասնական հանրապետական
գրադարանի փոխտնօրեն*

ՏՊԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱԼՖՈՐՆԻԱՅԻ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐԻՑ

ԱՄՆ կատարած անձնական հրավերով մեկամսյա այցս լիարժեք չէր լինի, եթե չայցելեի իմ մասնագիտությանն ու աշխատանքին անմիջականորեն առնչվող գրադարաններ:

Ազգականներիս՝ Սիլվա, Գրիգոր, Լիլի Անալեանների ուղեկցությամբ և օգնությամբ ինձ հաջողվեց լինել Կալիֆորնիայի մահանգի տարբեր ծայերում գտնվող գրադարաններում (Լոս Անջելեսի, Գլենդելի, Ուիթերի հանրային, Նիքսոնի, Հանթինգթոնի անձնական):

Առաջին անգամ ոտք դրած մարդուն Ամերիկան շլացնում է առատությամբ ու բազմազանությամբ: Այդպես էլ իր յուրահատուկ գեղեցկությամբ, շուքով և ճարտարապետական հետաքրքիր լուծումներով ինձ հիացրեց Լոս Անջելեսի կենտրոնական հանրային գրադարանը՝ իր ներքին կառուցվածքով և հարակից տարածքով, որը հանգիստի գոտի էր՝ զովացնող շատրվաններով: Այն լրացնում է Դաունթաունի տպավորիչ ու կարևորագույն շենքերի շարքը: Ի թիվս բազմաթիվ բաժինների, գրադարանն ունի Միջազգային լեզուներով գրականության բաժին, որտեղ այլ լեզուների մեջ իր արժեքավոր տեղն ունի նաև հայերեն գրականությունը:

Ինչպես ցանկացած գրադարանում, այնպես էլ այստեղ յուրահատուկ զարդ է երեխաներին հատկացված հարկաբաժինը՝ կրտսեր (մինչև 12 տարեկան) և պատանիներին հասցեագրված ստորաբաժանումներով: 260000-ից ավելի ֆոնդը հարուստ է հետաքրքիր գիրք-խաղալիքներով, նկարազարդ գրքերով, տեսալսողական նյութերով և ժամանակակից տեխնիկական սարքավորումներով: Օգտվելով համակարգչային ծառայություններից, ընթերցողը կարող է լիարժեք տեղեկություն ստանալ, տեղավորվելով հարմարավետ ու փափուկ կահույքին՝ ժամերով ընթերցել, ֆիլմեր դիտել, կամ պարզապես խաղալ փոքր ու մեծ խաղալիքներով: Առանձին սենյակներ են հատկացված հեքիաթի ունկնդրման, տիկնիկային թատրոնի սարքավորումներին ու հանդերձանքներին: Այստեղ երեխայի հետ խոսում են ինչպես մեծի հետ, ներգրավելով ակտիվ գրույցի մեջ՝ պարզում նրա ցանկություններն ու նախասիրությունները: Իրենց ջերմ ժպիտներով և բարեհաճ վերաբերմունքով գրադարանավարները երեխաների մեջ վստահություն ու բարեկամություն են ներշնչում:

Լոս Անջելեսի կենտրոնական և 67 մասնաճյուղ գրադարաններում հաճախ են կազմակերպվում գրքի քննարկումներ, գրողների հետ հանդիպումներ, շնորհանդեսներ, պոեզիայի, երաժշտության հանդեսներ, ցուցահանդեսներ, տիկնիկային ներկայացումներ, այլ կազմակերպությունների հետ համատեղ մեծ միջոցառումներ, որոնց համար կազմվում և հրատարակվում են համահավաք ծրագրեր:

Լոս Անջելեսի հանրային գրադարանի բոլոր բաժիններում էլ կա գրադարանային աշխատանքի ավանդական և նորագույն ձևերի մի հրաշալի ներդաշնակություն՝ կողք-կողքի, միմյանց լրացնելով ու հարստացնելով, առանց իրար խանգարելու կամ ճնշելու: Տեղեկատվական հարուստ շտեմարաններով համակարգիչներին համերաշխորեն ընկերակցում են ընթերցողական տարբեր խմբերին հասցեագրված հանձնարարական գրքերի ցանկերը, բուկլետները, տեղեկատու-գովազդային թերթիկները: Մեծ կարևորություն է տրվում ընթերցողների հետ կենդանի շփմանը, երկխոսությանն ու համատեղ աշխատանքներին: Որքան մեծ էր ուրախությունս ու հպարտությունս, երբ արևի տակ փայլող գրադարանի ցանկապատին տարբեր լեզուներով գրված գրքի մասին ասույթների կողքին կարդացի «ճանաչել զիմաստություն և գիտատ, իմանալ զբանս հանճարոյ» իմաստուն խոսքերը:

Հետո իմացա նաև, որ հայաշատ Գլենդել քաղաքում ապրող մեր հայրենակիցներից շատերն են հաճախում տեղի հանրային գրադարան: Մասնագիտական-տեղեկատվական բազայով, բարձր տեխնոլոգիական սարքավորումներով ապահովված Գլենդելի հանրային գրադարանն իր լուսավոր, հարմարավետ և ընդարձակ պայմաններով ընթերցասեր հասարակության համար անհրաժեշտ ու հաճելի այցելավայր է:

Հայազգի գրադարանավարի օգնությամբ ծանոթանալով գրադարանի կառուցվածքին՝ տեղեկացա, որ Միջազգային լեզուներով գրականության բաժնում 2000 միավորից ավելի հայերեն գրքեր կան, որոնք աճող սերնդի համար ոչ այնքան լավ ու նպատակային են համարված:

Այստեղ ևս առանձնահատուկ ոճով ու հարմարավետությամբ աչքի էր ընկնում 20000-ից ավելի ֆոնդ ունեցող մանկական բաժինը՝ պատկերազարդ գրքերով, բազմազան խաղերով և հեքիաթի սենյակով:

Նշեն, որ բազմազգ ու բազմալեզու Լոս Անջելեսում հայերենը գրավում է 3-րդ տեղը: Գրադարանային գործի իմացությամբ և փորձով ճանաչված ու հարգված է մեր հայրենակիցներից Սիլվա Նաթալի Մանուկյանը, որը ժամանակ առ ժամանակ աշխատում է տարբեր գրադարաններում:

Ինձ հյուրընկալած Ուիթեր քաղաքի հանրային գրադարանը մինչև երեկոյան ժամը 9⁰⁰ ընդունում էր իր հաճախորդներին. ի դեպ, ընթերցողն իրավունք ունի միաժամանակ տուն տանել 10-ից ավելի գիրք ու սկավառակ՝ 3 շաբաթից ավելի ժամանակով: Այս գրադարանն իր պատանի ընթերցողներին ավելի շատ հաղորդում է գիտահանրամատչելի գիտելիքներ, կազմակերպում աշխարհագրական միամսյակներ:

Խոսելով գրադարանների մասին, չեն կարող շրջանցել մի կարևոր, հետաքրքիր փաստ: Այցելելով նաև մի քանի գրախանութներ՝ հիացնունքով նկատեցի, թե որքան մոտ են դրանք գրադարանների աշխատառժին ու նպատակներին: Առանձնացված թեմատիկ, բնագավառային գրքերից, ամսագրերից ու տեսալսողական նյութերից ազատորեն կարող են օգտվել բոլորը առանց ժամանակի սահմանափակման, երեխաների հարկաբաժիններում գրքերի հետ կողք-կողքի շարված են գունյզգույն խաղալիքներ, առանձնացված են հանգստի, խաղի, հեքիաթի ունկնդրման /հատուկ ժամերի/ խցիկներ:

Իր բնույթով ու նպատակներով հանրային գրադարաններից տարբերվող Ռ. Նիքսոնի գրադարանի հարուստ հավաքածուն նախագահի անունը կրող հուշահամալիրի զարդն է հանդիսանում: Իսկ Զ. Զանթոգթոնի գրադարանի (Սան Մարինո) 4 միլիոնանոց խիստ արժեքավոր, հնատիպ հավաքածուն պահպանման և ցուցադրման բարձր մակարդակով գրավում է ամեն մի այցելուի:

Ժամանակի և հնարավորության սղության պատճառով ցավոք չէի կարող ավելի մանրամասնորեն ծանոթանալ ԱՄՆ-ի գրադարանների աշխատանքին, սակայն վստահաբար կարող եմ ասել, որ այս երկրի գրադարանավարները (ինչպես մյուսները) հարուստ և գերժամանակակից տեխնիկայով զինված մարդու գոռոզություն կամ բարձրից նայողի ցուցադրական կեցվածք չունեն, նրանք ավելի քան պարզ են, մարդամոտ և սրտաբաց:

ԲԱԼԱԲԵԿ ՄԵԼՅԱԼ

ԲԱՆԱՍ. ԳԻՏ. ԹԵԿՆԱԾՈՒ

ՀԱՅ ԳՐՔԻ ՈՒ ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ

Ժողովուրդների մշակութային նվաճումների ամենացայտուն բաղադրիչներից են նրա պատմական թանգարանները, իրենց հարուստ ցուցանմուշներով: Դրանք անմիջականորեն, շոշափելի կերպով, առանց մեծ ջանքերի հարյուր հազարավոր այցելուների ներկայացնում են տվյալ ժողովրդի պատմական ճակատագիրը՝ ծագումը, հեռավոր անցյալը, պատմական ուղին, մաքառումները, նվաճումները, նրանց ներդրումը համաշխարհային գիտության և մշակույթի ոլորտներում:

Հայ ժողովուրդն անմաս չէ այդ բնագավառներում: Թանգարանների նախատիպեր եղել են նաև Ուրարտուի մայրաքաղաք Տուշպայում և այլ քաղաքների հեթանոսական տաճարներում, մեհյաններում: Դրանք համարվել են արվեստի ու դպրության կենտրոններ, զանձատներ և արժեք ունեցող իրերի պահոցներ: Նշանավոր էր Երզնկայում գտնվող Անահիտ աստվածուհու տաճարը: Քրիստոնեությունն ընդունելուց հետո տաճարներն ու դրանց հարստությունները ոչնչացվել են...

5-րդ դարից Հայաստանում եկեղեցիները դարձել են յուրատեսակ զանձատներ, ուր պահվել են նաև մատյաններ ու զանազան ձեռագրեր: Ժամանակակից թանգարանների

նախատիպերը ստեղծվել են միջնադարում: Հովհաննես Դրասխանակերտցին «Պատմություն հայոց» երկում հիշատակում է երեք տիպի թանգարան՝ արքունի, իշխանական տների և եկեղեցական: Էջմիածնի տաճարը, Սանահինի, Հաղպատի վանքերը, Հավուց թառը ունեցել են թանգարան-գանձատներ:

Ներկայումս Հայաստանում կան բազմապիսի թանգարաններ: Դրանցից ամեն մեկն ունի իր խնդիրը, բովանդակությունն ու դերը: Ամեն այցելու ակնկալում է ճշմարիտ տեղեկություններ ստանալ այդտեղից հենց այդ առումով: Սակայն կա մի այլ ոլորտ, որ ոչ մեկը չի կարող բավարարել, դա գրքի և տպագրության ոլորտն է: Հետևապես պետք է ստեղծել նաև դրա թանգարանը:

Հայ ժողովուրդը Գուտենբերգի գյուտից հետո աշխարհում առաջիններից մեկն էր, որ 1512թ. տպագրեց «Ուրբաթագիրքը» և դրան հաջորդեցին ևս էլի գրքեր: Այդ երախտավորը Հակոբ Մեղապարտն էր, որի պատվին Երևանում հուշարձան է կանգնեցվել:

Աշխարհի շատ ժողովուրդներ վաղուց ունեն գրականություն, արվեստի, ռազմական, երկրագիտական, գավառագիտական և այլ թանգարաններ: Գերմանիայում գրքի, տառերի ձուլման, փայտափորագրության, պղնձի թիթեղի վրա փորագրության, տպարանային սարքավորումների թանգարան ստեղծվել է 1884թ.: Առաջին տպագրիչ Գուտենբերգի անվան թանգարան հիմնվել է Մայնց քաղաքում 1900թ., Շվեյցարիայի Բեռն քաղաքում՝ 1900թ., Իտալիայում՝ 1908թ., Հոլանդիայի Ամստերդամում՝ 1914թ., Ֆրանսիայում՝ 1964թ., Ռուսաստանում գործում է ռուս առաջին տպագրիչ Իվան Ֆեոդորովի անվան թանգարան, 1950թ. Մոսկվայում կա մանկական գրքի տուն և նրա մասնաճյուղը՝ Լենինգրադում /այժմ՝ Սանկտ Պետերբուրգ/, ինչպես նաև թանգարաններ են գործում Ռուսաստանի որոշ խոշոր քաղաքներում: Դրանք համարվում են կուլտուր-լուսավորական հիմնարկներ, ուր հավաքվում, պահվում են գրքեր, պոլիգրաֆիական սարքավորումներ:

Հովհ. Թումանյանը գրում է. «Մեր ազգը, որ աշխարհքի ու Արևելքի ամենահին ազգերից մեկն է և ազգարության տեսակետից հանդիսանում է վերին աստիճանի հետաքրքրական մի աղբյուր ուսումնասիրության, և մեր աշխարհքը, որ մի լիքը թանգարան է ամեն տեսակի կենցաղագրական, պատմական, կրոնական, բանահյուսական և այլ մեծարժեք նյութերի, տակավին մնում են խավարի մեջ, իրենց փառքերը ավերակների և հողի տակ, իրենց պարծանքները մոռացության ու անհայտության մեջ: Իրար ետևից, անընդհատ կորչում կամ փչանում են այդ ամենը նոր կյանքի հոսանքների տակ ու նորանոր աղետների մեջ»: *

Այսուհանդերձ հնարավոր է ընթերցողի մոտ տարակուսանք առաջանա, թե էլ ի՞նչ թանգարան, երբ ունենք աշխարհահռչակ Մատենադարան, ազգային գրադարան, բազում թանգարաններ, որոնք իրենց հերթին ունեն արխիվային նյութեր, գրքերի ու պարբերականների հարուստ հավաքածուներ: Մեր ասածը բոլորովին դրանց նման չպետք է լինի: Այստեղ տպագիր նյութերի հետ պետք է ցուցադրել պոլիգրաֆ արդյունաբերական մեքենաները, սարքավորումները, ցինկագրությունը: Այն նախնական ձևերը, որով ստեղծվել-գրվել են մատյանները՝ մելանը, կաղապարը, գրիչը, նույնիսկ այն ժամանակի ինքնահոս գրիչները: Դրանց նմուշները ու մանրամասները նկարագրված են Թեոդիկի, Հր. Աճառյանի, Գ. Լևոնյանի, Ա. Աբրահամյանի և այլոց աշխատություններում:

Հայկական առաջին տպատառերը ստեղծվել են 1509-1511 թվականներին Վենետիկում, իտալացի գրածուկիչների կողմից, 13-15-րդ դարերի ձեռագիր բուրգերի հիման վրա: Այդ տառերի առաջին նմուշները մեզ են հասել Հակոբ Մեղապարտի գրքերի միջոցով:

1960-ական թվականներին, երբ աշխատում էի Խնկո Ապրո անվան հանրապետական մանկական գրադարանում ունեինք ապակետիպ սարք, որը մոմաթղթի վրա բազմացնում էր մեր մեթոդական նյութերը, որոնք ձրի առաքում էինք հանրապետության գրադարաններին: Ապակետիպեր կային նաև նախարարություններում իրենց շրջաբերականները բազմացնելու և տարածելու համար:

Գրավոր խոսքի բնագավառում մտավորականները միշտ եղել են որոնումների մեջ: Գրքի տպագրության գյուտը մեծ հեղաշրջում էր, քանզի մեկ ձեռագիր օրինակից անցում էր կատարվում բազմօրինակության, երբ 1838թ. հայտվագործվեց լուսանկարչությունը, այն դուրս մղեց փորագրությանը՝ թռչնագրությանը, կենդանագրությանը նման ձևով զարդարումներին: Լուսանկարչության շնորհիվ երևան եկավ ցինկագրությունը: Դա նպաստեց գրքի և պարբերականների մեջ նկարների տեղադրմանը: Պոլիգրաֆիայի, հատկապես ցինկագրության բնագավառում հայտնի է նկարիչ Սարգիս Սողոմոնյանի անունը, որը 19-րդ դարի վերջում Անդրկովկասում /Թիֆլիսում/ ու նրա սահմաններից դուրս հայտնի անուն էր: Խորհրդային առաջին տարիներին նրան հրավիրեցին Երևան և բավական մեծ թվով հայ վարպետներ պատրաստեց...

Երբ 1884թ. ԱՄՆ-ում Օ. Մերգենթալերը հայտնագործեց լինոտիպ՝ շարող, ձուլող, քանդող մեքենան: Սա թեթևացրեց ձեռքով, դժվար շարելու պրոցեսը... Այն ժամանակի գրքերում և պարբերականներում գովազդում էին այդ մեքենան և նորանոր պատվիրատուներ ունենում:

1930-ական թվականներին Լենինգրադում լինոտիպ մեքենաների արտադրություն կազմակերպվեց և հազարավոր նման մեքենաներով զինվեցին քաղաքների ու շրջանների տպարանները, իսկ Հայրենական մեծ պատերազմի ժամանակ ամեն մի զորամաս ուներ իր տպարանը և ռազմաճակատում զինվորը հաղորդակից էր լինում երկրում, ռազմաճակատում կատարվող իրադարձություններին:

Չափազանց հետաքրքրական է և այն, որ թանգարանների հետ ուրիշներն ունեն նաև գրքագիտությունն առարկան, որն ուսուցանվում է բուհերում: Մեր համար դժվար է մտածել, որ հին գիր ու գրականություն ունեցող մեր ժողովուրդը՝ ինչպիսին հայերս ենք, գրքագիտության մասին աշխատություն չունի տպագրած: Կարծեք թե այդ տերմինը օգտագործվել է մատենագիտության հետ: Այս առումով մեծ է Ռ. Իշխանյանի ավանդը, բայց դա գրքագիտություն չէ:

Գրքագիտություն տերմինն առաջին անգամ օգտագործել է ավստրիացի մատենագետ, տեսաբան Միխայիլ Դենիսը /1729-1800թթ./: Նա այս առումով գրել է առաջին մենագրությունը: Հայտնի է նաև ֆրանսիացի մատենագետ և գրադարանագետ Էտիեն Գաբրիել Պենոնի անունը /1767-1849թթ./: Ըստ նրա «ԳՐՔԱԳԵՏ» բառը նշանակում է գրքի տպագրության, մատենագիտության, դրանց տեսության մասին գիտություն: Երբ Պետրոս Առաջինի հրամանով 1725թ. ստեղծվեց Ռուսաստանի գիտությունների ակադեմիան,

այստեղ որպես գրքագետ սկսեց աշխատել Անդրեյ Իվանովիչ Բոգդանովը /1696-1766թթ./: Նա առաջինն է կազմել ռուսերեն գրքի ցուցակը: 19-րդ դարի 2-րդ կեսը սկսեցին բուհերում դասավանդել գրքագիտություն և դրա համար կազմակերպեցին ամբիոններ ու պարբերականներ տպագրեցին: Տպագրվել ու վերահրատարակվել է գրքագիտության մասին գրքեր:*

Խորհրդային տարիներին տպագրության-ցինկագրության արտադրամասերը համարվում էին առողջության համար վտանգավոր և աշխատողներին կաթ ու մածուն էր տրվում ամեն օր:

Շուրջ երկու տասնյակ տարի առաջ մամուլում հրապարակվեց գրքի թանգարան ստեղծելու առթիվ Ն. Հայրապետյանի հոդվածը /«Կուլտ-լուս. աշխատանք», 1981. հ. 1/: Դրան շատ մարդիկ արձագանքեցին: Այդ գաղափարը ողջունեցին նաև սփյուռքի մտավորականները, Մյունխենում ապրող և ստեղծագործող Լևոն Սկրտչյան-Քարտաշյանը և ուրիշներ:

5-6 տարի առաջ տեսա, թե ինչպես հսկայական տպարանային մեքենաները, լինոտիպերը, իրենց սարքավորումներով ջարդ ու փշուր անելով դուրս էին թափում և բարձում ինքնաթափ բեռնատարներ: Սրտիս ցավ զգացի: Ակամա հիշեցի տպագրության գործում դրանց հսկայական ներդրումը: Չէ՞ որ դրանք ժամանակին համարվել են մարդկային մտքի նորագույն, առաջադեմ գյուտերը: Սակայն համակարգչային տեխնիկան նրանց հնացած է համարում և դուրս շարտում գործելու ասպարեզից:

Ամեն օր մարդկային միտքը որոնումների մեջ է: Մեր աչքերի առաջ միայն տպագրության գործը հսկայական քայլեր է կատարել, բայց նոր սերունդը այդ մասին քիչ բան գիտե: Հետևապես առավել հիմա Երևանում պետք է ունենալ գրքի, տպագրության թանգարան, ներկա և գալիք սերունդներին ցույց տալու, թե ինչ աստիճանական զարգացում է ապրել գիրը, գրքի տպագրությունը, պոլիգրաֆ արդյունաբերությունը, որպեսզի նրանք հարգանքով լցվեն այն հայ մտավորականների, հրատարակիչների նկատմամբ, ովքեր կյանք են դրել անցյալ, ներկա սերունդներին աշխատանքի փորձը հաղորդելու համար:

ՆԱԻՐԱ ՍԱՐԳՍՅԱՆ

ԳՐՔԱԲՈՒԺՈՒԹՅՈՒՆ

«Գրքերը մեր պատանեկության ուղեցույցներն են և ծերության մխիթարիչները:

Գրքերն աջակցում են միայնակ մարդուն և օգնում են նրան, որ չձանձրանա:

Գրքերի շնորհիվ մենք հեշտ ենք հաղթահարում հանգամանքների և մարդկանց

խարդավանքը, կրքերը և հիասթափությունները, հաշտվում հոգսերի հետ»:

Ջ. Կոլիեր

Տխո՞ւր եք, հուսահա՞տ, անտարբեր ամեն ինչի նկատմամբ: Կյանքը դատարկ է թվում և անիմա՞տ: Ցանկություններն ու երազանքներն անհետացել են: Տառապում եք մեռնակությունից, թեև չեք ուզում տեսնել ոչ մեկին: Ամպամած եղանակն ավելացնում է թախիծը, իսկ պայծառ արևը նյարդայնացնում է: Ոչ մի աշխատանք չի ստացվում: Ինչպես

ռուսական ասացվածքն է ասում՝ «Ամեն ինչ անախորժ է, ամեն ինչ ծանծրանալի է»: Թվում է միակ ելքն աչքերը փակելն է և իրականությունից հեռանալը, չմտածելը, չգգալը, չհիշելը...

Հավանաբար շատերին է ծանոթ այս վիճակը, երբ չեն կարգավորվում հարաբերությունները հարազատների և շրջապատի հետ, երբ հոգնածությունն ու անվերջանալի տագնապը թուլացնում են կամքը, երբ չի ստացվում անկեղծ և սրտանց ծիծաղելը: Սակայն յուրաքանչյուրն ինքն իր համար պետք է ասի՝ ամեն ինչ անցողիկ է: Որոշ ժամանակ անց, այն մութ երանգները, որոնցով լցված էր թվում կյանքը, կլուսավորվեն: Մի՞թե շատերի համար իրենց առաջին սերը չի մնացել որպես հաճելի հիշողություն, նույնիսկ եթե այն երջանիկ չի եղել: Մի՞թե հպարտությամբ չէք լցվել այն մտքից, որ հաղթահարել եք շատ արգելքներ և դժվարություններ, երբ դրանք արդեն հեռվում են մնացել: Հիշենք Ա. Ս. Պուշկինի բանաստեղծությունը՝

*Թե կյանքը քեզ խաբի մի օր,
Մի գայրանա, մի վշտացիր,
Սև օրվա հետ դու հաշտ կացիր,
Կգա և օրը բախտավոր:
Գալիքի մեջ է սիրտն ապրում,
Ներկա օրը վշտով է լի,
Ողջը կանցնի, իսկ ինչն անցնում՝
Արդեն դառնում է սիրելի:*

Կյանքը կարող է ընթանալ բուրրովին այլ կերպ, եթե բացահայտեք նոր հորիզոններ, եթե կարողանաք հասկանալ ձեր հուզական վիճակը, ճանաչեք և օգնեք ինքներդ ձեզ: Այդ բացահայտումը որևէ մեկին գուցե հիշեցնի Սյունհաուզենին, երբ նա պատմում էր, թե ինչպես է ինքն իր մագերից բռնած իրեն դուրս քաշել ճահճից կամ ինչպես է Լուսին մագլցել բակլայի երկար ցողունով: Գիրքը կարող է լինել ամենալավ բժիշկը, մասնավորապես հեքիաթներն ու պոեզիան, իսկ պոետները կարող են լինել և՛ մխիթարողներ, և՛ ուղեկիցներ, և՛ խորհրդատուներ, կօգնեն հաղթահարելու դժվարությունները, որոնցով լի է կյանքը: Գրքերի միջոցով տրամադրության բարձրացումը և հուզական վիճակների բուժումը նոր չէ, այն գոյություն է ունեցել հին ժամանակներում, երբ Հունաստանում բացվեցին առաջին գրադարանները: Գրքերը կարող են ներգործել մարդկանց մտածողության, բնավորության վրա, ձևավորել նրանց վարքագիծը, օգնել պորբլեմների լուծման ժամանակ:

Բիբլիոթեքապիան թարգմանվում է բուժում գրքի միջոցով՝ գրքաբուժություն: Այն առաջացել է ավելի վաղ, քան ընդունվել է պաշտոնապես: Օրինակները շատ են՝ «1001 գիշեր»-ի հեքիաթներից մեկում պալատական բժիշկը խորհուրդ էր տալիս վախից ու ծանր հիվանդությունից տառապող մարդուն գիրք կարդալ և այդպես էր բուժում նրան: Էրազմ Ռոտերդամցին առաջարկում էր կարդալ ծիծաղելի գրքեր, իսկ Արիստոֆանի կարծիքով հանցագործները կուղղվեն, եթե կարդան իր կատակերգությունները: Ա. Պուշկինը գտնում էր, որ խանգարող մռայլ մտքերից ազատվելու համար անհրաժեշտ է բացել շամպայնի շիշը և վերընթերցել Բոմարշեի «Ֆիգարոյի ամուսնությունը»: Օ՛րենրին «Վերջին տերև»-ի մեջ առաջարկում էր յուրաքանչյուր հիվանդությունից ազատվելու ամենալավ դեղամիջոցը՝ հույսը:

Որքան էլ տարօրինակ թվա, երբեմն ավելի հեշտ է գաղտնիքներն ու տանջող մտքերը վստահել ոչ թե հարազատներից որևէ մեկին, այլ՝ անծանոթ մարդու: Այդ մասին լավ գիտեին անցյալի գրողները, որովհետև խոստովանանքը առաջին հանդիպած մարդուն՝ նրանց ստեղծագործությունների մեջ հաճախ է օգտագործվում: Լև Տոլստոյի «Կրեյցերյան սոնատ»-ի հերոսը պատմում է իր կնոջ սպանության մասին զնացքում հանդիպած անծանոթ մարդուն: Անտոն Չեխովի «Վիշտը» պատմվածքում մեռնում է կառապանի որդին: Նա ցանկանում է որևէ մեկի հետ կիսել իր վիշտը, բայց ոչ ոք չի ուզում լսել նրան, և կառապանն իր վիշտը պատմում է ծիծաղ, այդպես սփոփվելով:

Գրքաբուժությունը որպես գիտական հասկացություն առաջարկվել է ԱՄՆ հիվանդանոցային գրադարանների միության կողմից: 1916թ. միության համագումարը քննարկեց հիվանդների ընթերցողական պատվերների կատարման ընթացքը և այն անվանեց գրքաբուժություն: Գրքաբուժության նպատակներն են՝ օգնել մարդուն ինքնավերլուծությամբ բարելավելու վարքագիծը, հասնելու հոգեկան հասունության, կողմնորոշվելու հետաքրքրությունների և ձգտումների մեջ, թեթևացնելու սթրեսի հետևանքները, անհատին ցույց տալով, որ միայն նա չի առնչվել տվյալ պորբլեմի հետ, որ կան երևույթի հաղթահարման մեկից ավելի լուծումներ:

Գրքաբուժությունը սոսկ գրքի պատահական երաշխավորություն չի, այլ գործողությունների մտածված կուրս, որը պահանջում է մանրակրկիտ ծրագրավորում: Գրքաբուժներ կարող են լինել հոգեբանները, գրադարանավարները, ինչպես նաև ծնողները և ընկերները: Գրքաբուժների մեջ մեծ տոկոսն են կազմում նախադպրոցական

հաստատությունների և դպրոցների մանկավարժները. օրինակ, ԱՄՆ-ում 11%, Ֆինլանդիայում՝ 15% և այլն:

Գրքերի հեղինակները ևս համարվում են գրքաբուժներ, որոնց դերը կարող է լինել ինչպես գիտակցված, այնպես էլ ոչ գիտակցված: Գիտակցված, երբ նախապես հաշվի է առնվում ընթերցողների լսարանը, երկրորդ դեպքում, երբ գրքի բուժական էֆեկտը հաշվի չի առնվում, բայց նրա ստեղծագործություններն ընդգրկվում են գրքաբուժության շրջանակներում առաջարկվող գրականության ցանկերում: Կարողալու ընթացքում հեղինակն ու ընթերցողը դառնում են ընկերներ և գործընկերներ:

Կարևոր նշանակություն ունեն գրքի ձևավորումը և նկարագարողումը, որոնք արագացնում են բուժման արդյունավետությունը: Անկախ մասնագիտությունից, գրքաբուժը պետք է լինի գրագետ, նրբանկատ, բարեհամբույր, ընդունակ լինի կարեկցելու դիմացինին, առանց հրամայելու և բարոյախոսելու: Բուժման ընթացքում կիրառվում են ինչպես մասնագիտական-բժշկական գրքեր՝ տվյալ հիվանդի ախտորոշմանը վերաբերող, այնպես էլ զեղարվեստական: Գրքաբուժության առավելությունն այն է, որ քիչ ժամանակ է պահանջում: Այս մեթոդն արդեն ապացուցել է իր արդյունավետությունն Ռուսաստանում, ԱՄՆ-ում, Ֆինլանդիայում, Ֆրանսիայում, Գերմանիայում և այլ երկրներում, որտեղ դպրոցական, բուհական, մանկական գրադարանային կենտրոններում անցկացվում են անհատական և խմբակային գրքաբուժության փորձարկումներ:

Գրքերը ներգործում են աստիճանաբար, աննկատ և չեն ձանձրացնում: Կարողալով առաջարկված գիրքը, ընթերցողը կհայտնաբերի, որ միայն ինքը չի, ում շփոթմունք, վախ և նույնիսկ նողկանք է առաջացրել մարդկանց վարքագիծը: Կհասկանա, որ միայն ինքը չի այդ հոգեվիճակում և դա կմխիթարի իրեն:

Փոխադարձ օգնություն՝ դա հիանալի է: Եվ դա միայն գիտելիքների մեջ չէ: Այն նաև պոեզիայի մեջ է: Ինչպես գրել է Իոսիֆ Բրոդսկին՝ «Բոլոր արվեստներից պոեզիան է զգացմունքների դաստիարակության ամենալավ միջոցը», իսկ Ռ. Էմերսոնը կարծում էր՝ «Միայն այն է պոեզիան, որն ինձ դարձնում է ավելի մաքուր և քաջ»:

Պոետների անկեղծ և ճշմարիտ տողերի մեջ բացակայում է ցուցադրական բարյացակամությունը, արհեստական վերաբերմունքը: Պոեզիան կարող է ներգործել, ինչպես ֆլեյտայի քնքուշ ձայնը, որն ընդունակ է ստիպել արտասվելու նույնիսկ ամենասառնասիրտ մարդուն: Պոեզիան բառերի երաժշտությունն է...

Ամեն բանաստեղծություն իր ենթատեքստն ունի: Դա հեղինակի կյանքի հետ կապված միջադեպերն են, որոնք առաջացրել են այս կամ այն հուզական վիճակը: Այս վերջինն էլ իր դրսևորումն է գտնում պոետական խոսքի միջոցով: Հիշենք Սիլվա Կապուտիկյանի խոսքը՝

*Թե որ դու գայի՜ր, թե գայիր անգին,
Թե ամեն շշուկ ինձ կանչ չթվար.
Սիրտս չդողա՜ր ամեն մի զանգից,
Ու թուպեն չանցներ դարի պես դժվար.-
Թե որ չփխրեր սիրտս կարոտից
Ու բամբակի պես չփափկեր նկուն,-
Թե-թե չէ՜ր ձգվի տողը իմ սրտից,
Չէր հյուսվի սիրո այս երգը քնքուշ:
Ու հետո, հետո մի տրտում աղջիկ
Երգերիս գրքին լուռ չէ՜ր կռանա,
Դանդաղ չէր սրբի արցունքը աչքից,
Ու ամպած հոգին չէ՜ր թեթևանա:
Այս, թեթևություն՝ իջած լավ երգից,
Ինչ ծա՛նր ես նստում պոետի վրա:*

Վերջերս մեծ տարածում է գտել նաև «հեքիաթաբուժությունը», որպես գործնական հոգեբանության ինքնուրույն ուղղություն: Սա հատկապես կարող է բուժիչ ներգործություն ունենալ երեխաների հոգեկան աշխարհի վրա՝ հետաքրքիր գրքերով և ընտանեկան ջերմության մթնոլորտով, որտեղ միշտ բարի խորհուրդ են տալիս և օգնում են ըմբռնել կարդացածը: «Դեղատուն հոգու համար» - այսպես են բնորոշել գրադարանի նշանակությունը հին եգիպտացիները:

Սիրված գրքերի վերընթերցումը ևս հանդիսանում է գրքաբուժության ձևերից մեկը, որի նպատակը կոնկրետ խորհուրդ ստանալու ակնկալիքն է: Ընթերցողն այս կամ այն գիրքը նորից կարդում է տարիներ անց, երբ կյանքի ինչ որ իրավիճակ ցանկություն է արթնացնում պարզելու կամ վերհիշելու, թե տվյալ պարագայում ինչպես են վարվել սիրած գրքի հերոսները և հեղինակը: Ու՛մ անտարբեր կթողնեն Հրանտ Մաթևոսյանի խոսքերը՝ «Մարդ չպիտի էնքան քաղցր լինի՝ որ կուլ տան, չպիտի էնքան դառը լինի՝ որ քթեն», «Ասում ես խիղճ, բայց խիղճը գիտե՞ս երբ է գեղեցիկ - երբ գազանի մեջ է: Քոնը խիղճ չի, խեղճություն է» կամ Ի. Ս. Տուրգենևի «խորհուրդները»՝ «Ուզու՞մ ես լինել համգիստ: Շփվիր մարդկանց հետ, բայց ապրիր մենակ, ոչինչ մի նախածեռնիր և ոչինչ մի ափսոսա:

Ուզում ես լինել երջանիկ: Սովորիր նախ տառապել», և Փոքրիկ իշխանի «մտորումները»՝ «Հարկավոր է փնտրել սրտով», «Մի՛ մոռացիր, որ դու հավիտյան պատասխանատու ես նրա համար, ում ընտելացրել ես», «Եթե դու ամեն անգամ տարբեր ժամի գաս, ես չեմ իմանա, թե որ ժամի համար նախապատրաստեմ իմ սիրտը»:

Պետք է կարողանալ ճիշտ կարդալ: Էմիլ Կրոտսկին ասում էր՝ «Գրականությունը այն է, երբ ընթերցողը նույնքան տաղանդավոր է, որքան գրողը»: Հարկավոր է լինել ակտիվ ընթերցող. ուշադիր կարդալ կարողանալն արվեստ է: Հարկավոր է ընկալել կարդացածը, այն վերարտադրել գիտակցության մեջ, զգալ բանաստեղծության երաժշտությունը, ինպես Արիստոտելն է գրել՝ «Երբ մենք խելքով ենք ըմբռնում մեղեդին և ռիթմը, մեր տրամադրությունը փոխվում է»:

Գուցե ինչ որ մեկին թվա, թե գրքաբուժությունը շատ անլուրջ է իր ապրումների ու դժվարությունների համեմատ: Մի՞թե հնարավոր է այդքան պարզ մեթոդով հաղթահարել պրոբլեմները: Այո, իսկապես, իրական կյանքում ամեն ինչ շատ ավելի խորն է ու բարդ, և յուրաքանչյուրը փնտրում է իր ուղին: Ընտրեք այն, որն ավելի հոգեհարազատ է ձեզ: Ամեն դեպքում կարելի է փորձել, որովհետև ինչպես չինական ասացվածքն է ասում՝ «Մեկ քայլը՝ դա սկիզբն է մեծ ճանապարհի»: Եվ կյանքը կդադարի լինել տխուր ու ծանծաղի և ձեր բոլոր գործերը հաջող կընթանան: Դարձյալ հիշե՛ք Ա. Պուշկինին՝ «Օ՛, ոչ, կյանքն ինձ չի ծանծաղացրել: Ես սիրում եմ ապրել, ես ուզում եմ ապրել...»:

ԻՖԼԱ: ՅՈՒՆԵՍԿՕ-ն 2001թ. աշխարհի քաղաքներից մեկը հռչակում է *Աշխարհի գրքային մայրաքաղաք*: Առաջին մայրաքաղաքը եղել է Մադրիդը (Իսպանիա), այս տարի այդ տիտղոսը կրում է Ալեքսանդրիան (Եգիպտոս), իսկ հաջորդ՝ 2003 թվականին մայրաքաղաքը կլինի Նոր Դելին (Հնդկաստան): Ներկայումս մրցույթ է հայտարարված 2004թ. աշխարհի գրքային մայրաքաղաքի համար:

Մրցույթ է անցկացվելու նաև 2008թ. ԻՖԼԱ տարեկան ժողովի անցկացման տեղը որոշելու համար: Միութունը ստացել է թեկնածության առաջադրման կարգը և պայմանները: Հիշեցնում եմ, որ առաջիկա տարիներին ԻՖԼԱ ժողովները գումարվելու են՝ 2003թ. Բեռլինում (Գերմանիա), 2004թ. Բուենոս Այրեսում (Արգենտինա), 2005թ. Օսլոյում (Նորվեգիա), 2006թ. Սեուլում (Հարավային Կորեա), 2007թ. Դուբայում (Հարավ Աֆրիկյան Հանրապետություն):

Լույս է տեսել «Հանրային գրադարանի ծառայությունների զարգացման ԻՖԼԱ/ՅՈՒՆԵՍԿՕ հանձնարարականների» ձեռնարկը: Այն տպագրության է պատրաստել ԻՖԼԱ հանրային գրադարանների հանձնաժողովի մասնագետների աշխատանքային խումբը, բրիտանացի գրադարանագետ Ֆիլիպ Գիլի ղեկավարությամբ: Ներկա հրատարակությունը գալիս է փոխարինելու 1986 թ. հաստատված ԻՖԼԱ հանձնարարականներին: Նրա կազմման սկզբունքները քննարկվել են ՅՈՒՆԵՍԿՕ-ի հովանու ներքո 1998 թ. Նորդվիկում, Հոլանդիա կազմակերպված միջազգային սեմինարի ժամանակ, որին ներկա էին 21 երկրների 22 պատվիրակներ: Հետագայում հանձնարարականների նախագիծը քննարկվել է ԻՖԼԱ Անստերդամի, Բանգկոկի և Երուսաղեմի կոնֆերանսների ընթացքում:

Հանձնարարականների հիմքում ընկած են 1994 թ. ԻՖԼԱ/ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից ընդունված «Հանրային գրադարանի հռչակագրի» դրույթները: Գիրքը բաղկացած է վեց բաժնից և հավելվածից: Բաժիններն են.

- Հանրային գրադարանի դերը և նպատակը,
- Իրավական և ֆինանսական կառուցվածքը,
- Օգտվողների պահանջների կատարումը,
- Հավաքածուների զարգացումը,
- Մարդկային պաշարները,
- Հանրային գրադարանների ղեկավարումը և մարկետինգ

Հավելվածի կարգով բերված է չորս փաստաթուղթ: Նույն ԻՖԼԱ/ՅՈՒՆԵՍԿՕ «Հանրային գրադարանի հռչակագիրը», 1998թ. Ֆիննական գրադարանային օրենքը, Օնտարիոյի, Կանադա և Բարսելոնի, Իսպանիա գրադարանային շենքերի ստանդարտները և այլն:

Գիրքն արդեն իսկ թարգմանվել է աշխարհի մոտ երեսուն լեզուներով: Այն մատչելի է, այդ թվում նաև ռուսերեն, ԻՖԼԱ ինտերնետային էջում, տես Հրատարակությունը պատրաստող աշխատանքային խմբի վեց անդամներից մեկը ՀԳՄ նախագահ Ն. Հայրապետյանն է:

Միության գրասենյակում ստացվել են ԻՖԼԱ պրոֆեսիոնալ հրատարակությունների հերթական հատորները: Դրանք են՝

The Public library service: IFLA/UNESCO guidelines for development / [International Federation of Library Associations and Institutions]. Ed. For the Section of Public Libraries by Philip Gill et. Al. – Munchen: Saur, 2001, XVI, 116 p. 21 cm (IFLA Publications; 97)

Continuing professional education for the information society. The Fifth World Conference on Continuing Professional Education for the Library and Information Science Professions. Ed. By Patricia Layzell Ward. / [International Federation of Library Associations and Institutions]. – Munchen: Saur, 2002, 263 p. (IFLA Publications; 100)

The Ethics of librarianship: an international survey / [International Federation of Library Associations and Institutions]. Ed. By Robert W. Vaagan. With an introd. By Alex Byrne. – Munchen: Saur, 2002, 344 p. (IFLA Publications; 101)

Libraries in the Information Society / [International Federation of Library Associations and Institutions]. Ed. By Tatiana V. Ershova and Yuri E. Hohlov. – Munchen: Saur, 2002, 172 p. (IFLA Publications; 102)

Managing the Preservation of Periodicals and Newspapers / Proceedings of the IFLA Symposium, Bibliotheque nationale de France Paris, 21-24 August, 2000 [International Federation of Library Associations and Institutions]. – Munchen: Saur, 2002, 175 p. (IFLA Publications; 103)

ԿՐԹԱԿԱՆ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՆՆԱ

Գրադարանի փոխտնօրեն

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՀԱՄԱԻԿ

Գլխավոր գրադարանավար

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

ԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԸ

Երևանի պետական համալսարանի գիտական գրադարանը Հայաստանի գիտակրթական-մշակութային կարևորագույն կենտրոններից է, որը հսկայական ներդրում ունի գիտության և տնտեսության տարբեր բնագավառների բարձրորակ մասնագետներ պատրաստելու գործում: Այն եղել և մնում է հանրապետության բուհական գրադարանների առաջատարը:

Գրադարանը զբաղեցնում է 12 հազար քառ. մ տարածք, ուր գործում են 1100 նստատեղով հարմարավետ ու լուսավոր 9 ընթերցասրահներն ու գիտկաթինետները, գրադարանային գործընթացն ապահովող 12 բաժինները, տարողունակ գրապահոցը, տեղեկատվությանն ու ավտոմատացմանը ծառայող 58 համակարգիչները, կազմատունը, տպագրական ու բազմացման աշխատանասերը:

Համալսարանական 10500 և արտահամալսարանական 2000 ընթերցողների համար տեղեկատվության հարուստ աղբյուր է գրադարանի շուրջ 2 միլիոնի հասնող գրքային ունեցվածքը՝ գիտական, ուսումնական, քաղաքական, գեղարվեստական գրականության բազմալեզու ֆոնդերով, որոնք պարունակում են 1 մլն 673.462 միավոր գիրք (ռուսերեն՝ 1348400, հայերեն՝ 256000, այլալեզու՝ 86200), 251019 ամսագիր, 4000 թերթերի հավաքածու, 3000 ատենախոսություն, 19494 հնատիպ և հազվագյուտ գրականություն (33-ը՝ ձեռագրի պատճեն), CD-ROM և DVD պնակիտների (համակարգչային սկավառակներ) հավաքածու: Գրականության տացքը 856 հազար է, ընթերցողների տարեկան հաճախումները՝ 695 հազար:

Համալսարանի գրադարանն ունի առաջնահերթ խնդիր, այն է՝ սպառիչ տեղեկատվությամբ օժանդակել կրթական գործընթացին: Այս իմաստով կարևորվում է գրքային ֆոնդերի՝ ուսումնական բազմաբնույթ ու մեծաքանակ գրականությամբ ապահովումը: Գրադարանի 700 հազար միավոր ուսումնական գրականությունը լիովին բավարարում է գրքապահովվածության սահմանված պահանջը:

Ընթերցողների գիտական համակազմին զգալի ծառայություն է մատուցում նաև գրադարանի գիտական գրականությունը, որից 867 հազարը գիրք է, 259 հազարը՝ ամսագիր: Առանձնապես մեծ է ամսագրերի, հանդեսների ու պարբերականների՝ որպես թարմ տեղեկատուների պահանջարկը: Գիտական տեղեկատվություն է տալիս նաև ՄԱԿ-ից, ԵԱՀԿ-ից և Միջազգային դրամական ֆոնդից ստացված գրականությունը:

Կազմավորվելով համալսարանի հետ զրեթե միաժամանակ (1920 թ. դեկտ. 28) և անցնելով ինքնահաստատման ու կատարելագործման դժվարին ուղի, գիտական գրադարանը դարձել է մայր բուհի կարևորագույն օղակներից մեկը, և այսօր անհնար է պատկերացնել բուհական գործունեությունը՝ առանց գրական-տեղեկատվական այդ ամուր հենարանի:

Պատմությունն արձանագրել է բազմաթիվ երախտավորների անուններ, որոնց ջանքերով ու նվիրատվություններով ձևավորվել է համալսարանական գրոց օջախը՝ Յուրի Ղանբարյան (1-ին ռեկտոր), Հակոբ Մամանդյան (նորաստեղծ գրադարանի կառավարիչ), Պողոս Մակինցյան (Հայաստանի լուսժողկոմ), Գաբրիել Ռոտինյան (1-ին գրադարանավար), Վահան Տերյան, Գրիգոր Չուբարյան, Ալեքսանդր Ծատուրյան, Եվանգյուլյաններ, Բերբերյաններ և այլոք: Նրանց, ինչպես նաև հետագա 8 տասնամյակներում ուրիշ շատ նվիրյալների և պետական հոգածության շնորհիվ նախկին փոքրիկ գրատունն այսօր վերածել է բարձրակարգ գիտական գրադարանի:

Խորհրդային շրջանում համալսարանի գրադարանը ևս, ինչպես նման մյուս բոլոր կրթամշակութային հիմնարկները, ունեցել է իր բնականոն զարգացումը, որի ընթացքը կառավարվում էր կենտրոնացված համակարգի կատարելագործված, բայց և կադապարային մեթոդներով: Ռեսուրս, կարծում ենք, ավելորդ է անդրադառնալ այդ տարիների ձեռքբերումներին:

Համալսարանական գրադարանի առաջանցիկ զարգացման հիմքերը դրվեցին 1990-ական թվականներից: Սկզբնական շրջանում, խորհրդային հզոր կառույցի փլուզումը և

նորանկախ Հայաստանում ստեղծված սոցիալ-քաղաքական ճգնաժամը, բնականաբար բացասաբար անդրադարձան նաև գրադարանային համակարգի վրա՝ առաջադրելով մի շարք խնդիրներ, ինչպիսիք էին՝ ֆինանսավորման սահմանափակումը, պահանջարկ ունեցող գրականության պակասը, եղած հրատարակությունների մասին համակարգված տեղեկատվության բացակայությունը կամ դրանց շուկայական բարձր գները և այլն: Սակայն, նոր կացութաձևը առաջադրեց նաև հնարավորություններ՝ դուրս գալու տարիներ շարունակ պարտադրված կադապրից և որոնելու զարգացման առավել արդիական ուղիներ: Այդ ճանապարհին անհրաժեշտ էր լուծել վերակառուցողական բնույթի մի շարք այնպիսի խնդիրներ, ինչպիսիք էին՝ ֆոնդերի շարունակական համալրումը ծրագրային և գիտական մեծ պահանջարկ ունեցող գրականությամբ: Նյութատեխնիկական վերազինումը՝ միջազգային չափանիշներով, գրադարանագիտության մեջ նոր մեթոդների կիրառումը և գիտատեխնիկական ներուժի ներդրումը, որակյալ և բանիմաց գրադարանավարների պատրաստումն ու սպասարկման կուլտուրայի բարձրացումը, համագործակցային բազմաբնույթ կապերի հաստատումը աշխարհի խոշոր գրադարանների, արտերկրի և հայրենական տարբեր կազմակերպությունների, գերատեսչությունների և անհատ ձեռներեցների հետ. գրադարանի շենքային պայմանների բարելավումը և այլն:

Վերը թվարկված ծրագրերի իրականացման առանցքը դարձավ գրադարանի նոր շենքի կառուցումը, որի իրականացման մեջ իրենց անուրանալի ներդրումն ունեն էՊՀ ռեկտոր ակադեմիկոս Ռ. Մարտիրոսյանն ու գրադարանի տնօրեն Վ. Ասլանյանը: Համալիրն իր կառուցողական կատարելությամբ եկավ լրացնելու մայր կրթօջախի ճարտարապետական նկարագիրը: 1994 թ. հոկտ. 12-ին, համալսարանի հիմնադրման 75-ամյա հոբելյանի հանդիսության օրը, մեծ շուքով ընթերցողին հանձնվեց լուսավոր ու հարմարավետ գրադարանային նորակառույցը:

Այդ տարիների հիշարժան իրադարձություններից էր նաև շվեյցարահայ բարերար Տիգրան Իզմիրյանի հայրենամարտի նախաձեռնությունը՝ 1 մլն ԱՄՆ դոլարի նվիրատվությունը էՊՀ գրադարանին (1995): Ի պատիվ սիյունքահայ գործչի 1997 հոկտեմբերի 7-ին համալսարանի գրադարանն անվանակոչվեց բարերարի ծնողների՝ Սարգիս և Մարի Իզմիրյանների անվամբ:

Շենքային հրաշալի պայմանները, ձեռք բերված կահույքն ու սարքավորումները արձատապես փոխեցին գրադարանի կյանքը՝ կայուն նախապայմաններ ստեղծելով նրա զարգացման համար:

Նախ կատարվեցին կառուցվածքային բնույթի մեծածավալ փոփոխություններ: Համալսարանի մասնաշենքերի բոլոր ճյուղային ընթերցասրահները կենտրոնացվեցին նորակառույցում՝ վերակազմավորվելով ըստ մասնագիտության: Երկհարկանի տարողունակ գրապահոցի առկայությունը հնարավոր դարձրեց ֆոնդերի վերաբաշխումը. առանձնացվեց ուսումնական գրականության ֆոնդը: Ընթերցասրահներում, գիտական կաբինետներում և աբոնեմենտի բաժնում հարստացան առձեռն ֆոնդերը:

Գրադարանային այլ պիտույքների թվում ձեռք բերվեցին «Պենտիում» դասի համակարգիչներ: Տեխնիկական միջոցների առկայությունն արդեն առաջին քայլն էր գրադարանային գործունեության հիմնովին վերափոխման, աշխատատար գործընթացների արդիականացման ճանապարհին: Ստեղծվեց ավտոմատացման և տեղեկատվության բաժին (1996), որն անմիջապես ձեռնամուխ եղավ «թվային գրադարանի» կայացման դժվարին, բայց և խոստումնաշատ գործին: Կազմվեց գրադարանային գործընթացների լիակատար ավտոմատացման երկարամյա ծրագիր՝ հետևյալ փուլերով.

- գրքային ունեցվածքի համակարգչային մուտքագրում.
- ընթերցողների հաշվառում և վերահսկում.
- էլեկտրոնային քարտարանների ստեղծում.
- համակարգչի օգնությամբ գրքատացքի կազմակերպում.
- էլեկտրոնային ՄԳԱ կապի իրականացում.
- համալսարանի այլ ստորաբաժանումներից էլեկտրոնային քարտարաններ մուտքի ապահովում.
- էլեկտրոնային քարտարանների տեղադրում ինտերնետում՝ հանրային դիտման և որոնումների համար:

Առաջին փուլում նախատեսված էր մուտքագրել գրքային ունեցվածքի տվյալները՝ միաժամանակ ստեղծելով էլեկտրոնային քարտարաններ: Այդ նպատակով համագործակցային կապեր հաստատվեցին մի շարք կազմակերպությունների հետ (Electronic Online Systems International - EOSi, ARZO, Կալիֆոռնիայի համալսարան և այլն): Հանրապետությունում լինելով առաջինը, որը ձեռնամուխ էր լինում մասնատիպ մեծածավալ և բարդ աշխատանքի, գրադարանի աշխատակազմը հարկադրված էր իր նա-

խածեռնությամբ լուծել մի շարք հարցեր՝ կապված համակարգչային լեզվական համակարգի, ծրագրային և տեխնիկական միջոցների, մատենագիտական ֆորմատների ընտրության հետ: Նիշերի կողավորման ՅՈՒՆԻԿՈՂ համակարգի սկզբունքով ընտրվեց հայերեն տառերի համակարգչային տարբերակը, որը և հնարավորություն տվեց սկսել գրականության էլեկտրոնային քարտագրումը: Միաժամանակ ձեռնարկվեց գրադարանի ավտոմատացման համար կարևոր նշանակություն ունեցող մի աշխատանք՝ գրքային ֆոնդի վերահամարակալումը: Վեցանիշ հին գույքահամարները փոխարինվեցին նոր՝ տասանիշ գծակողային մեքենաընթեռնելի գույքահամարներով, որոնց առաջին երկու միջը ապահովում է գրականության միջազգային չափանիշներով ընդունված ֆորմատային վերադասավորումը: Գույքահամարների համակարգչային մուտքն ավտոմատացնելու նպատակով համակարգիչներին միացվեցին պատկերամուտներ¹: Վերջիններիս կիրառումը մեծապես կբարելավի մուտքագրման և տացքի գործընթացների արագությունը՝ բարձրացնելով սպասարկման արդյունավետությունը: Մուտքագրման փուլը պահանջում էր մասնագիտական հատուկ պատրաստվածություն: այդ նպատակով կազմակերպվեցին գրադարանավարների երկամսյա դասընթացներ:

Մուտքագրման նախկին «Թինլիբ» ծրագիրը փոխարինվեց առավել ժամանակակից ու արդյունավետ համակարգով՝ Իսրայելի Էքսլիբրիս կազմակերպության «Ալեֆ» ծրագրով, որի գործարկմանն օգնեց Ռուսաստանի ազգային գրադարանի փորձը: Այսօր արդեն «թվային գրադարան» է մուտքագրվել 428 հազար միավոր ուսումնական գրականություն: Համակարգիչների տեղադրումը բաժիններում և ընթերցասրահներում հնարավորություն տվեց մուտքագրման հետ միաժամանակ մեքենայական տեղեկատվության առաջին փորձերն անելու:

2001 թ. վերջին, Գիտության և առաջատար տեխնոլոգիաների ազգային (ԳԱՏԱ) հիմնադրամի դրամաշնորհով համալսարանի գրադարանում գործարկվեց «Էլեկտրոնային գիտական հոդվածներ հայաստանյան գիտնականներին» ծրագիրը, որի իրականացման գործընթացին մեծապես նպաստեցին կապերը Կալիֆոռնիայի, Ֆրեզնոյի համալսարանների, գրադարանների, Ֆլորիդայի Ատլանտյան համալսարանական գրադարանների ցանցի և Եվրոպական «Ձուբիտա» էլեկտրոնային գիտական հոդվածների կենտրոնի հետ: Նրանցից ստացվող էլեկտրոնային հոդվածները գրադարանի աշխատակիցների միջոցով սպասարկվում են հանրապետության գիտնականներին: Այս ծրագրի գործարկման համար ԳԱՏԱ հիմնադրամը և Ֆլորիդայի Ատլանտիկ համալսարանը գրադարանին նվիրատվեցին տեխնիկական համապատասխան սարքավորումներ:

ԲՀԻՕՀՀՄ-ի օժանդակությամբ գրադարանը սկսեց օգտվել նաև «Էքսկո» էլեկտրոնային հրատարակությունների շտեմարաններից:

Վերջին տարում գրադարանի նյութատեխնիկական բազան հարստացավ թվայնացմանն անհրաժեշտ այլ համակարգիչներով ու սարքավորումներով: ԲՀԻՕՀՀՄ-ի դրամաշնորհով ձեռք բերվեցին «ՍԱՆ-450» կայանը և «Պենտիում-4» դասի հինգ համակարգիչ: «Իզմիրյան» հիմնադրամի օժանդակությամբ ավտոմատացման բաժնում մուտքագրմանը տրամադրվեց նույն դասի և 10 համակարգիչ:

Վերափոխումներին զուգընթաց աշխուժացավ նաև համալրման գործընթացը: Այդ նպատակով գործի դրվեցին բոլոր հնարավոր միջոցները՝ պետական հատկացումներ, գրքափոխանակություն, դրամաշնորհներ, նվիրատվություններ և այլն: Թեև ձեռք բերվող գրականության քանակական ցուցանիշները (տարեկան 10-12 հազար միավոր) դեռևս զիջում էին խորհրդային շրջանի տվյալներին, սակայն նրա պիտանիությունն ու արդիականությունը ծածկում էր այդ բացը: Գրադարանի ֆոնդերը համալրվեցին ուսումնական նոր ծրագրերին պահանջվող գրականությամբ՝ տնտեսագիտության, իրավաբանության, գիտության և տեխնիկայի այլ բնագավառներին վերաբերող նոր գրքերով, ամսագրերով ու հանդեսներով: Գործնական կապեր հաստատվեցին աշխարհի այնպիսի խոշոր գրադարանների ու կազմակերպությունների հետ, ինչպիսիք են՝ Կոլումբիայի, Բերկլիի, Չիկագոյի (ԱՄՆ), Ռոստոկի, Դրեզդենի (Գերմանիա) համալսարանների, ԱՄՆ Կոնգրեսի, Անգլիայի Բրիտանական, Ֆրանսիայի, Իտալիայի, Նիդեռլանդների և ուրիշ երկրների գրադարանները, ՄԱԿ-ը ՅՈՒՆԵՍԿՕ-ն, ՅՈՒՆԵՍԿՕ-ը, Բոննի գիտական 2 կազմակերպություններ և այլն:

Առանձնապես արդյունավետ էր Ռոստոկի համալսարանի գրադարանի հետ ունեցած համատեղ գործունեությունը, որը գերմանական կառավարության մարդասիրական նախաձեռնությունն էր. Բեռլինի գրադարանային ինստիտուտի (DBI) աջակցության ծրագրով (այն է՝ խթանել Արևելյան Եվրոպայի երկրների և ԽՍՀՄ նախկին հանրապետությունների մի շարք գրադարանների գործունեությունը) ԵՊՀ գրադարանին

¹ Scanner – տնասծրիչ՝ գծակողն ընթերցող օպտիկական սարք

տրամադրվեց 150 հազար մարկի դրամական օժանդակություն՝ եռամյա ժամկետում (1996-1999) անհրաժեշտ նյութերի ձեռք բերման, ինչպես նաև Ռոստոկի համալսարանի հետ աշխատանքային փոխայցելություններ կազմակերպելու նպատակով: Նշված ծրագրի իրականացման շնորհիվ՝ ԵՊՀ գրադարանը ձեռք բերեց ինչպես զարգացած երկրների գրադարանային աշխատանքի փորձ, այնպես էլ մեծ քանակությամբ գիտական ամսագրեր ու գրքեր, գրադարանային գործին անհրաժեշտ նյութեր ու սարքավորումներ:

Մասնակիորեն վերականգնվեցին նախկին խորհրդային երկրների հետ ունեցած կապերը. ռուսալեզու գրականության ֆոնդը շարունակեց համալրվել Ռուսաստանից, ՌԿրահիմայից ստացվող գրականությամբ: Ընդլայնված գրափոխանակման արդյունքում ԵՊՀ գրադարանը արտասահմանի և ԱՊՀ 25 երկրների 100-ից ավելի կազմակերպություններից ձեռք բերեց ռուսերեն և այլալեզու գրականության անհրաժեշտ և արժեքավոր հրատարակություններ:

Համալրման գործընթացում դրական տեղաշարժ մտցրեց նաև նվիրատվությունը: Այդ շնորհակալ նախաձեռնությամբ՝ գրադարանի հնատիպ և հազվագյուտ գրականության բաժնում, Գյուլբենկյանի նշանավոր ֆոնդի կողքին, վերջին տասնամյակում իրենց արժանավոր տեղը գտան նաև Սախարովի անվան և Թաքեյանի նորաստեղծ հավաքածուները: Նվիրատվությամբ ստացված տպագիր արտադրանքի միջին քանակն այսօր անցնում է 6 հազար միավորից: Հարկ է նշել, որ թեև նշված ճանապարհով ձեռք բերված գրականությունը միշտ չէ, որ ներդաշնակ է համալսարանական ընթերցողի պահանջներին, սակայն, այդուհանդերձ, նրանում հանդիպում են ոչ քիչ արժեքավոր հրատարակություններ, որոնք, եթե ոչ այժմ, ապա առաջիկայում, կապված Հայաստանում օտար լեզուների կիրառական ակտիվացման միտման հետ, մեծ պահանջարկ կունենան:

Գրքային ունեցվածքի հարստացման գործընթացում զգալի դեր ունեցան նաև դրամաշնորհները, որոնք, ի տարբերություն նվիրատվության, գրադարանին տալիս են գրականության ընտրության ազատություն: Համալսարանի գրադարանը, մասնակցելով ԲՀԻՕՀՀՄ-ի² հայտարարած մրցույթներին, ստացավ դրամաշնորհներ, որոնցով ձեռք բերվեց ծրագրային գրականություն: «Պուշկինյան գրադարան» ծրագրով արդեն 3 տարի է, ինչ գրադարանը համալրվում է հասարակական գիտություններին վերաբերող ռուսալեզու գրականությամբ, որի ընտրությունը կատարում են համապատասխան ֆակուլտետների մասնագետները:

Ֆոնդերի հարստացման ասպարեզում մեծ օժանդակություն ցուցաբերեցին նաև միջազգային որոշ կազմակերպություններ, որոնք դիվանագիտական կամ զուտ մարդասիրական նկատառումներով համալսարանի գրադարանում հիմնեցին քաղաքական գրականության և միջազգային նշանակության փաստաթղթային նյութերի պահոցներ: Առաջինը՝ որպես այդպիսին, ՄԱԿ-ի ավանդապահ գանձատունն էր, որն իր հիմնադրման շրջանում (1996) միակն էր ողջ Հայաստանում: 1997 թ. բացվեց ԵԱՀԿ-ի գրատունը, 1999 թ՝ Հունագիտության կենտրոն-գրադարանը, 2001-ին՝ Միջազգային դրամական ֆոնդի պահոցը: Այսօր գրադարանն ունի ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի, ՅՈՒՆԵՍԿՕ-ի և ՅՈՒՆԻՍԵՖ-ի, ԵԱՀԿ-ի ու Միջազգային դրամական ֆոնդի նյութերն ու փաստաթղթերն ամփոփող 4 հազար միավորից ավելի բազմալեզու գրականություն (գիրք, բրոշյուր, ամսագիր և այլն), պնակիտներ, մանրաժապավեններ (միկրոֆիլմեր) ու մանրապատճեններ (միկրոֆիշեր):

Համալրմանը մեծապես խթանում է նաև բաժանորդագրությունը: Այդ միջոցով, տարեկան մոտ 12 մլն դրամով, գրադարան է մուտք գործում արտասահմանյան, Ռուսաստանի Դաշնության, Հայաստանի ավելի քան 200 անուն ամսագիր ու թերթ:

Խոսել ԵՊՀ գրադարանի մասին և չչեչտել նրա գիտական գործունեությունը, կնշանակեր էական բացթողում անել նրա բնութագրում: Այն, որ գիտա-ուսումնական հաստատությանը ծառայելու գործընթացում գրադարանն այս կամ այն չափով առնչվում է համալսարանի գիտական կյանքի հետ, ակնհայտ է: Սակայն գիտական գործունեության փաստական որոշիչը ներգրադարանային գործունեությունն է: Եթե նախկինում այն սահմանափակվում էր միայն գիտամեթոդական, տեղեկատու-մատենագիտական և հրատարակչական գործընթացների ոլորտով, ապա այսօր նրանում կարևոր դեր ունեն նաև ավտոմատացման ծրագրատեխնիկական համակարգի ստեղծմանն ու կատարելագործմանն ուղղված աշխատանքները:

Գրադարանի ավտոմատացման և տեղեկատվության բաժնում տարվող աշխատանքը հիմնականում նպատակամղված է գրադարանային գործի ավտոմատացման մեթոդների ներդրմանն ու տարածմանը: ՌԻսումնասիրելով և գիտականորեն վերլուծելով զարգացող երկրների փորձը՝ գրադարանում նշակվեցին գործողության առավել արդիական ու

² Բաց հասարակության ինստիտուտի օժանդակությամբ հիմնադրամի հայկական մասնաճյուղ

արդյունավետ եղանակներ: Էլեկտրոնային համահավաք քարտարանների ստեղծման նպատակով կազմվեցին միասնական առարկայական ցանկեր և բառարաններ, ստեղծվեցին և լայն կիրառության առաջադրվեցին գրադարանային գործի համակարգչային ստանդարտներ և այլն:

Այսօր համոզված կարելի է ասել, որ ավտոմատացման ասպարեզում ունեցած նվաճումները խոստումնաշատ են ոչ միայն իր՝ համալսարանի գրադարանի, այլև հանրապետության գրադարանային ողջ համակարգի համար, քանի որ գրադարանային միասնական էլեկտրոնային ցանցի կամ, այսպես կոչված, «առանց պատերի գրադարանի» ստեղծման ճանապարհին դրանք դառնում են հիմնարար գործոններ:

Համալսարանի գրադարանի գիտական գործունեության կարևոր դրսևորումներից մեկն էլ հրատարակչական աշխատանքն է, որի սկիզբը դրվել է դեռևս 60-ականներին: Պարբերաբար հրատարակվում են Երևանի համալսարանի հրատարակչությունների, նոր ստացված գրականության մատենագիտությունները, կենսամատենագիտություններ, նշանավոր մարդկանց ու հոբելյաններին նվիրված և նման այլ ցանկեր ու տեղեկատուներ, գրադարանագիտության վերաբերյալ մեթոդական ձեռնարկներ, հանձնարարականներ ու հոդվածներ:

Թերևս շատ ավելին կարելի է գրել ԵՊՀ գիտական գրադարանի մասին, մանրամասնորեն ներկայացնել նրա գրքային հարուստ շտեմարանը, տալ գրականության մշակման, պահեստավորման, սպասարկման գործընթացների մանրակրկիտ նկարագիրը, խոսել տեղեկատվական ու ցուցադրական աշխատանքների մասին, թվային ու վիճակագրական բաղադրումներ անել անցյալի ու ներկայի ցուցանիշների միջև:

Այստեղ տեղին է հիշել ժողովրդական իմաստությունը՝ լավ է մեկ անգամ տեսնել, քան տասն անգամ լսել: Տեսնել և համոզվել, որ համալսարանական այդ համեստ օղակը հիրավի այն փոքրիկ, բայց և որոշիչ կայծերից մեկն է, որ մշտավառ է դարձնում ազգային մտքի դարբնոցը:

ՄԱՐԻԱՍ ՄԻՐԳԻՅԱՆ

ՀՊԵՀ գրադարանի համալրման և մշակման բաժնի վարիչ

ՄԵՐ ԳՐԱԴԱՐԱՆԸ

Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի (ՀՊԵՀ) գրադարանը 70 տարեկան է, ուսումնական հաստատության հասակակիցը: Հիմնադրվելով 4500 կտոր գրականության ֆոնդով, յոթանասուն տարիների ընթացքում այն համալրվել և հարստացել է, ինչպես հանրապետական և նախկին միութենական, այնպես էլ արտասահմանյան երկրներից ստացված բազմաբովանդակ գրականությամբ: Այժմ գրադարանն ունի գիտատեխնիկական, հասարակագիտական, գեղարվեստական և գիտության այլ բնագավառների վերաբերյալ հարուստ ֆոնդ:

2003 թվականի հունվարի 1-ի տվյալներով գրադարանի ֆոնդը կազմում է 95.658 անուն 1.147.561 միավոր, այդ թվում, գիտական՝ 435.991, ուսումնական՝ 513.302, պարբերականներ՝ 198.268: Ըստ լեզուների, հայերեն՝ 172.597, ռուսերեն՝ 903.578, այլալեզու՝ 71.386:

Գրադարանն ունի յոթ բաժիններ՝

- Գրականության պահպանման բաժին (գրապահոց)
- Արտասահմանյան գրականության պահպանման և սպասարկման բաժին
- Գիտա-մատենագիտական
- Համալրման
- Մշակման
- Գրականության սպասարկման
- Ավտոմատացման:

Գրապահոցում գրականությունն բաժանված է երկու մասի՝ գիտական և ուսումնական:

Գրադարանի տարածքը կազմում է 4280քմ, ընթերցասրահներում տեղերի քանակը՝ 410:

Գրադարանն ունի 51 աշխատակից, որից բարձրագույն կրթությամբ՝ 29 (այդ թվում մասնագիտական՝ 13), միջնակարգ՝ 22 (այդ թվում մասնագիտական՝ 8): Քսանհինգ տարուց ավելի աշխատանքային փորձ ունեցող գրադարանավարները 22 հոգի են, մինչև 15 տարի՝ 19, մինչև 5 տարի՝ 10 աշխատակից: Գրադարանը ղեկավարում է հանրապետության վաստակավոր գրադարանավար Նազիկ Միքայելի Կարապետյանը:

Գրադարանի աշխատակիցների ծանրաբեռնվածությունն ըստ գրքատացքի կազմում է 6368,6, ըստ ընթերցողների թվի՝ 126,5, ըստ ֆոնդի ծավալի՝ 22.501,2:

2002 թվականին ՀԳՃ գրադարանի ֆոնդի շրջանառությունը 0,3 է, գրքապահովվածությունը՝ 179, միջին ընթերցանությունը՝ 50,3:

2002 թվականին գրադարանն ունեցել է 6451 ընթերցող, ընդհանուր հաճախումների քանակը եղել է 321.800, տածքը՝ 324.800 միավոր:

Գրադարանն ունի «Pentium III» մակնիշի երկու համակարգիչ, որը սակայն չի բավարարում գրադարանի պահանջները. ուսանողները մուտք չունեն և չեն կարող օգտվել դրանից, բացի լոկալ ցանցից, որից օգտվում է համալսարանի պրոֆեսորա-դասախոսական կազմը:

Ավտոմատացման բաժնում մուտքագրվում են պարբերականները և գրադարանի ֆոնդը ըստ բաժինների: Յուրաքանչյուր պարբերական ընթերցողին ներկայացվում է գունավոր կազմով, լիարժեք բովանդակությամբ: Մուտքագրվում է նոր ստացված գրականությունը և կարճ ժամկետում նոր ստացված գրականության մասին տեղեկատվությունը մատուցվում է ընթերցողներին և դեպարտամենտներին (ֆակուլտետներին), որոնք ներկայացված հայտերի հիման վրա սպասարկման բաժնից ստանում են տվյալ գրականությունը: Հաշվի առնելով ֆինանսական սղությունը, համալրման բաժինը ֆոնդը համալրում է պահանջվող գրքից միայն 3-5 օրինակով: Համակարգչում մուտքագրվում է նաև գրադարանի հիմնական ֆոնդը: Որպեսզի ուսումնական գործընթացը չխափանվի, մուտքագրումը սկսվել է թեմատիկ քարտարանից՝ մաթեմատիկայի բաժնից: Գրքի քարտը համեմատվում է այբբենական քարտարանի հետ, հարկ եղած դեպքում գիրքը ստուգվում է տեղում, տոպոգրաֆիկ քարտով՝ եթե տեղում գիրքը չկա, ինչպես նաև պատվերաթերթիկով: Հաճախ քարտը համեմատվում է նաև գույքամատյանի հետ, եթե տեղեկատվությունը լիարժեք չէ: Թվում է, թե աշխատանքը շատ բարդացված է, սակայն գրադարանավարները ամենօրյա քրտնաջան աշխատանքով նպաստում են գործի հաջողությանը: 2002 թվականի դրությամբ համակարգիչ է մուտքագրվել 8500 անուն գրականություն:

Գրադարանի համալրման բաժնում համալսարանի դեպարտամենտների կողմից ներկայացված նախնական պատվերների հիման վրա կազմվում է քարտարան: Հիմնականում համալրումն իրականացվում է գրախանութներում առկա գրականությամբ: Նախնական ցուցակները ներկայացվում են դեպարտամենտների վարիչներին, ովքեր և որոշում են պահանջվող գրքի անունը և քանակը: Համալրման բաժնի վարիչը հաշվի է առնում նաև ընթերցողների պահանջները, որն իրականացվում է համալրման-սպասարկման բաժինների համագործակցության շնորհիվ:

Համալրման բաժնում կան «Նոր ստացված գրականություն» և «Նվիրատվություն» քարտարանները, որոնք անհրաժեշտ են ստույգ տողկատվություն տալու համար: Նվիրատվությամբ ստացված գրականությունը գրապահոցի, սպասարկման և համալրման բաժինների վարիչների, համալսարանի մատակարարման բաժնի պետի ու հաշվապահի մասնակցությամբ կազմված հանձնաժողովի կողմից գնահատվում, նոր միայն մուտքագրվում է գրադարանի ֆոնդ, որի քանակը 2002 թվականին կազմել է 195 օրինակ գիրք:

Գրադարանի ֆոնդը համալրվում է նաև համալսարանի տպարանից ստացված գրականությամբ: Սկզբնական շրջանում հատկացումների քանակը շատ քիչ էր, հաշվի առնելով այս բացը, համալսարանի ղեկավարությունը այն հասցրեց համարյա պահանջարկի քանակին. ընթերցողը գրականությունից կարող է օգտվել ոչ միայն ընթերցասրահում, այլև տանել տուն: Համալսարանական հրատարակություններից ընթերցողները օգտվում են գրադարանի «Բողոշուրների և նախագծերի» ընթերցարանում:

Համալրման բաժինն իրականացնում է նաև համալսարանի բաժանորդագրությունը: Այս գործում իր նպաստավոր լուման ունի նաև ավտոմատացման բաժինը, որը համակարգչի միջոցով կատարում է պարբերականների նախնական ցուցակների հավաքագրում, համամասնորեն բաժանում դեպարտամենտների միջև: 2002 թվականին տարեկան բաժանորդագրությունը կազմել է 40 անուն 43 օրինակ: 2003 թվականի առաջին կիսամյակի բաժանորդագրությունը կազմել է 41 անուն 44 օրինակ: Համալսարանի գրադարանի բաժանորդագրությունն իրականացվում է «Կոնտակտ-մամուլ» կազմակերպության միջոցով:

Ինչպես վերը նշվեց, բոլոր պարբերականները մուտքագրվում են համակարգիչ և լոկալ ցանցով մատուցվում ընթերցողին: Սակայն տեխնիկայի լիարժեք ապահովվածության բացակայությունը (սկաներ, տպիչ, պատճենահանման սարք և այլն) խոչընդոտում է այս բաժնի աշխատանքների արդյունավետությանը:

Մի քանի դեպարտամենտներին կից ստեղծվել են գրադարան-ընթերցարաններ, որտեղ կենտրոնացված են մասնագիտական գրքեր հումանիտար առարկաների գծով, նաև մեքենաշինության, ճարտարապետության և այլն:

ՀՀԳԳ գրադարանը ունի մասնաճյուղերի համալսարանի Գյումրի, Վանաձորի, Գորիսի, Կապանի մասնաճյուղերում:

Համալսարանի ղեկավարությունը ձգտում է հարստացնել գրադարանի նյութատեխնիկական բազան և ֆոնդը՝ անհրաժեշտ պայմաններ ստեղծելով գիտահետազոտական ուսումնասիրությունների համար: Այս նպատակով գրադարանին հատկացված գումարները տարեցտարի ավելանում են: 1999-2002 թթ. ժամանակահատվածում գրադարանը ստացել է 166 անուն 580 նոր գիրք, որոնք մուտքագրվել են համակարգիչ և պարբերաբար ցուցադրվել «Նոր գրքեր» ցուցահանդեսում:

Մեր գրադարանը ուսանողներին անհրաժեշտ գրականության սպասարկման ծավալով առաջնակարգ տեղերից մեկն է գրավում բուհական գրադարանների մեջ: Գրադարանում գործում է «Յուրաքանչյուր վերադարձրած գրքին՝ գիրք» մեխանիզմը, որը թույլ է տալիս ուսանողներին անհրաժեշտ գրականությունը սպասարկել անմիջապես, առանց մերժման: Այս գործում գրադարանին օգնում են դեպարտամենտների վարիչները և ուսանողական խորհուրդը: Սա հնարավորություն է տալիս կրճատել պարտք ունեցող ընթերցողների քանակը, իսկ հետագայում ակնկալվում է նույնիսկ այդ թվաքանակի բացառումը:

Գրադարանի սպասարկման բաժնում գործում են աշխատակիցների և ուսանողների անվանական այբբենական քարտարանները: Ընթերցողական քարտերը դասավորված են ըստ ֆակուլտետների, ներսում՝ ըստ կուրսերի, աշխատակիցներին՝ ըստ դեպարտամենտների և բաժինների: Այստեղ են իրականացվում սպասարկման բոլոր աշխատանքները, ինչպես նաև կորցրածի փոխարեն ընդունված գրականության ձևակերպումը: Հաշվի առնելով համապատասխան գրականության պահանջարկը, կորցրած գրքերը փոխարինվում են նոր, ժամանակակից գրականությամբ:

Սպասարկման բաժնում գործում են այբբենական, թեմատիկ, հայերեն և ռուսերեն ընթերցողական քարտարաններ, իսկ մշակման բաժնում՝ այբբենական ծառայողական, հայերեն և ռուսերեն քարտարաններ, որոնք հնարավորություն են տալիս անխափան իրականացնել թե՛ ընթերցողների սպասարկման, թե՛ գրադարանի ստուգման, վերահաշվառման, համեմատման աշխատանքները: 2000 թվականից կատարվում են ծառայողական և ընթերցողական գրացուցակների ստուգման-համեմատման աշխատանքներ, որոնց ընթացքում հայտնաբերված բացերն ու թերություններն անմիջապես ճշտվում և համալրվում են:

Սպասարկման բաժնում գործում է միջգրադարանային աբոնեմենտը: Սերտ փոխհարաբերությունների մեջ ենք բուհական գրադարանների, հատկապես Ազգային գրադարանի, Ազգային ակադեմիայի, հանրապետական գիտատեխնիկական գրադարանների հետ: Մասնագիտական-խորհրդատվական հարցերով հաճախ հանդիպում ենք Երևանի պետական համալսարանի, ՄԻ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանի գրադարանների աշխատակիցների հետ: Ցանկալի է, որ այս հանդիպումները լինեն հաճախակի, որտեղ կարելի է քննարկել մասնագիտական-մեթոդական հարցեր:

Սպասարկման բաժնի աշխատանքը թերի կլիներ, եթե չլիներ գրապահոցի համալիր աշխատանքը: Այստեղ գործող երկու բաժինների՝ ուսումնական և գիտական, ներսում՝ ենթաբաժինների (սեկտորների) դասակարգված գրականության յուրաքանչյուր օրինակ նկարագրված է տոպոգրաֆիկ քարտարանների վրա: Տարիների փորձը ցույց է տվել այս մեթոդի օգտակարությունը: Տոպոգրաֆիկ քարտարանների միջոցով, որոնք ներառում են յուրաքանչյուր տպագիր երկի ամբողջական նկարագիրը գույքահամարով, հնարավոր է իրականացնել ֆոնդի վերջնական ու լիարժեք ստուգումը (իսկ մեզ մոտ ֆոնդի մասնակի ստուգումներ հաճախակի են կատարվում):

2002 թվականին ստուգվել և համեմատվել են գրադարանի ընթերցարանների, դեպարտամենտներին կից գործող մասնագիտական գրականության ընթերցարանների ֆոնդերը, գրապահոցում՝ հանրագիտարանների, բառարանների, ինչպես նաև հին գրականության ֆոնդերը: Գրադարանն ունի մինչև 1900թ. լույս տեսած 10 անուն հայերեն, 9 անուն ռուսերեն գիրք: Ցուցակը ներկայացվել է ՀՀ գիտության և կրթության նախարարություն:

ՀՀԳԳ գրադարանի արտասահմանյան գրականության ու գիտական աշխատությունների պահպանման և սպասարկման բաժնում իրականացվում է համալսարանի պրոֆեսորա-դասախոսական կազմի, ասպիրանտուրայի և մագիստրատուրայի

ուսանողների սպասարկումը: Այստեղ են պահպանվում և սպասարկվում նաև պարբերականները:

Գիտական կաբինետի ընդհանուր ֆոնդը կազմում է 140.523 ամսագիր, գիրք, ատենախոսություն, սեղմագիր և այլն, 2002 թվականին ընթերցողների հաճախումների քանակը 2.850 է, սպասարկված գրականությունը՝ 30.400, որից 3.500-ը՝ արտասահմանյան, 26.400-ը՝ ռուսական, 500-ը՝ հայկական: Նվիրատվությամբ ստացված գրականությունը կազմում է 1.642 միավոր: Նվիրատվություն մեծ մասամբ ստացվում է ԱՄՆ-ից, Լիբանանից, Յունաստանից, Սիրիայից, Ֆրանսիայից, Անգլիայից և այլ երկրներից:

Գրադարանն իրականացնում է գիտա-մեթոդական աշխատանքներ, պարբերաբար անցկացնում է մեթոդական խորհուրդներ, որտեղ բարձրացվում են առկա հիմնախնդիրներ, ինչպես նաև ընթացիկ մասնագիտական հարցեր: Իրականացվում են գրադարանագիտության, մատենագիտության և տեղեկատվության գծով խորհրդատվություններ, որոնց քանակը 2002 թվականին կազմել է 25, կազմած մեթոդական նյութերի քանակը 217 էջ, գրադարանի մեթոդական խորհրդի նիստերը՝ 3, գրադարանի հանձնաժողովի նիստերը՝ 2:

Գրադարանի տեղեկատու-մատենագիտական բաժինը համալսարանի դեպարտամենտների համար (նրանց պատվերով) կազմել է մատենագիտական գրավոր տեղեկանքներ՝ «Կենսագործունեության անվտանգություն»՝ 896 միավոր մատենագիտական նկարագրություն, «Օրգանական քիմիայի»՝ 110, «Էներգետիկայի և էլեկտրատեխնիկական» ֆակուլտետի համար տարբեր թեմաներով՝ 763: Վերջին տարիներին կազմվել են հետևյալ թեմատիկ քարտարանները՝ Սարդարապատի ճակատամարտի 80-ամյակը՝ 160 միավոր, Հովհաննես Բաղրամյանի 100-ամյակը՝ 145, Լեռնային Ղարաբաղ՝ 1000, Կարեն Դեմիրճյանի 70-ամյակը՝ 150: Կազմակերպվել են նաև նրանց նվիրված ցուցահանդեսներ:

Համալսարանի 70-ամյակի կապակցությամբ բաժինն ամբողջ տարվա ընթացքում կազմակերպել է ցուցահանդեսներ, թեմատիկ քարտարաններ, կատարել տեղեկատու-մատենագիտական աշխատանքներ: Ստորև ներկայացվում են կատարված և կատարվելիք աշխատանքների ծրագրերը. կազմակերպել ցուցահանդեսներ՝ «ՀՊԵՀ նոր հրատարակությունները», «Նոր գրքեր», «ՀՊԵՀ բազմալստակ գիտնականների կենսամատենագիտությունները»: Պատրաստ է հրատարակության ՀՊԵՀ-ի աշխատությունների/մեմոարությունների 1972-1982թթ. տեղեկատու: Նախատեսվում է կազմակերպել գիտական կոնֆերանսներ նվիրված ՀՊԵՀ 70-ամյակին, ինչպես նաև «Տեղեկատվության օր», «Դեպարտամենտի օր» և «Մասնագետի օր» միջոցառումները:

ՀՊԵՀ գրադարանը 70-ամյա բեղուն ճանապարհ է անցել ու դեռ շատ տարիներ կանցնի, համալսարանի հետ կաճի ու կհարստանա, կդառնա հանրապետության ամենահարուստ բուհական գրադարաններից մեկը:

Գործենք և հուսանք...

ՆԱԻՐԱ ՍԱՐՈՒՄՅԱՆ

Գրադարանի տնօրեն

ԵՐԵՎԱՆԻ Վ. ԲՐՅՈՒՄՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԸ

Հիմնադրվել է 1935թ., ֆոնդը 450.000,
Գրադարանի ընդհանուր մակերեսը՝ 640մ²,
ընթերցասրահի տեղերի քանակը՝ 135,
տեխնիկական հագեցվածությունը՝ 4
համակարգիչ, միացված լոկալ ցանցին,
բազմացնող սարք, տպիչ, Ինտերնետային
սպասարկում:

Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանի գիտական գրադարանը իր եզակի ֆոնդով ամենախոշորներից մեկն է հանրապետությունում, որի գրականության ֆոնդը կազմում է 450 հազար միավոր: Գրադարանը համալսարանի հասակակիցն է, նրա գրքային ֆոնդի հիմքը դեռևս 1935թ. դրել է Հայաստանի կոմկուսի կենտկոմի առաջին քարտուղար Ա.Խանջյանը իր անձնական գրադարանից նվիրելով առաջին գրքերը:

Գրադարանն ունի 4 բաժին.

Համալրման և մշակման բաժինը ստանում է ուսումնական, մասնագիտական և գեղարվեստական գրականություն մի շարք լեզուներով: Գրադարանից օգտվելու ծառայությունը հեշտացնելու նպատակով ստեղծվել են կատալոգներ: Հարկ է շեշտել, որ հատկապես վերջին տարիներին Հայաստանում գործող դիվանագիտական ներկայացուցչությունների օգնությամբ գրադարանը համալրվում է տարբեր լեզուներով գրականությամբ: Իտալիայի դեսպանատան կողմից համալսարանում բացվել է իտալերեն լեզվի կաբինետ՝ հագեցված համապատասխան ուսումնական գրականությամբ: Նույնանման դասասենյակներ են բացվել Ամերիկայի Միացյալ Նահանգների, Ֆրանսիայի, Գերմանիայի, Իրանի դեսպանատների և մի շարք երկրների հյուպատոսարանների կողմից: Հայաստանում ՄԱԿ-ի գրասենյակի նվիրատվության շնորհիվ գրադարանի ֆոնդը օրեցօր համալրվում է նոր՝ մասնավորապես՝ բանասիրության, լեզվաբանության, փիլիսոփայության, քաղաքագիտության, երկրագիտության, սոցիոլոգիայի, հոգեբանության, պատմության, իրավագիտության վերաբերյալ գրականությամբ:

Համեմատաբար հարուստ է գեղարվեստական գրականության ֆոնդը: Նրանում տեղ են գտել 19-20-րդ դարերի հայ, եվրոպական, ռուսական դասականների լավագույն հրատարակությունները: Հարուստ է նաև անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, իսպաներեն, չեխերեն, ռումիներեն, բուլղարերեն, պարսկերեն լեզուներով լեզվաբանական ուսումնական գրականությունը:

Գրադարանի ֆոնդում կան նաև մատենագիտական արժեք ներկայացնող հազվագյուտ հանրագիտարաններ և բառարաններ, 19-րդ դարի ռուս և արտասահմանյան գրականության դասականների ստեղծագործություններ՝ ընծայական մակագրություններով:

Գրադարանի հավաքածուի զարդն են համաշխարհային մանկական գրականության գրադարանը, Համաշխարհային գրականության 200-հատորյակը, «Britanica» հանրագիտարանը, բացատրական բառարանները, ուղեցույցները, տեղեկագրքերը:

Հատուկ արժեք է ներկայացնում նախահեղափոխական հրատարակությունների հարուստ հավաքածուն՝ գրքերը և այդ տարիների պարբերական մամուլը:

Գրականության մշակմանը հաջորդում են մատենագիտական աշխատանքները: Նոր գրքերի ցուցակները բաշխվում են ըստ ամբոնների, որոնք կատարում են ընտրություն կաբինետների համար:

Փիրքը բուհական կյանքի սիրտն է: Հարմարավետ կահավորված առանձնասենյակում դասախոսներին հնարավորություն է ընձեռնվում կազմակերպել անհատական պարապմունքներ ասպիրանտների և հայցողների հետ: Տեղին է ընդգծել նաև ընթերցասրահի երկհերթ աշխատանքը:

Գրադարանի ընթերցասրահը բացվել է 1969թ., իսկ մինչ այդ գործում էին ամբիոններին կից կաբինետներ: Գրադարանից ընթերցասրահ տեղափոխվեց տեղեկատու բնույթի և տարբեր գիտությունների գծով գրականություն, կազմվեց դրանց քարտարանը /այբբենական և վերնագրային/: Ստեղծվեց աշխատանքնային պլան: Որոշվեց բացի հիմնական ֆոնդից ունենանալ շարժական ֆոնդ:

Ընթերցասրահը կատարում է տեղեկատու մատենագիտական աշխատանք, ծավալում գրքի քարոզչություն:

Ժամանակակից գիտության առաջընթացի պայմաններում բարդացել է ընթերցասրահի աշխատանքը: Բնակչության կրթության մակարդակի բարձրացմամբ մեծանում է ընթերցողի պահանջները գիտական գրականության նկատմամբ: Կազմվում է ընթերցասրահում ստացված «Նոր գրքեր» տեղեկատվական ցանկը, ինչպես նաև գործում է դրանց մշտական ցուցահանդեսը: Վերջերս ընթերցասրահը ստացել է մեծ քանակությամբ օտար լեզվով գրականություն, գրական գեղարվեստական և մանկավարժական ամսագրեր: Ուսումնասիրվել է 20-30 տարվա վաղեմություն ունեցող գրքերը և ամսագրերը, որոնց բազմօրինակները դուրս են գրվել: Ամբոնների հետ համագործակցված պարբերաբար կազմակերպվում են հիշարժան ու նշանավոր տարեթվերին նվիրված միջոցառումներ:

Գրադարանի գործունեության բաղկացուցիչն է մշտական գործող ցուցահանդեսը, պարբերաբար թարմացվող մարդու իրավունքների, ՄԱԿ-ի կառույցի, Եվրոմիության առաքելության և, ընդհանրապես, առօրյա ուշադրության կենտրոնում գտնվող թեմաների շուրջ:

Գրադարանի ձեռքբերումներից մեկը միջգրադարանային համագործակցությունն է, որի շնորհիվ, ըստ պահանջարկի, գրականություն ենք ստանում Ազգային գրադարանից, ՀՀ ԳԱԱ ֆունդամենտալ, Երևանի պետական համալսարանի և մյուս բուհերի գրադարաններից:

Գրադարանի լիարժեք աշխատանքն անխափան ապահովվում է 30-ամյա աշխատանքային փորձ ունեցող, մի շարք լեզուների տիրապետող որակյալ մասնագետների շնորհիվ:

Էլեկտրոնային մուտքը աշխարհի գրադարաններ իրականացվում է EBSCO համակարգի միջոցով: Գրադարանն ունի CD և DVD-ների հարուստ հավաքածու, որոնցում գտնված է EBSCO համակարգի տվյալների բանկը՝ սկսած 1984 թվականից:

Էլեկտրոնային տեղեկատվությունը մեր օրերում ամենաարդիական ու առաջավոր մեթոդն է: Մեր համալսարանը նույնպես միացած է «Էլեկտրոնային տեղեկատվություն գրադարանների համար» ցանցին: Այն համակարգի տվյալների բանկում պարունակվող ինչպես հետհայաց, այնպես էլ ընթացիկ շտեմարաններից օգտվելու հնարավորություն է ընձեռում: Ինչ է տալիս EBSCO-ն.

- արագորեն գտնել հետազոտությունների համար անհրաժեշտ հոդվածները,
- աչքի անցկացնել ներկայացվող, համապատասխան ամսագրերի ցանկը,
- գտնել հոդվածներ օգտագործելով վերնագրով կամ հեղինակի անունով փնտրման ձևը,
- գտնել հոդվածներ բանալի բառերի օգտագործմամբ՝ վերնագրերում, ռեֆերատներում և տեքստերում,
- կարդալ ինչպես հոդվածների ռեֆերատները և ամփոփումները, այնպես էլ հոդվածների ամբողջական տեքստերը

Համալսարանում պարբերաբար կազմակերպվում են EBSCO-յի ուսուցման դասընթացներ: Այն ուսանողների, ասպիրանտների ու դասախոսների համար ավելի հասանելի դարձնելու նպատակով պատրաստվեց «EBSCO-յի գրադարանային համակարգչային բազայից» օգտվելու ռուսերեն ուղեցույցը: Վերջերս հնարավորություն է ստեղծվել օգտվելու նաև ՌԴ պարբերական մամուլից:

ՆՎԱՐԴ ՍԱՖԱՐՅԱՆ **ԳՐԱԴԱՐԱՆԻ ՏՆՕՐԵՆ**

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒՆՏՈՒՐԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ

ԳՐԱԴԱՐԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտի գրադարանը հիմնադրվել է 1946թ.-ին, ինստիտուտի հիմնադրումից մեկ տարի անց: Դրանում մեծ ներդրում ունի առաջին տնօրեն Հայկ Փարսադանյանը: Նրա ջանքերով է ձեռք բերվել բժիշկ Ջախարովի մարզական գրականության անձնական հավաքածուն: Չորս լեզվով (ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն և գերմաներեն) սպորտային այդ հազվագյուտ գրքերի հավաքածուն (2300 կտոր) հանդիսանում է գրադարանի «Ոսկե ֆոնդը»: Գրադարանի առավել արժեքավոր գրքերից են 1834թ. հրատարակված ռուսերեն առաջին սպորտային «Մարմնամարզություն պատանիների համար» և Մ. Չամչյանի «Պատմություն Հայոց» («Վենետիկ», 1754-1785թ) գրքերը:

Գրականության ֆոնդի ճիշտ համալրման հարցում մեծ դեր է ունեցել գրադարանի առաջին տնօրեն Ոսկեհատ Աբովյանը: Գրադարանում պահվում են մարզաշխարհի երախտավորներից Ա. Մուսաեյանի, Ա. Չարչօղլյանի, Հ. Փարսադանյանի անձնական հավաքածուները:

Ուսումնական գրականության ձեռքբերման գործում գրադարանի աշխատողները համագործակցում են ինչպես ամբիոնների, այնպես էլ առանձին մասնագետների հետ՝ նկատի ունենալով ուսումնական ծրագրերը և համալրման ճյուղերի առանձնահատկությունը:

Ֆոնդերի բազմազանությամբ գրադարանը Հայաստանում լավագույններից է, իսկ որպես մասնագիտական՝ միակն է հանրապետությունում:

Գրադարանի գրականության 1/3-ը մարզական բնույթի է: Ունենք նաև բժշկության, մանկավարժության, հոգեբանության վերաբերյալ, ինչպես նաև գեղարվեստական, արվեստի, տեղեկատու բնույթի (բառարաններ, հանրագիտարաններ) հարուստ գրականություն:

Ընթերցողներին շատ է օգնում մարզական մամուլի հավաքածուն: Գրադարանի հարմարավետ, լուսավոր ընթերցասրահը համալրված է անհրաժեշտ դասագրքերով, գիտական աշխատություններով, սեղմագրերով, տեղեկատուներով և մամուլի հավաքածուներով:

Պարբերաբար ցուցադրում ենք նոր ստացված գրականությունը, կազմակերպում է «Տեղեկատվության օրեր», որի ընթացքում ցուցադրվում են գրադարանում ստացված նորությունները:

Ուսումնական տարվա սկզբում առաջին կուրսեցիներին գրադարանից օգտվելու կանոններին ծանոթացնելու նպատակով դասավանդվում է «Գրադարանային գործ» առարկան:

Չորս տասնամյակից ավելի ինստիտուտի գրադարանի աշխատանքը ղեկավարել է Մարո Սողոմոնյանը: Ավարտելով համալսարանի բանասիրական ֆակուլտետը, նա անմիջապես աշխատանքի է անցել գրադարանում, որից երեք տարի անց նրան վստահում են գրադարանի ղեկավարությունը: Մ. Սողոմոնյանը ջանք ու եռանդ չի խնայել գրադարանի աշխատանքը բարձր մակարդակով կազմակերպելու համար: Նա մեծ աշխատանք է տարել գրադարանային ֆոնդը հարստացնելու գործում: Նրա նախաձեռնությամբ գրադարանում բացվել է նոր բաժին՝ տեղեկատու մատենագիտական, ինչպես նաև ընդլայնվել է մշակման բաժինը: Այն ժամանակ գրադարանն ուներ շուրջ երեսուն աշխատակից, որոնց մեծ մասը բարձրագույն գրադարանային կրթությամբ: Այդ հմուտ մասնագետների շնորհիվ ստեղծվեցին այբբենական, կարգային, առարկայական, վերնագրային գրացուցակները և քենատիկ քարտարանները:

2000թ. գրադարանի տնօրեն է նշանակվել Նվարդ Սաֆարյանը: Ավարտելով Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի կուլտուրայի ֆակուլտետի «Գրադարանագիտության և մատենագիտության» բաժինը, նա իր աշխատանքային առաջին մկրտությունն է ստացել ֆիզիկական կուլտուրայի ինստիտուտի գրադարանում, 1974թ. սեպտեմբերից առ այսօր աշխատելով: Լինելով Մարո Սողոմոնյանի ուսանողներից, Նվարդ Սաֆարյանն ընդօրինակել է այն ամեն լավը, ինչ ուներ նախկին տնօրենը՝ կազմակերպվածություն, համեստություն, ջանասիրություն: Նա կարողանում է իր գործը վարել մեծ գործիմացությամբ:

Այժմ ինստիտուտի գրադարանում աշխատում են տասնմեկ գրադարանավար, որից հինգը մասնագիտական կրթությամբ: Տնօրեն Նվարդ Սաֆարյանը կարողացավ իրականացնել մի շարք կարևոր ծրագրեր:

Խորհրդային Միության փլուզումից հետո մեծ փոփոխություններ եղան նաև մեր գրադարանում: Ֆոնդերը զտվեցին, հանվեց քաղաքական արդիականությունը կորցրած գրականությունը: Հարկ եղավ մանրամասն խմբագրել գրադարանի գրացուցակները և քարտարանները: Բաժին առ բաժին դրանք ստուգվեցին, համեմատելով ֆոնդերի հետ: Վերահաշվառումից հետո գրադարանի ֆոնդը կազմում է շուրջ 187 հազար միավոր գրականություն: Քանի որ գրքային ֆոնդը պակասել է և նոր գրականություն քիչ ենք ստանում, գրադարանի աշխատակազմի քանակը 18-ից իջավ 11-ի: Նրանցից երեքն աշխատում են մշակման և համալրման բաժնում, մեկը՝ ընթերցասրահում, հինգը՝ սպասարկում-գրապահոցում և մեկը, որպես մատենագետ:

Գրականություն ձեռք բերելու գործում ֆինանսական մեծ օգնություն է ցույց տալիս ինստիտուտի ռեկտոր պրն. Վահրամ Առաքելյանը: Բաժանորդագրվում և Մոսկվայից ստանում ենք 7 անուն մարզական ամսագիր: Գրադարանի գրքային ֆոնդը համալրվում է նաև ինստիտուտի դասախոսների կողմից տպագրված սպորտային գրականությամբ:

Ներկայումս գրադարանում ընթանում են հաշվառման աշխատանքները: Շուտով գրադարանի 4 աշխատող կմասնակցեն ինստիտուտում կազմակերպված համակարգչային դասընթացներին:

ՔՐԻՍՏԻՆԵ ԶԱՏԻԿՅԱՆ

Վանաձորի Հովհաննես Թումանյանի
անվան Պետական մանկավարժական
ինստիտուտի գրադարանի տնօրեն

ՎԱՆԱԶՈՐԻ ՄԱՆԿԱՎԱՐՇԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆԸ

Գրադարանը գործում է ինստիտուտի հիմնադրման օրվանից՝ 1969 թ-ից, որն ստեղծվել է Երևանի պետական հեռակա մանկավարժական ինստիտուտի հիման վրա:

Գրադարանը ոչ մի օր չի դադարել աշխատելուց, ամգամ երկրաշարժից անմիջապես հետո: Գրադարանի կենսագրության էջերում արձանագրված է նույնիսկ վրանային գործունեություն, որին փոխարինեց երկար տարիների աշխատանքը տնակային պայմաններում՝ միշտ հավատարիմ մնալով իր բնույթին: Քանի որ գրադարանի գրապահոցը գտնվում էր շենքում, իսկ տացքը կատարվում էր որոշակի հեռավորության վրա գտնվող տնակներում, առաջանում էին դժվարություններ: Սակայն գրադարանավարների պատրաստակամության շնորհիվ տարիներ շարունակ գրադարանը դարձավ ուսանողի «հոգևոր ստնտուն»:

Շուրջ 4 տարի է, ինչ գրադարանն աշխատում է հարմարավետ պայմաններում: Գրադարանի ֆոնդը կազմում է շուրջ 215.000 միավոր գրականություն, ունի մոտ 2050 ընթերցող՝ ըստ 2002-2003 ուստարվա տվյալների: Գրադարանը բաժանորդ է հանրապետական և արտերկրի շուրջ 20 ամուն թերթի և 10 ամուն ամսագրի (այս թվերն, իհարկե, փոփոխական են):

Բուհական գրադարանը բուհի ստեղծագործ խմբերին ու անհատներին իր շուրջը համախմբող, համակարգող օղակ է, որի նախաձեռնությունները բխում են ուսանողների հետաքրքրություններից: Այն ոչ միայն ուսանողության հյուրընկալ օջախն է, այլև դասախոսների, երբեմն նաև քաղաքի մտավորականության ոգելից ապաստանը: Բուհական գրադարանների առանձնահատկությունը, ի տարբերություն այլ տիպի գրադարանների, պայմանավորված է ընթերցողների «տեսակով» և ուսանողներին բուհական դասագրքերով ապահովելով: Սակայն այս ամենով հանդերձ՝ այս գրադարանի գործունեությունն էլ ունի բոլոր տիպերին բնորոշ խնդիրների համակարգ:

Բուհական գրադարանը գրադարան չէ բառի նեղ իմաստով, այլ մշակույթի օջախ, որտեղ իրենց գործուն մասնակցությամբ ուսանողները կենսական են դարձնում գրադարանի աշխատանքային օրը: Օրն սկսվում է ուսանողների հոսքով. ոմանք պահանջագրեր են ներկայացնում, ոմանք էլ նստում են ընթերցասրահում՝ ստանալով անհրաժեշտ գրականությունը: Առավտից մինչև աշխատանքային օրվա ավարտը աշխուժությունը չի նվազում գրադարանում: Ռեսուրսներից շատերը քարտարաններն են տնտղում, մյուսները նոր ստացված թերթերն ու ամսագրերն են աչքի անցկացնում, իսկ ուրիշներն էլ կուրսային աշխատանքների և ռեֆերատների թեմաների համար գրականության ցանկն են ճշտում մատենագետի օգնությամբ:

Միօրինակ չէ մեր առօրյան, քանի որ գրադարանի տրամադրություն ձևավորող ուսանողն է իր բազմաբնույթ հետաքրքրություններով: Նրանց մտահղացումներն անպատասխան չեն մնում: Եվ ահա ամբիոնների, ուսխորհրդի և գրադարանի համատեղ ջանքերով իրականացվում են միջոցառումներ: Գրական միջոցառումների նախաձեռնողը գրականության ամբիոնի վարիչ, մշակույթին առնչվող համաքաղաքային բոլոր միջոցառումների բանախոս Մելս Սանթրյանն է: Արվեստի ամբիոնի վարիչի՝ գեղանկարիչ Գեորգի Թովմասյանի հետևողական ջանքերով գրադարանի ընթերցասրահում պարբերաբար բացվում են կերպարվեստի բաժնի ուսանողների աշխատանքների ցուցահանդեսներ: Հատկանշականն այն է, որ յուրաքանչյուր ցուցահանդես տոնական է դառնում մի նոր նկարչի «հայտնաբերմամբ»:

Գրադարանն ունի 5 կառուցվածքային ստորաբաժին՝ մշակման և համալրման, գրապահոց, արքնենտային բաժին, ընթերցասրահ, մատենագիտության բաժին: Հիմնականում աշխատում են երկարամյա աշխատանքային կենսափորձ ունեցող գրադարանավարներ, որոնք սիրում են իրենց աշխատանքը:

Մատենագիտության բաժինը ներկայացնում է մատենագետ, բանաստեղծուհի Սուսաննա Ասլիկյանը: Նա միևնույն ժամանակ համակարգում է գրադարանի գիտական կաբինետի գործունեությունը: Գիտական կաբինետում դասախոսները հաղորդակցվում են թե նոր ստացված գրականությանը, թե մամուլի թողարկումներին և թե աշխատում են իրենց «թեմաների» վրա: Գրադարանը, շնորհիվ Սուսաննա Ասլիկյանի, ունի յուրօրինակ

վահանակներ և ցուցադրական թեմատիկ պաստառներ: Նրա դիմագիծն ամբողջացնելու համար ներկայացնում ենք մի բանաստեղծություն նրա երկրորդ ժողովածուից:

ՏՈՒՆԴԱՐՁԻ ԵՐԳ

Ես ձեզ գիտեմ, հավքեր, որ չվում եք այլուր
Ու միշտ հետ եք դառնում երանության ճախրով,
Դուք գալիս եք կրկին, գուցե լուր եք բերում
Տարագրված հայից՝ հայրենիքից խռով:

Նրանք գուցե հիմա թարգմանությամբ տարված
Հանուն վարք ու բարքի կյանքն են անգիր անում,
Իսկ բառերը տարած հետ են լողում կամաց,
Որ հոլովվեն շուրթին հուշկապարիկ քամու:

Իսկ երվ ձմեռ լինի, եւ դուք գնաք Նորից,
Կհանդիպեք, գիտեմ, տաք վայրերում նրանց,
Ասեք, որ ձյան վրա, ոտնահետքին իրենց
Հենց որ գարունը գա, ծիլեր կելնեն կանաչ:

Մունետիկներ Նոյի, կանաչ ծիլեր տարեք
Հայրենիքից հայի՝ աշխարհով մեկ փռված,
Հենց որ գարունը գա, հետ դառնալու լինեք,
Տունդարձի երգ թողեք հասցեով հետադարձ:

Եթե անդրադառնանք մեր խնդիրներին և դժվարություններին, ապա կարծում են բոլոր գրադարանների նման մենք էլ ունենք մի ցավոտ հարց՝ նոր հրատարակվող գրականության պակասը: Տարիներ շարունակ մեր գրադարանի ֆոնդը համալրվել է շատ քիչ գրականությամբ, հիմնականում նվիրատվության միջոցով: Համալրմանն աջակցել են ինստիտուտի ռեկտորը, դասախոսներ, անհատներ: Վերջին 2 տարում ռեկտոր պարոն Ռաֆայել Եդոյանի անմիջական միջամտությամբ ինտենսիվ կարգով ձեռք են բերվում նոր գրքեր:

Եթե չի վերագործելու գրադարանների համալրման նախկին պետական կենտրոնացված համակարգը՝ գրադարանային բաշխիչը, ապա չի հասունացել արդյոք ժամանակը՝ ստեղծելու հրատարակչությունների «արտադրանքը» համակարգող մի կառույց, որը, ըստ պատկանելիության, իրազեկ պահի նոր հրատարակված գրականության ցանկին:

ՄԱՐԶԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐԻ ԱՌՕՐՅԱՅԻՑ

Շարունակելով «Տարեգրքի» 6-րդ համարով սկսված խորագիրը այս անգամ ընթերցողի ուշադրությանն ենք ներկայացնում մարզային գրադարաններից ստացված երկու թղթակցություն: Թեև մեր բազմաթիվ հորդորներին և հիշեցումներին խմբագրությունը ստացել է միայն այս երկու նյութը... Գրադարանների տնօրենները պետք է իրենք շագրդված լինեն «Տարեգրքի» էջերում տպագրվելու համար: Եվ ամանց մեր հիշեցումների...

ԱՌԴԱ ՂԱԶԱՐՅԱՆ

Արմավիրի մարզային գրադարանի տնօրեն

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆԸ 2002 ԹՎԱԿԱՆԻՆ

Արմավիրի մարզային գրադարանի համար 2002թ. անցավ «Եվրասիա» հիմնադրամի կողմից իրականացվող «Գրադարաններն իբրև հանրային հաղորդակցության կենտրոններ» ծրագրի հովանու ներքո: Տրամադրված տեխնիկական և ֆինանսական օժանդակությունը շեշտակի ազդեցություն ունեցավ գրադարանի գործունեության վրա:

Նոր հազարամյակի շեմին կրկին կարևորվում է գրադարանների՝ իբրև կրթության, մշակույթի, տեղեկատվության և հասարակական երկխոսության կենտրոնների դերը:

Արմավիրի մարզի հանրապետական գրադարանը նպաստել է բնակչության լիարժեք տեղեկատվության տրամադրմանը, հանուն սոցիալ-տնտեսական, հոգևոր և քաղաքական առաջընթացի՝ տեղեկատվության տարածման, ուսուցման, խորհրդատվության մատուցման, միջոցառումների կազմակերպման և քարոզչության միջոցով:

Ծրագիրը նպաստեց մարզում գրադարանի դերի բարձրացմանը, ամրապնդվեց կապը տեղական ինքնակառավարման մարմինների հետ: Գրադարանի սպասարկման ոլորտում ներգրավեցին բազմաթիվ նոր ընթերցողներ, էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչներ:

Ծրագիրը նպաստեց բարձրացնելու մարզում քաղաքացիական ակտիվության դրսևորման ունակությունները և կարողությունները, գրադարանի շուրջ համախմբելով ակտիվ քաղաքացիների, հասարակական կառույցների, տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչներին և ՁԼՄ-ներին:

Տարվա ընթացքում գրադարանը շաբաթը մեկ անգամ կազմակերպել և անցկացրել է տարաբնույթ միջոցառումներ. կլոր սեղաններ, վերապատրաստման դասընթացներ, երկխոսություններ: Հանդիպումները նվիրված են եղել մարզի սոցիալ-տնտեսական, քաղաքացիական հասարակության կայացման, փոքր և միջին բիզնեսի զարգացման, ՀԿ-ի դերի նշանակության և ժողովրդավարական սկզբունքների ամրապնդման վերաբերյալ հարցերին: Զգալի ազդեցություն ունեցավ երկխոսությունների կազմակերպումը, որի ընթացքում ընդհանուր նպատակի շուրջ համախմբվեցին քաղաքացիական հասարակության առկա կառույցներ ու հասարակական խմբեր, նրանց մեջ ձևավորվեց ակտիվ համագործակցություն: Գրադարանը տարածել է տեղեկատվություն մարզի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից իրականացվող քաղաքականության և հարկային դաշտի բարեփոխումների վերաբերյալ: Մեր կատարած աշխատանքը նպաստեց մարզի բնակչության ակտիվության բարձրացմանը և ապահովեց նրանց մասնակցությունը հասարակական կյանքում ընթացող փոփոխություններին:

«Եվրասիա» հիմնադրամի կողմից տրամադրված տեխնիկական սարքավորումներն աշխատանքային գործունեության նոր ձևերի ու մեթոդների ներդրման հիմք հանդիսացան: Դրամաշնորհի շրջանակներում գրադարանին տրամադրվել է հինգ «Պենտիում» համակարգիչ, մեկ լազերային տպիչ, պատճենահանող սարք, ֆաքս, սկաներ, թվային լուսանկարչական սարք, ինտերնետ կապ, գրականություն: Շնորհիվ այս ամենի, գրադարանը դարձել է մարզային տեղեկատվության կարևոր կենտրոն:

Գրադարանը շարունակում է ձևավորել հայերեն լեզվով էլեկտրոնային գրացուցակը և ստեղծում է այլ բնույթի հարուստ տեղեկատվական բազաներ:

Համագործակցությունը IFES ընտրական համակարգերի միջազգային կազմակերպության Արմավիրի մասնաճյուղի հետ, լրացրել է գրադարանի տեղեկատվական բազան:

Գրադարանը համագործակցել է Արմավիրի օժանդակ դպրոցի տնօրինության հետ, տրամադրելով համապատասխան գրականություն, նյութեր, հետաքրքիր միջոցառումներ անցկացնելու համար:

«Գրադարաններն իբրև հանրային երկխոսության կենտրոններ» ծրագիրը փոփոխություններ բերեց գրադարանի աշխատանքների բնագավառում: Շնորհիվ ծրագրի իրականացման, ներկայումս.

- գրադարանը բավարարում է ընթերցողի բազմաբնույթ պահանջները, տալիս է ժամանակի հետ համահունչ տեղեկատվություն.
- կարևորվել է գրադարանի դերը հանրային երկխոսությունների կազմակերպման մեջ.
- ձևավորվել է համագործակցություն տեղական ինքնակառավարման մարմինների և գրադարանի միջև.
- ձևավորվել է համագործակցություն մարզի տարածքում գործող ՀԿ-ի և գրադարանի միջև.
- գրադարանը համալրվեց նոր գրականությամբ, ինչպես Եվրասիա հիմնադրամի, այնպես էլ անհատ քաղաքացիների, մի շարք կազմակերպությունների կողմից.
- կատարելագործվել է գրադարանի սպասարկումը, բազմակողմանի է դարձել գրադարանի մատուցած տեղեկատվությունը.
- գրադարանը համալրվել է ժամանակակից տեխնիկական սարքավորումներով.
- ստեղծվել են օրենսդրական նյութերի, ՀԿ-ի, մարզերի և մի շարք ժամանակակից թեմաների վերաբերյալ տեղեկատվական շտեմարաններ.
- հաստատվել է ինտերնետ կապ, որի շնորհիվ բնակչությունը և ՀԿ-ը հնարավորություն ստացան օգտվելու համաաշխարհային տեղեկատվության աղբյուրներից.
- ստեղծվեց լոկալ ցանց նպաստելով գրադարանի ներքին աշխատանքների արդյունավետությանը.
- գրադարանավարները հնարավորություն ստացան տիրապետելու համակարգչային գիտելիքներին.
- վերապատրաստվեցին գրադարանի մի շարք գրադարանավարներ /ԱՀՀ ՀԿ-ի ուսուցման և տեղեկատվական միջոցների կենտրոնում, ՄԱԿ-ի գրասենյակում, Հայկական գրադարանային միությունում/.
- ընթերցողների, անհատ քաղաքացիների, գրադարանավարների, ՀԿ-ի ներկայացուցիչների համար կազմակերպվեցին համակարգչային դասընթացներ:

Գրադարանը համագործակցության արդյունքում մի շարք կազմակերպությունների կողմից արժանացել է վկայագրերի (IFES` 2002թ սեպտեմբերի 5-6 „Բարի կամք, Բարի գործ, Բարի ելք», խորագրով միջոցառումներին ունեցած մասնակցության, Արմավիրի Կանանց խորհրդի կողմից նրանց ցուցաբերած աշխատանքների, բուկլետների պատրաստման, բազմացման, աշխատանքային համագործակցման համար:

Ամերիկայի հայկական համագումարի ՀԿ-ի կենտրոնը գրադարանի մի շարք աշխատակիցների համար կազմակերպած կառավարման ուսուցման ծրագրի շրջանակներում, մասնակիցներին արժանացրել է «Գրադարանները որպես հանրային երկխոսության կենտրոններ» վկայականների:

Գրադարանը «Հայկական գրադարանային միություն» ՀԿ կողմից Ազգային գրադարանային շաբաթվան ակտիվ մասնակցության համար արժանացավ խրախուսանքի, բաժանորդագրվելով երկու անուն հայկական պարբերականի: Եվս մեկ պարբերականի բաժանորդագրություն գրադարանին նվիրել է մեր ակտիվ ընթերցողներից մեկը:

Իր գործունեության ընթացքում գրադարանը աջակցել է համայնքի և տեղական ինքնակառավարման մարմինների միջև համագործակցության ձևավորմանը, տեսակետների փոխանակմանը և նրանց ձայնը լսելի դարձնել ղեկավար մարմինների կողմից որոշումների ընդունման գործընթացում:

Այս ամենը ապահովվեց տեղական ինքնակառավարման մարմինների աշխատանքների թափանցելիությունը և որպես դրական հետևանք նպաստեց տեղական իշխանությունների պատասխանատվության բարձրացմանը:

Գրադարանը հանդիպում կազմակերպեց Աժ Արմավիրի 39-րդ ընտրատարածքի պատգամավոր Տարոն Սահակյանի հետ: Հանդիպումը տվեց ցանկալի արդյունք: Նրա

օգնությամբ փակման եզրին կանգնած «Հայրենական» մարզային թերթը կարողացավ շարունակել իր գործունեությունը: Հանդիպմանը ներկա էր նաև «Զրառատ» ՓԲԸ-ի նախագահ Ն. Ներսիսյանը, որը վճարեց գրադարանի շենքի վարձակալության մեկ տարվա պարտքը: Տ. Սահակյանը նաև խոստացավ հանդիպումներ ունենալ ՀԿ-ի հետ ծանոթանալու մարզի խնդիրներին և դրանք բարձրացնել ՀՀ ԱԺ-ում:

Արձագանքելով մարզում անցկացվող ընտրություններին գրադարանը կազմակերպել է հանդիպումներ քաղաքապետի և ավագանու թեկնածուների հետ: Ընտրողներին ներկայացվեց նրանց իրավունքները և պարտականությունները, ինչպես նաև «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը, «Ընտրողը և ընտրակարգը» պարզեցված ուղեցույցը, «Ընտրական օրենսգիրքը»: Ձեռնարկները բաժանվել են մասնակիցներին, որը տրամադրել էր IFES ընտրական միջազգային հաստատության Արմավիրի մասնաճյուղը:

Մարզպետարանի սոցիալական ապահովության բաժնի վարիչ Ծաղկանուշ Գրիգորյանի հետ միասին անցկացրել ենք համայնքի անապահով խավերի համար «ՀՀ աղքատության վերացման ռազմավարական ծրագրի նախագիծ» քննարկումը: Նախագիծը նախօրոք բաժանվել էր համայնքի անապահով խավերին ուսումնասիրման նպատակով: Ծրագրի քննարկման ընթացքում քաղաքացիների կողմից արվեցին, առաջարկություններ, լրացումներ կապված սոցիալական պայմանների բարելավման հետ:

Գրադարանը նպաստեց համայնքի քաղաքացիական հասարակության զանազան ոլորտների ու տեղական գործոնների ներդաշնակ երկխոսությանը, համագործակցության զարգացմանը:

ՄԱՐԻԵՏԱ ԱՄԻՐԻԱՆՅԱՆ

Գրադարանի տնօրեն

ԵՐԿՐՈՒ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆՈՒՄ

Գեղարքունիքի Վ. Պետրոսյանի անվան մարզային գրադարանում ավանդույթ է դարձել մարզի անվանի մարդկանց նվիրված միջոցառումների կազմակերպումը, որոնք անցնում են հետաքրքիր մթնոլորտում և աշխույժով են լցնում գավառական քաղաքի առօրյան:

Ահա աշնանային գեղեցիկ մի օր գրադարանում հավաքվել էին Հրաչիկ Մաղոյանի ստեղծագործությունների երկրպագուները՝ մտավորականներ, կրթության և մշակույթի ներկայացուցիչներ՝ նշելու բանաստեղծ, մանկավարժ Հ. Մաղոյանի ծննդյան 70-ամյակը: Բացման խոսքով հանդես եկավ գրադարանի տնօրեն Ս. Ամիրխանյանը Հ. Մաղոյանին ներկայացնելով որպես բանաստեղծ-մանկավարժի, նրա անցած ուղին, կենսագրական տվյալները, նրա «Հավատամք», «Կարոտի շշուռ» գրքերը, իսկ վաստակաշատ մանկավարժ Արփիկ Քեչիշյանը խոսեց նրա ստեղծագործությունների գեղարվեստական արժեքների մասին: Ելույթներ ունեցան պատերազմի վետերաններ Լիպարիտ Ղարիբյանը, Խաչիկ Սարգսյանը, ընթերցողներ Գագիկ Աղեկյանը, Գոհարիկ Փոքրիկյանը, Բյուրեղիկ Մենյանը, Սամվել Աղլամազյանը: Առանձնապես հուզիչ էին բանաստեղծի թրոջ՝ Ամալյայի և կնոջ՝ Թամարայի ելույթները:

Միջոցառման ընթացքում հնչեցին երգեր նրա բանաստեղծությունների տեքստերով՝ Սևակ և Գոհար Հակոբյանների կատարմամբ:

Մասնակիցները սիրով ծանոթացան Հր. Մաղոյանի կյանքին և ստեղծագործությանը նվիրված ցուցահանդեսին: Միջոցառումը եզրափակեց հորեյարը, որը ներկաների համար կարդաց իր բանաստեղծություններից մի քանիսը:

Գրադարանի հաջորդ միջոցառումը նվիրված էր Մարատ Սինանյանի ստեղծագործության 50-ամյակին, որը բացվել էր երկրագիտական թանգարանի ընդարձակ դահլիճում: Այստեղ էին հավաքվել քաղաքի մտավորականությունը, արվեստասեր հասարակությունը, ինչպես նաև Մարատ Սինանյանի հարազատները: «Հայացք մեկ ակնթարթում» խորագիրը կրող ցուցահանդեսի նյութերն իրենց մեջ բովանդակում էին բնանկարներ, ճեպանկարներ, որոնց մի մասը ներկայացվում էր լուսանկարներով: Բացման խոսքով հանդես եկավ մարզային գրադարանի տնօրեն, որը մեծ գնահատականի արժանացրեց նկարչի ստեղծագործությունները, նշելով, որ նա ազատ վրձնահարվածներով օգտագործելով գույնի համադրությունները արտահայտում է իր հուզական և հոգևոր աշխարհը: Նրա ստեղծագործություններից մենք զգում ենք հայրենի հողի բույրը, տեսնում արարչագործ մարդու վեհությունն ու խնդությունը:

«Մարատ Սինանյանի հոգևոր աշխարհը» թեմայով ելույթ ունեցավ թանգարանի ավագ գիտաշխատող Հ. Հովեյանը, որը ներկայացրեց ցուցահանդեսում տեղ գտած մեր

քաղաքի անցյալն ու ներկան պատկերող լուսանկարները: Ելույթ ունեցան նաև Էմմա Գրիգորյանը, Հրաչիկ Մադոյանը, Միշա Սարգսյանը, Վենիկ Ասատրյանը, Բ. Մնեյանը և ուրիշներ: Միջոցառմանը նվիրված հաղորդումը ցուցադրվեց տեղական «Քյավառ» հեռուստաալիքով:

ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ

ԳՐԱԴԱՐԱՆ ՌՈՒՄԲԵՐԻ ՓՈՒՆԱՐԵՆ

Կործանումից 1600 տարի հետո մոխիրներից հառնած գրադարանի մասին

*«Իմ հայրենիքն այնտեղ է, որտեղ իմ գրադարանն է»
Էրազմ Ռոտերդամցի*

Ալեքսանդրիայի հնագույն գրադարանը շատ հզոր էր: Դեռ երկու հազար տարի առաջ այն ուներ ավելի քան 700 հազար գիրք: Գրադարանն առաջինն էր և գրքերով հագեցված: Նրանից է սկսվել եվրոպայում գրքային մշակույթը: Անտիկ Յունաստանից մինչև Ալեքսանդր Մակեդոնացի, գրքեր չէին կարողում, տանն էլ չէին պահում: Բոլոր անհրաժեշտ գիտելիքները ձեռք էին բերում լսելով, բանավոր դասերից, իսկ սիրված բանաստեղծությունները հիշում էին անգիր: Միայն մի քանի փիլիսոփաների, օրինակ՝ Արիստոտելի մոտ, կային մի քանի տասնյակ գլանածև ձեռագիր գրքեր, և այդ ամենը դիտվում էր որպես տարօրինակություն: Երբ Արիստոտելի աշակերտներից մեկը խորհուրդ տվեց Ալեքսանդրիայի թագավոր Պտղոմեոսին գրքեր հավաքել, դա դիտվեց տարօրինակություն՝ պետական մասշտաբով: Միայն մեկ սերունդ հետո պարզ դարձավ, որ առանց գրքերի հնարավոր չէ ապրել և աշխատել, քանի որ մարդկության կողմից կուտակված գիտելիքներն արդեն չէին կարող տեղավորվել որևէ մեկի գլխում: Գիտելիքների համար հարկավոր էին պաշարայահներ: «Չկա որևէ վատ գիրք, որից հնարավոր չլինի փոքր ի շատե օգուտ քաղել».- մտածում էին նրանք: Այդ իսկ պատճառով նպատակադրվեցին հավաքել աշխարհում գոյություն ունեցող բոլոր հունարեն գրքերն առանց բացառության: Դա պատմության մեջ իր նախադեպը դեռ չէր ունեցել: Դրանից հետո միայն եվրոպական մշակույթը դարձավ գրքային, յուրաքանչյուր կրթված մարդ արդեն կարող էր օգտվել դրանից:

Ալեքսանդրյան հնագույն գրադարանը վերացել է երկու մեծ հրդեհների հետևանքով: Առաջին անգամ, երբ քրիստոնյաները պայքար սկսեցին հեթանոսական ձեռագրերի դեմ, հաջորդ անգամ, երբ մուսուլմանները սկսեցին պայքարել և՛ հեթանոսական, և՛ քրիստոնեական ձեռագրերի դեմ: Գրադարանները թեև փոքր էին, բայց շարունակում էին ապրել, զարգանալ, բազմանալ՝ եկեղեցական, համալսարանական, իշխանական, թագավորական և ազգային պահոցներում: Ձեռագիր գրքերը փոխարինվում էին տպագիրներով: Այժմ տպագիր գրքերը փոխարինվում են թվայիններով, իսկ գրադարանային ֆոնդերը սերտաճում են ինտերնետին: Ոմանք գտնում են, որ գրքային դարաշրջանի մշակույթին վերջ է տրվել, բայց դա այդպես չէ: Քանի դեռ մարդիկ օգտվում են գրավոր խոսքից, նրանք կունենան գրքեր, իսկ թե դրանք ինչ ձև կունենան, կորոշվի ժամանակը: Կենտրոնը, որտեղ կուղենշվեն գրքագիտության նոր ուղիները, պետք է դառնա մի նոր ալեքսանդրյան գրադարան: Դրանը՝ համահունական էր, նորը՝ կլինի համաաշխարհային: Նրա մեջ ներառված է գրքային մշակույթի ամբողջ պատմությունը, առանց որի մենք չէինք լինի այսպիսին՝ ինչպիսին կանք:

Ալեքսանդրիայի նոր գրադարանը սկսել են կառուցել յոթ տարի առաջ, միջազգային մրցանակաբաշխությունից հետո, որտեղ հաղթեցին նորվեգացի ճարտարապետները: Գրադարանի շինարարության և սարքավորման ֆինանսավորմանը մասնակցեց Եգիպտոսի կառավարությունը, ՅՈՒՆԵՍԿՕ-ն, արաբական և եվրոպական մի քանի պետություններ:

Ողջ քաղաքակիրթ աշխարհի բազմաթիվ մարդկանց ջանքերը ծառայում էին մի նպատակի. որպեսզի եգիպտական պատմական քաղաքը գրադարան ունենա, որը կարելի է անվանել 21-րդ դարի հրաշալիք: Նոր կառուցված, ալեքսանդրյան գրադարանը իրավամբ դարձավ ժողովուրդների մշակութային միասնության խորհրդանիշ:

Գրադարանի 11 հարկանի շենքը կառուցված է թեք կտրած գլանազլխարկի /լայնեզր գլխարկի/ ձևով, որը հեղինակների կողմից մտածված է որպես հին եգիպտական արևի խորհրդանիշ: Պատերից մեկի վրա լուսամուտների փոխարեն աշխարհի բոլոր այբուբենների տառերն են: Երեք հազար հինգ հարյուր տեղանոց հսկայական լուսավոր ընթերցասրահում կարելի է ստանալ ցանկացած գիրք և նույն պահին այն արտատպել ու գրանցել սկավառակի վրա: Կենտրոնական մասնաշենքի շուրջը տեղաբաշխված են աստղադիտարանը, գիտությունների թանգարանը, միջազգային տեղեկատվական դպրոցը, հին ձեռագրերի և հիբերոգլիֆների թանգարանը, գրքերի վերականգնման արհեստանոցները:

Ալեքսանդրիայի գրադարանի պաշտոնական լեզուներն են արաբերենը, անգլերենը և ֆրանսերենը: Բայց գիտական կենտրոնի էլեկտրոնային համակարգը ընդունակ է

վերարտադրել փաստաթղթեր աշխարհի բոլոր լեզուներով: Գրադարանի ֆոնդերում արդեն կա ավելի քան 4 միլիոն գիրք, 500 հազար քարտեզ, 100 հազար ձեռագիր, 10 հազար հնատիպ գիրք և մեծ քանակությամբ լազերային սկավառակներ:

Ապակուց և բետոնից կառուցված գերժամանակակից կառույցի արժեքը կազմել է 1.5 միլիարդ եվրո, իսկ գրադարանային ֆոնդի ստեղծման համար ծախսվել է համարյա 200 միլիոն դոլար:

Նախագծի հիմնական նպատակն է եղել ստեղծել միջազգային էլեկտրոնային գրադարան, որի շնորհիվ մարդիկ ամբողջ աշխարհում կարող են ստանալ ինտերնետային յուրաքանչյուր հարցադրման պատասխանը:

Ալեքսանդրյան գրադարանը բացվեց այն օրերին, երբ մարդկությունը մտահոգված է ոչ թե ընթերցանությամբ, այլ միջազգային ռազմական ընդհարման վտանգի և համաշխարհային տեռորիզմի ակտիվացմամբ: Հատկանշական է, որ գրադարանը դեռ չծնված, արդեն իսկ ուներ երկու հազարամյա պատմություն: Ալեքսանդրիայի գրադարանի բացումը կարելի է համարել հասարակ գրքային տառի ժամանակավոր հաղթանակը ռազմականացված առօրյայի հանդեպ:

Ըստ ռուսական մամուլի նյութերի պատրաստեց Անահիտ Ավագյանը

ՄՏՔԵՐ ԴԱՐՎԱՆԵՐԻ ՎՐԱ

(Նվիրվում է Ռուսաստանի պետական գրադարանի հիմնադրման 175-ամյակին)

Ռուսական պետական գրադարանը (ՌՊԳ, որը շատերին հայտնի է **Լենինյա** անվամբ), Եվրոպայում ամենախոշորն է: Ներկայումս նրա ֆոնդերում կա ավելի քան 43 միլիոն միավոր գրականություն: Միավոր բառի տակ թաքնված են համաշխարհային գրականության գլուխգործոցներ, հնագույն ձեռագրեր, հազվագյուտ հրատարակություններ, գիտական աշխատություններ, նոտաներ, պարբերականներ և այլն: Գրադարանի հավաքածուի մեջ ներկայացված են համարյա բոլոր գրքերը, որոնք լույս են տեսնում Ռուսաստանում: Ամեն օր գրապահոցը լրացվում է 600 նոր տպագիր և էլեկտրոնային օրինակներով:

Խորհրդային ժամանակաշրջանում այդ գրադարանը հասանելի էր միայն ընտրյալներին, հիմնականում նրանց, ովքեր լրջորեն զբաղվում էին գիտական ուսումնասիրություններով: Հետո երկրի գլխավոր գրադարանում սկսեցին գրանցել յուրաքանչյուրին: Դարձար տասնութ տարեկան, կարող էիր վազել գրադարան և դառնալ ընթերցող: Երբ ՌՊԳ-ի օրենքները փոփոխվեցին, ուսանողների հսկայական հոսք սկսվեց դեպի գրադարան: Նախկինում որոշ բուհերի տնօրինություններ հրաժարվում էին ուսանողներին թույլ տալ մասնակցելու քննաշրջանին, մինչև նրանք ցույց չէին տալիս Լենինյայի ընթերցողական տոմսը:

Գրադարանի հանրահայտության մասին էր խոսում հետևյալը թիվը՝ 2,1 հազար տեղանոց ընթերցասրահներում օրական լինում է մինչև 6-7 հազար ընթերցող: Ներկայումս ՌՊԳ այնքան էլ շատ ընթերցողներ չունի, չկան հանդերձարանների հայտնի հերթերը, քանի որ մոսկվացիների մեծ մասը համոզված է, որ Լենինյան փակ է վերանորոգման պատճառով:

Գրադարանի վերակառուցման և գրապահոցի կապիտալ վերանորոգման անհրաժեշտությունը վաղուց էր հասունացել: ՌՊԳ-ի գրապահոցի շենքը դեռ 1941 թվականին է կառուցվել: Գրադարանին հիմնական վերանորոգման համար վաղուց ի վեր գումար չէին տրամադրել: Գրադարանի էլեկտրացանցում լարումը 110 վոլտ էր, էլեկտրալարն անընդհատ վթարվում էր, օդափոխության մասին խոսք անգամ լինել չէր կարող: Ջերմաստիճանի անկումները հսկայական էին: Ամռանը գրապահոցում անտանելի շոգ էր՝ +35-40, իսկ ձմռանը ջերմաչափը հասնում էր +8-9: Տանիքը կաթում էր, այդ պատճառով անձրևի կամ հալոցքի ժամանակ ջրի հոսքերը վերածվում էին փոքր ջրհեղեղների: Հրդեհային անվտանգության համակարգի փոխարեն դարակների ուղղությամբ դրված էին սովորական կրակմարիչներ: Այնպես որ ֆրանսիական կառավարության կողմից տրված վարկը ՌՊԳ-ի վերակառուցման համար գրադարանավարներն ընդունեցին որպես երկնային մանանա: Ընդ որում Լենինյայի տնօրինությունը որոշեց վերակառուցման համար գրադարանը չփակել:

2000 թվականի հուլիսին գրադարանը դադարեց սպասարկել ընթերցողներին և սկսվեց հիմնական ֆոնդերի գրապահոցի հիմնական վերանորոգումը: Գրքերը դուրս չէին բերվում, դա յուրահատուկ որոշում էր. սովորաբար երբ Ազգային գրադարանում սկսվում է

վերանորոգում, ապա նրա բոլոր ֆոնդերը տեղափոխվում են այլ տեղ և գրադարանը մի քանի տարով փակում են: ՌՊԳ-ում վերակառուցումն ընթանում էր «գրքերի ներկայությամբ»: Դարակները փաթաթեցին հատուկ ջրակայուն, կրակադիմացկուն կտորներով, դա հնարավորություն տվեց ընթերցողների համար արագ վերաբացել մի քանի վերանորոգված սրահներ: «Մարդիկ չէին հասկանում, եթե մենք գնայինք ընդունված ծանապարհով, ապա գրադարանը ամբողջովին և ընդմիջտ կփակվեր», - նշում է ՌՊԳ-ի գլխավոր հիմնական ֆոնդերի պահպանման բաժնի վարիչը: Լենինկայի ղեկավարությունը հույս ունի, որ արդեն հաջորդ տարվա ընթացքում 19 օթյականոց մասնաշենքը կվերանորոգվի: Հաջորդ դա այն տեղամասն է, ուր հավաքված են պարբերականները:

Հիմնական ֆոնդերի վերանորոգված պահոցն այժմ զինված է տեխնիկայի վերջին խոսքով՝ կրակմարման վերջին համակարգով, օդափոխիչներով, որոնք ապահովում են գրքերի կողմից «սիրված» հիմնական ջերմաստիճանը՝ +18-20, մաև գրքերի պատվիրման համակարգչային համակարգը: Լենինկան աստիճանաբար «թղթային» համակարգից անցնում է «էլեկտրոնայինի»: Արդեն բազմաթիվ գրքեր կարելի «թերթել» ինտերնետ սայթում: Իսկ որոշ ժամանակ հետո ընթերցողները կսկսեն լրացնել ոչ թե թղթային պահանջներ, այլ՝ էլեկտրոնային «ֆորմուլյարներ»: Հիմնական ֆոնդի գրքերի մի մասը բացի սովորական դարականիչից, այժմ ունի մաև բարկոդ, շտրիխկոդի մանակը, որոնցով գրքերը մատակարարվում են գրախանութներին: Հետագայում բոլոր ընթերցողական տոմսերը կփոխարինվեն պլաստիկ «ընթերցողական» քարտերով: Դրանց վրա կգրանցվեն ընթերցողի և նրան տրված գրքերի մասին տեղեկատվություն: Նաև գրքային գողերի դեմ պայքարելու համար գրադարանի ելքի մոտ կդրվեն հատուկ սարքեր, որոնք կարծազանքեն «կողավորված» հատորները: Այժմ, չնայած կիրառվող անվտանգության միջոցներին, որոշ գրքեր Լենինկայից անհետանում են: Սակայն ամենից շատ տուժում են էջերը, քանի որ մեկ տարվա ընթացքում ընթերցողներն իրենց հետ տանում են տասնյակ հազարավոր պոկած էջեր: Միակ խնդիրը, որը չի լուծի ոչ վերանորոգումը և ոչ էլ ամբողջ Լենինկայի համակարգչացումը՝ տեղի պակասն է: Այսինքն՝ գրադարանի ընդհանուր **130 հազար քմ** ներկայիս տարածքին անհրաժեշտ է հավելել ևս 65-70 հազար քմ, որպեսզի գրքային պաշարները տեղաբաշխվեն բարվոք և դյուրօգտագործելի պայմաններում:

Ըստ ռուսական մամուլի նյութերի
պատրաստեց Անահիտ Ավագյանը

ԱՆԱԴԻՏ ԱՎԱԳՅԱՆ

ՌԻՍՈՒՑՉՈՒԴԻ, «ՄԽԻԹԱՐ ՍԵԲԱՍՏԱՑԻ» ԿՐԹԱԶԱՄԱԼԻՐ

ՆԱԽԱԳԱՐԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

ԱՄՆ-ի առաջին նախագահ Ջ. Վաշինգտոնն իր լիազորությունների ժամկետի ավարտից հետո 1797թ. դուրս բերեց իր պաշտոնավարության ութ տարվա ընթացքում կուտակված նախագահական արխիվը: Այդպես դրվեց ավանդույթի սկիզբը՝ բոլոր նախագահական փաստաթղթերը համարել պաշտոնաթող ղեկավարների սեփականությունը: 19-րդ դարի ընթացքում նախագահական փաստաթղթերի որոշ հավաքածուներ ձեռք էին բերվում հենց տերերից դաշնային կառավարության կողմից և պահպանվում էին պետական դեպոզիտում: 1903թ. այդ թղթերի սեփականատերը դարձավ ԱՄՆ Կոնգրեսի գրադարանը: Սակայն մինչ այժմ ԱՄՆ առաջին 29 նախագահների փոստաթղթերը պահվում են ոչ թե մեկ տեղում, այլ սփռված են ամբողջ երկրով մեկ՝ տեղական արխիվներում և համալսարանական գրադարաններում: Նշենք, որ 18-19 դարերի ԱՄՆ ոչ բոլոր նախագահների փաստաթղթերն են հասել մեզ, քանի որ որոշ՝ նախկին նախագահներ իրենց պաշտոնական և անձնական թղթերի մի մասը բաժանում էին որպես հուշանվեր, որոշ մասն էլ այրում էին կամ էլ արտագրում էին խեղաթյուրելով դրանց պատմական բովանդակությունը:

20-րդ դարում իրավիճակը փոխվեց, երբ երկրորդ ժամկետով ընտրված ԱՄՆ նախագահ Ֆ. Ռուզվելտն իր առջև նպատակ դրեց ստեղծել սեփական նախագահական գրադարան: Նրա հայրենի քաղաքում՝ Յայդ-պարկում, ստեղծվեց մասնավոր կոմիտե հատուկ շինության կառուցման համար միջոցների ձեռքբերման համար: Ռուզվելտը խնդրանքով դիմեց Կոնգրեսին, այդ գրադարանին տալ իր փաստաթղթերը որպես ազգային արխիվի նվիրատվություն, այն պայմանով, որ նրա գործունեությունը հետագայում կֆինանսավորվի պետության կողմից: 1903 թ. օրենսդիրները համաձայնվեցին, իսկ 1946թ.

ԱՄՆ-ում բացվեց առաջին նախագահական գրադարանը՝ Ֆրանկլին Դելանո Ռուզվելտի գրադարանը:

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո նախագահ Ռուզվելտի նախաձեռնությամբ շարունակություն ունեցավ և 1955թ. Կոնգրեսն ընդունեց նախագահական գրադարանների մասին օրենք: Այդ ժամանակից ի վեր պաշտոնաթող նախագահների բոլոր պետական և անձնական փաստաթղթերը, նրանց կյանքի ու գործունեության հետ կապված այլ նյութեր հանձնվում են ոչ թե Ազգային արխիվի կամ Կոնգրեսի գրադարանի կենտրոնական գրապահոցին, այլ փոխանցում են այդ նպատակի համար ստեղծված գրադարանների և թանգարանների պահպանմանը: Վերջիններս կառուցում են նախկին նախագահների հայրենիքում ըստ ցանկության այն տեղերում, ուր անցել են ապագա նախագահների մանկությունն ու պատանեկությունը, որտեղ նրանք սովորել են կամ սկսել են իրենց գործունեությունը: Նախագահական գրադարանների ստեղծման նպատակն է պատմական նյութերի հավաքումն ու պահպանումը, կապված ԱՄՆ նախագահների կյանքի ու գործունեության հետ:

20-րդ դարի ամերիկյան պատմության կարևորագույն արխիվային փաստաթղթերի գրադարան- գրապահոցների կառույցի համար նախատեսված միջոցները տրվում են հիմնականում ոչ պետական ֆոնդերից և մասնավոր անձանց կողմից: Շինարարության ավարտից հետո գրադարանները պատկանում են պետությանը և այդպիսով դառնում են Միացյալ Նահանգների կառավարության սեփականությունը: Երկրի ողջ տարածքով սփռված և բոլոր անհրաժեշտ ծառայություններով զինված նախագահական գրադարաններն իրենց ներսում համատեղում են արխիվային, թանգարանային գրադարանային ֆունկցիաներ, ամենից առաջ նաև գրավոր ակունքների հարուստ պահոց՝ պետական և անձնական փաստաթղթեր, այլ պատմական նյութեր (աուդիոփաստաթղթեր, ֆիլմեր, լուսանկարներ, նախընտրական շրջանի քարոզչական նյութեր, նվերներ, անձնական օգտագործման առարկաներ), կապված ամերիկյան վարչակազմի գործունեության հետ: Նաև տպագիր արտադրանք և համապատասխան դարաշրջանին վերաբերող թանգարանային նշանակություն ունեցող առարկաներ:

Գրադարանների կազմակերպման հիմնական սկզբունքները և արխիվային նյութերի ուսումնասիրողների մուտքը կանոնակարգվում է հիմնականում երեք օրենքներով՝ 1955թ. նախագահական գրադարանների մասին, 1978թ. նախագահական փաստաթղթերի մասին և 1966թ. տեղեկատվության ազատության մասին օրենքներով: 1970թ. նախագահական փաստաթղթերի մասին օրենքն ընդարձակեց նախագահական փաստաթղթերի և նյութերի պահպանման մասին օրենքի պահանջները և ԱՄՆ կառավարությունը դարձավ դրա լիարժեք սեփականատերը: 1986թ. Կոնգրեսն ընդունեց ևս մեկ օրենք նախագահական գրադարանների մասին, այս անգամ նվազեցնելով պետության պատասխանատվությունը նախագահական գրադարանների ապագայի հանդեպ: Օրենքը պահանջում էր, որպեսզի գրադարանաշինությամբ զբաղվող կազմակերպությունները ստեղծեն հատուկ ֆոնդեր, որոնց միջոցով կիրականացվեր նրանց ընթացիկ ֆինանսավորումը: 1989թ. վերջնականապես ուժի մեջ մտավ նախագահական փաստաթղթերի մասին օրենքը, որի համաձայն նախագահի, փոխնախագահի կամ աշխատակազմի աշխատակիցների փաստաթղթերը, հանդիսանում են ոչ թե Սպիտակ տան ղեկավարի անձնական սեփականությունը, այլ պատկանում են Միացյալ Նահանգների կառավարությանը:

Յուրաքանչյուր գրադարանի տարածքում գործում է թանգարան, որը ցուցադրում է նախագահի կենսագրության հիմնական շրջանները և նրա գլխավորած վարչակազմի ձեռքբերումները: Նախագահական գրադարանների և թանգարանների աշխատակիցները մեծ աշխատանք են տանում պատմական գիտությունների ժողովրդականացման գործում մշակում են հատուկ կրթական ծրագրեր, որոնք թույլ են տալիս ավելի լավ ուսումնասիրել և հասկանալ այս կամ այն նախագահի անհատականությունը, ԱՄՆ-ում նախագահական ինստիտուտը և ամերիկյան քաղաքական համակարգն ամբողջությամբ: Գրադարանների մեծ մասը գտնվում է ֆինանսական խոշոր արդյունաբերական, մշակութային կենտրոններից բավականին հեռու և գործում է Ամերիկայի ոչ մեծ գավառական քաղաքներում: Դա գրադարաններին տալիս է հատուկ գրավչություն և անկրկնելիություն:

Յերբերտ Յուվերի գրադարանը վերջին տարիներին վերածվել է 20րդ ԱՄՆ պատմության ուսումնասիրման կենտրոնի: Նրա ֆոնդերում ներկայացված են ոչ միայն Յուվերի փաստաթղթերը, այլ նաև տնտեսական քաղաքականությանը, ատոմային էներգիային, կանանց շարժմանը և նրանց խնդիրներին, ԱՄՆ-ում պահպանողական մամուլի զարգացմանն առնչվող նյութերը: Գրադարանից ոչ հեռու գտնվում է այն տունը, որտեղ ծնվել է նախագահը, ինչպես նաև Յ. Յուվերի ու նրա կնոջ գերեզմանը:

Ֆրանկլին Ռուզվելտի գրադարանը բացվել է 1946թ. մայիսի 1-ին, նրա մահվանից մեկ տարի անց: Դա ԱՄՆ-ում առաջին նախագահական գրադարանն էր: Արդեն 1951թ

փաստաթղթերն ամբողջովին համակարգված էին: Դրանց մեջ կան ԱՄՆ արտաքին քաղաքականության, երկրորդ համաշխարհային պատերազմի պատերազմական գործողությունների մասին նյութեր: Գրադարանում պահպանվում է 17 միլիոն էջ փաստաթուղթ, այդ թվում՝ նրա ընտանիքի անդամների, կնոջ՝ Էլեոնորա Ռուզվելտի, ինչպես նաև ֆինանսների նախարարի, նախագահի օգնականի և այլ աշխատակիցների փաստաթղթերը: Ուշագրավ է գրքային ֆոնդը, որը կազմում է 44000 հատոր, որից 15 հազարը նախագահի անձնական գրադարանի գրքերն են: Նշանակալի են դրոշմանիշների և ծովային հուշանվերների մեծ հավաքածուն, 130000 լուսանկարները, նրա ելույթների ձայնագրությունները: Գրադարանին կից գործում է տուն-թանգարանը:

Դուայթ Էյզենհաուերի գրադարանը բացվել է 1962թ., որի ֆոնդերում պահպանվում են երկրորդ համաշխարհային պատերազմի շրջանի հազվադեպ փաստաթղթերը, Եվրոպայում երկրորդ ճակատ բացելու մասին նախապատրաստական և այլ նյութերի հարուստ հավաքածուն:

Ռիչարդ Նիքսոնի գրադարանը բացվել է 1990թ. հուլիսի 19-ին: Սա բոլոր նախագահական գրադարաններից միակն է, որը ֆինանսավորվում է ոչ թե դաշնային բյուջեից, այլև բարեգործական ֆոնդերից: Հավաքածուն իր մեջ ներառում է Ռ. Նիքսոնի անձնական փաստաթղթերը, նրա ձեռագիր նյութերը, 3000 գիրք, 19000 լուսանկար, 200 ֆիլմ, 900 ձայնագրություն: Գրադարանի հարևանությամբ գտնվում է այն տունը, որտեղ 1913թ ծնվել է Ռ. Նիքսոնը:

ԱՄՆ մյուս նախագահների գրադարանների մասին մանրամասն տեղեկություններ ստանալու համար կարելի է օգտվել նրանց էլեկտրոնային հասցեներից:

1. Զերբերտ Հուվերի գրադարան - (Herbert Hoover Library, Էլ. փոստ library@hoover.nara.gov), Այովայի նահանգ
2. Ֆրանկլին Դ. Ռուզվելտի գրադարան - (Franklin Delano Roosevelt Library, Էլ. փոստ library@roosevelt.nara.gov), Նյու-Յորք
3. Հարրի Ս. Տրումենի գրադարան - (Harry S. Truman Library, Էլ. փոստ library@truman.nara.gov), Միսսուրի նահանգ
4. Դուայթ Դ. Էյզենհաուերի գրադարան - (Dwight D. Eisenhower Library, Էլ. փոստ library@eisenhower.nara.gov, Կանզաս նահանգ
5. Ջոն Ֆ. Քենեդիի գրադարան - (John Fitzgerald Kennedy Library, Էլ. փոստ library@kennedy.nara.gov, Բոստոն, Մասաչուսեթսի նահանգ
6. Լինդոն Բ. Ջոնսոնի գրադարան - (Lyndon Baines Johnson Library, Էլ. փոստ library@Johnson.nara.gov, Տեխասի նահանգ
7. Ռիչարդ Ս. Նիքսոնի գրադարան - (Richard Nixon Library. 18001 Yorba Linda Boulevard. Yorba Linda. California 92886), Կալիֆոռնիայի նահանգ
8. Ջերալդ Ռ. Ֆորդի գրադարան - (Gerald R. Ford Library, Էլ. փոստ library@fordlib.nara.gov, Անն-Արբոր և Գրանդ-Ռապիդս, Միչիգանի նահանգ
9. Ջիմմի Քարթերի գրադարան - (Jimmy Carter Library, Էլ. փոստ library@carter.nara.gov, Ատլանտա, Ջորջիա նահանգ
10. Ռոնալդ Ռ. Ռեյգանի գրադարան - (Ronald Reagan Library, Էլ. փոստ library@reagan.nara.gov, Սիմի-Քելի, Կալիֆոռնիա նահանգ
11. Ջորջ Բուշի գրադարան - (George Bush Presidential Library, Էլ. փոստ library@bush.nara.gov, Քոլեջ-ՍթեյՋեն, Տեխասի նահանգ

Նախագահական գրադարաններ հաճախում են ուսանողներ և դասախոսներ, գիտնականներ և ուսուցիչներ, լրագրողներ և իրավաբաններ, պետական և այլ ծառայողներ, ինչպես ամերիկացիներ, այնպես էլ արտասահմանյան քաղաքացիներ, որոնց գիտական կամ այլ հետաքրքրությունները պահանջում են արխիվային փաստաթղթերի

հետ աշխատանքը: Չկան ազգային, ռասայական, կրոնական, գաղափարական, տարիքային սահմանափակումներ: Նախագահական գրադարանները հազեցված են ժամանակակից տեխնիկայով: Նրանցից յուրաքանչյուրն իրենից ներկայացնում է պատմական, ժամանակակից և այլ ճարտարապետական կառույցների մի ամբողջ համալիր: ԱՄՆ-ում նախագահական գրադարանները վկայում են ոչ միայն այն մասին, որ ամերիկացիները հասկանում են իրենց պետության պատմական անցյալի պահպանման անհրաժեշտությունը:

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

*ՆԵՐՍԵՍ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
ՀԳՄ նախագահ*

ԳՐԱԴԱՐԱՆԱՎԱՐՆԵՐԻ ԳԼԽԱՎՈՐ ՏԱՐԵԿԱՆ ԺՈՂՈՎԸ

Օգոստոսի 18-23-ը Գլագոյուն (Շոտլանդիա) տեղի ունեցավ Գրադարանային միությունների և հաստատությունների միջազգային դաշնության (ԻՖԼԱ) խորհրդի 68-րդ նիստը և գլխավոր կոնֆերանսը:

Հատկանշական է, որ ժողովը տեղի էր ունենում այն երկրում, ուր մայրաքաղաք Էդինբուրգում 75 տարի առաջ հիմնադրվել էր ԻՖԼԱ-ն: Այն գրադարանային ամենահեղինակավոր և ազդեցիկ միջազգային կազմակերպությունն է, որն իր շարքերում ներկայումս միավորում է աշխարհի 157 երկրների գրադարանային միություններ, գրադարաններ և այլ կազմակերպություններ:

Հայաստանի գրադարաններն ի դեմս Հայկական գրադարանային միության, անդամակցում են ԻՖԼԱ-ին 1996թ.: Մեր միությունն ունի ազգային անդամի կարգավիճակ և քվերակություններին մասնակցում է 8 ծայրի իրավունքով: Միության մի քանի անդամներ ներգրավված են ԻՖԼԱ-ի զանազան կառույցներում և իրենց մասնակցությունն են բերում նրա գործունեությանը:

Գրադարանավարների գլխավոր տարեկան ժողովի աշխատանքներին մասնակցում էին 122 երկրների 4765 ներկայացուցիչներ: Ամենամեծ պատվիրակություններով ներկայացել էին տանտերերը, ԱՄՆ, Ռուսաստանի, Ֆրանսիայի, Յուգոսլավիայի, Չինաստանի, Գերմանիայի պատվիրակությունները: Կոնֆերանսին Հայաստանից մասնակցում էին երեք գրադարանային աշխատողներ, որոնցից երկուսի գործուղման ծախսերը հոգացել էր Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հայկական մասնաճյուղը, մեկ հոգի մասնակցում էր անգլիական կողմի տրամադրած դրամաշնորհով:

Շոտլանդիան ծննդավայրն է գրադարանների պատմության մեջ ամենանշանավոր և առատաձեռն նվիրատուի: 1881-1919 թթ. ԱՄՆ երկաթուղային մագնատ Էնդրյու Քարնեգին ֆինանսավորել է ավելի քան 2500 հանրային և 100-ից ավելի համալսարանական գրադարանների կառուցումը: Դրանցից 600-ը կառուցվել է Մեծ Բրիտանիայում: Էնդրյու Քարնեգիի ժառանգությանը նվիրված հատուկ սեմինարը տեղի ունեցավ նրա ծննդավայր Դանֆերմլինգում:

Կոնֆերանսին ներկայացվել էր ավելի քան 100 զեկուցում, որոնք մատչելի էին նաև ինտերնետ ցանցի միջոցով: Կոնֆերանսի օրերին անգլերեն, ֆրանսերեն, իսպաներեն, գերմաներեն և առաջին անգամ նաև ռուսերեն լեզվով լույս տեսավ ամենօրյա տեղեկագիրը: Ներկայացված զեկուցումների մեծ մասը մատչելի էին ԻՖԼԱ բոլոր հինգ պաշտոնական լեզուներով:

ԻՖԼԱ խորհուրդը կոնֆերանսի ընթացքում զումարեց երկու նիստ: Ընդունվեց կազմակերպչական հարցերի վերաբերյալ երեք որոշում: Այս տարվա ԻՖԼԱ ընդունած գլխավոր բանաձևը «Ինտերնետի վերաբերյալ ԻՖԼԱ-ի հռչակագիր»-ն էր, որը միաձայն ընդունվեց ԻՖԼԱ խորհրդի կողմից օգոստոսի 23-ի նիստում: Քննարկվող ամենասուր խնդիրը, սակայն ԻՖԼԱ անդամավճարների հարցն էր: Անդամավճարների չափը սահմանվում է տվյալ երկրի ՅՈՒՆԵՍԿՈ-ին վճարվող անդամավճարի մեծությամբ: Օրինակ, Ռուսաստանյան գրադարանային միությունը տարեկան վճարում է 21 հազար դոլարին համարժեք անդամավճար: Ուկրաինայի գրադարանային միությունը չկարողանալով վճարել տարեկան մոտավորապես 6 հազար դոլար ներկայումս դուրս է մնացել ԻՖԼԱ կազմից:

Կոնֆերանսի փակման արարողությանը հրապարակվեցին ԻՖԼԱ 2002 թ. մրցանակակիրների անունները, ինչպես նաև 2007 թվականի ԻՖԼԱ կոնֆերանսների անցկացման վայրը: Հարավ-Աֆրիկյան Հանրապետության գրադարանային աշխատողները ցնծությամբ և գոհունակությամբ ընդունեցին իրենց ծովափնյա Դուրբան քաղաքի ընտրությունը:

Կոնֆերանսի ընթացքում կազմակերպվում են գրադարանային պիտույքների, գրքերի, համակարգիչների և համակարգչային ծրագրերի ցուցահանդեսներ, որտեղ հարյուրավոր գործարքներ են կնքվում: Գործում էր ցուցահանդեսի 114 տաղավար: Գրադարանային ավտոմատացման և կահավորման միջոցներով, տարբեր հրատարակություններով

ցուցադրություններ էին կազմակերպել Բրիտանական գրադարանը, ԻՖԼԱ-ն, Ամերիկյան գրադարանային միությունը, Ջաուր և Գեյլ, Բաուկեր, Ուիլսոն, ԷԲՍԿՈ հրատարակչությունները և ուրիշներ: Առաջին անգամ ԻՖԼԱ-ի շրջանակում կազմակերպվել էր ավտոգրադարանների ցուցադրություն: 39 «անիվների վրա գրադարան» էր ժամանել Եվրոպայի երկրներից: Կոնֆերանսի օրերին ստորագրված ամենախոշոր գործարքներից էր Նիդերլանդների ազգային գրադարանի և Էլզեվիր հրատարակչա-տեղեկատվական ընկերության միջև կնքված թվայնացման պայմանագիրը, որով նախատեսվում է արխիվացնել մոտ 1500 գիտական հանդեսների բովանդակությունը և այն մատուցել համացանցի օգտվողներին **սայրնսդիրեքս** շտեմարանի միջոցով:

Կոնֆերանսի կազմակերպումը զբոսաշրջիկների զգալի հոսք է ապահովում: Հրապարակվեց, որ Գլազգոյի քաղաքապետարանի բյուջեն միայն այս կոնֆերանսից ակնկալում է ստանալ ավելի քան 5 միլիոն դոլարի եկամուտ:

ԻՖԼԱ 69-րդ տարեկան ժողովը տեղի կունենա Բեռլինում 2003 թ. օգոստոսի 1-8-ը:

ՆԵՐՍԵՍ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՀԳՄ նախագահ

ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐԻ ԴԵՐՈ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Հայաստանի Ամերիկյան համալսարանում 2002թ. սեպտեմբերի 27-30-ը տեղի ունեցավ գրադարանային տարածաշրջանային գիտաժողով, որին մասնակցում էին ԱՄՆ-ի, Ադրբեջանի, Հայաստանի և Վրաստանի գրադարանային և համալսարանական պատվիրակությունները: Այս միջոցառումով Ամերիկյան գրադարանային միությունը «Քարնեգի» հիմնադրամի ֆինանսական աջակցությամբ Երևանի, Բաքվի և Թբիլիսիի պետական համալսարանների, ինչպես նաև Հայաստանի, Ադրբեջանի և Վրաստանի գրադարանային միությունների հետ սկսեց երկու տարի տևողությամբ (սեպտ. 2002 - սեպտ. 2004) ծրագիր. «Աջակցություն քաղաքացիական հասարակությանը. Հարավային Կովկասի համալսարանական գրադարաններից օգտվելու բարելավում» ընդհանուր թեմայով:

Գիտաժողովին մասնակցում էին 7 գրադարանային աշխատող Միացյալ Նահանգներից, 10-ական ներկայացուցիչ Հարավային Կովկասի յուրաքանչյուր երկրից: Հետխորհրդային ժամանակաշրջանում առաջին անգամ Հայաստանում կազմակերպված միջոցառմանը ներկա էին նաև Ադրբեջանի գրադարանային աշխատողները:

Խորհրդաժողովի բացմանը ողջույնի ելույթներ ունեցան Հայաստանում ԱՄՆ փոխդեսպան Վիվիեն Ուոլքերը, ԵՊՀ ռեկտոր, ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանը, ՀՀ ԱԺ կրթության, գիտության և մշակույթի հանձնաժողովի նախագահ Շավարշ Քոչարյանը, Հայաստանի ամերիկյան համալսարանի ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Ջորջ Ջաքարը և ուրիշներ:

Ծրագրի նպատակն է Հարավային Կովկասի երկրների համալսարանների գրադարանների միջև կապերի և համագործակցության հաստատումը, միջգրադարանային աբոնեմենտի և գրքափոխանակության ծրագրերի հաստատումը, աջակցությունը փաստաթղթերի էլեկտրոնային բաժանորդագրությանը և տարածմանը:

Խորհրդաժողովը հնարավոր եղավ կազմակերպել շնորհիվ անցյալ մի քանի տարիներին Երևանում և Թբիլիսիում անցկացված գրադարանային գիտաժողովների: Նախկինում Հարավկովկասյան գրադարանային հանդիպումներ են եղել կազմակերպվել Երևանում (մայիս 1997), Թբիլիսիում (հունիս 1998, ապրիլ 1999, մայիս 2001):

Գիտաժողովի աշխատանքները վարում էին Ամերիկյան գրադարանային միության փորձառու և միջազգային ճանաչում ունեցող մասնագետները, այդ թվում՝ ԱԳՄ նախկին նախագահ Էն Սայմոնսը, Չիկագոյի համալսարանի գրադարանի տնօրեն Նենսի Ջոնը, Ֆլորիդայի Ատլանտիկ համալսարանի գրադարանի տնօրեն Բիլ Միլլերը և ուրիշներ: Ամերիկյան պատվիրակության կազմում Երևան էր ժամանել նաև ՀԳՄ պատվավոր անդամ Սիլվա Մանուկյանը:

Ներկայումս Հայկական գրադարանային միությունը Վրաստանի և Ադրբեջանի գործընկեր միությունների հետ իրականացնում է «Կովկաս» գրադարանավարների վերապատրաստման կենտրոնների» ծրագիրը, որը ֆինանսավորվել է «Եվրասիա» հիմնադրամի Հարավային Կովկասի երկրների տարածաշրջանային համագործակցության ծրագրի շրջանակում: 2000-2002թթ. Թբիլիսիում, Բաքվում և Երևանում կազմակերպվել են գրադարանային աշխատողների վերապատրաստման տարբեր դասընթացներ:

Տպագրության է պատրաստվել «Գրադարանների ուղեցույց և ով ով է Հարավային Կովկասի գրադարաններում» տեղեկատու ռուսերեն և անգլերեն լեզուներով:

Խորհրդատվական մասնակցում էին Ամերիկյան գրադարանային միության, Վաշինգտոնի Կոնգրեսի գրադարանի, Հարավային Կովկասի երկրների պառլամենտական, համալսարանական և ակադեմիական գրադարանների ներկայացուցիչներ: Նրանց համար կազմակերպվեցին նաև գրադարանային և մշակութային այցելություններ: Գիտաժողովի մասնակիցներից երեքը ներկա եղան նաև ՀԳՄ 7-րդ համագումարին:

ԳԵՎՈՐԳ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Գիտատեխնիկական գրադարանի Գյումրու

մասնաճյուղի տնօրեն

ՂՐԻՄ 2002

2002 թվականի հունիսի 8-16-ը Ղրիմի ինքնավար հանրապետության Սուդակ քաղաքում անցկացվեց 9-րդ միջազգային գիտաժողովը «Գրադարանները և ասոցիացիաները փոփոխվող աշխարհում, նոր տեխնոլոգիաներ և համագործակցության նոր ձևեր» խորագրի ներքո: Գիտաժողովը տարեց-տարի ավելի ներկայացուցչական է դառնում, որտեղ քննարկվում են հարցերի ավելի ընդգրկում շրջանակ:

Մասնակիցների թիվը մոտ 1300 էր, որոնք ներկայացնում էին տարբեր երկրների գրադարաններ, մշակույթի ոլորտի կազմակերպություններ, հրատարակչական գործի և էլեկտրոնային հրատարակությունների արտադրությամբ և վաճառքով զբաղվող ընկերություններ: Չնայած այս գիտաժողովը աշխարհագրական և ֆինանսական առումով ավելի մատչելի է Հայաստանի գրադարանային գործի աշխատողների մասնակցության համար, այնուամենայնիվ Հայաստանը պաշտոնապես ներկայացված չէր գիտաժողովում: Գիտաժողովի կազմակերպման հարցում խոշոր ներդրում ունի Ռուսաստանի պետական գիտա-տեխնիկական գրադարանը, որի աշխատակազմի ջանքերով գիտաժողովն անցավ շատ կազմակերպված և արդյունավետ, մասնակիցներին հնարավորություն տալով առավել օգուտ ստանալ հարցերի քննարկումից՝ համագործակցության նոր հնարավորություն տալով նրանց: Կազմակերպիչներից կարելի է շեշտել նաև Ռուսաստանի Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի ներդրումը, որն իր բազմաթիվ ծրագրերով ոչ միայն գիտաժողովի ակտիվ կազմակերպիչներից և մասնակիցներից մեկն էր, այլև իր վրա էր վերցրել մասնակիցների շուրջ 10%-ի ֆինանսավորումը:

Գիտաժողովի աշխատանքներն ընթանում էին միաժամանակ 14 մասնաճյուղերում, որոնք բոլորն էլ շատ արդիական և անմիջական կապ ունեին XXI-ի դարի գրադարանային խնդիրների և պրոբլեմների հետ: Կարելի է նշել հատկապես մի քանի մասնաճյուղերի աշխատանքները, որոնք չափազանց այժմեական են նաև մեր հանրապետությունում՝

- Միջազգային տեղեկատվական համակարգ և միջազգային համագործակցության
- Իրավաբանական և բիզնես տեղեկատվություն
- Գրադարանային ավտոմատ համակարգեր և տեխնոլոգիաներ
- Ցանցային տեխնոլոգիաներ, մուլտիմեդիաներ և ինտերնետը գրադարաններում
- Գրադարանային կադրեր, կրթություն և մասնագիտություն

Գիտաժողովի աշխատանքներն ուղեկցվում էին տարբեր թեմաներով ացկացվող սեմինարներով և հանդիպումներով:

Գիտաժողովի կարևոր բաղկացուցիչներից մեկը ցուցահանդեսն էր, որտեղ իրենց արտադրանքն ու ծառայություններն էին ներկայացնում շուրջ երեք տասնյակ ընկերություններ և կազմակերպություններ, որոնք զբաղվում են գրահրատարակչությամբ, էլեկտրոնային հրատարակություններով, բաժանորդագրության կազմակերպմամբ, գրադարանային կրթությամբ և այլ աշխատանքներով:

Ղրիմ 2002 գիտաժողովի մասին ավելի մանրամասն տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել Հանրապետական գիտատեխնիկական գրադարանի Գյումրու բաժանմունք infolib@web.am էլեկտրոնային փոստի հասցեով:

ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Իտալիա: Երկրում կա ավելի քան 15 հազ. տարբեր տիպի գրադարան: Համաձայն 1972 թ. ընդունված օրենսդրության երկրի հանրային նշանակության գրադարանների ղեկավարությունը հանձնվել է տեղական իշխանության մարմիններին: Երկրի կենտրոնական կառավարության ենթակայության ներքո գործում է ընդամենը 48 գրադարան, այդ թվում երկուսը ազգային: Իտալիայում կա ավելի քան 6 հազար հանրային գրադարան, որոնց միացյալ գրքային ունեցվածքը կազմում է մոտ 100 միլիոն միավոր: Նրանց միացյալ ֆոնդերը տարեկան ավելանում են մոտ չորս միլիոնով: Հանրային գրադարանները տարեկան սպասարկում են ավելի քան յոթ միլիոն ընթերցողի, որոնց սպասարկվում է ավելի քան 45 միլիոն միավոր գրականություն: Գրադարանների մեծամասնությունը աշխատում է շաբաթը 40-60 ժամ: Բնակչության գրքապահովվածությունը կազմում է յուրաքանչյուր շնչին 2-3 միավոր: Տարեկան յուրաքանչյուր 1000 բնակչի համար հանրային գրադարանը ձեռք է բերում 200-250 միավոր նոր գիրք և 10-15 անուն պարբերական հրատարակություն: Գրադարաններում բավական խիստ է հեղինակային իրավունքների պահպանության խնդիրը: Վաճառքում եղած գրքերը գրադարանում թույլատրվում է պատճենել գրքի ծավալի 15 տոկոսից ոչ ավելի:

Իսպանիա: Երկրի ներկայիս վարչատարածքային կառուցվածքը հաստատվել է 1978 թ. սահմանադրությամբ, ըստ որի երկիրը բաժանված է 17 նահանգների: Երկրում կա 2579 հանրային գրադարան և 5101 տաքսակետ: Մեկ բնակչի միջին գրքապահովվածությունը կազմում է 0,88 միավոր: Գրադարանների մեծ մասը աշխատում են օրը 8 ժամից պակաս ծանրաբեռնվածությամբ: Գրադարանների 29%-ը աշխատում է օրական մինչև 10 ժամ, 32%-ը՝ 10-20 ժամ, 28%-ը՝ 20-40 ժամ, 11%-ը՝ 40 և ավելի ժամ: 2002թ. երկրում համակարգչացված էր 862 հանրային գրադարան: Երկրի ազգային գրադարանը հիմնադրվել է 18-րդ դարի սկզբին Ֆիլիպ V թագավորի գահակալության շրջանում: Գրադարանի ներկա լիազորությունների, իրավունքների ու պարտականությունների շրջանակը սահմանված է 1991 թ. հոկտեմբերի 31-ի արքայական հրամանագրի համաձայն: Գրադարանը ղեկավարում է գլխավոր տնօրենը: Հիմնական ղեկավար և խորհրդատու մարմինը *Ռեալ Պատրոնատոն* է, բաղկացած թագավորից և թագուհուց իբրև պատվավոր նախագահ, տասնմեկ պատվավոր անդամից և մինչև 15 ընտրովի անդամներից: Գրադարանի կառուցվածքը բաժանվում է երեք մասի, որոնք ղեկավարում են գործունեության առանձին ուղղություններ: Գրադարանի մասին մանրամասն տեղեկություններ կարելի է ստանալ նրա ինտերնետային էջից (տես www.bne.es):

Լատվիա: Ազգային գրադարանը հիմնադրվել է 1919 թ-ին: Ներկայումս նրա գրապաշարները կազմում են 5.1 միլիոն միավոր: Գրադարանի հարստությունն են կազմում մոտ 5000 միավոր հնատիպ, մոտ 18.000 միավոր ձեռագիր, 57.000 միավոր լետոնիկա, նոտային, լուսանկարների ու գրաֆիկայի և այլ հավաքածուները: 2002 թ. հունիսին Լատվիայի պառլամենտը հաստատել է ազգային գրադարանի նոր շենքի կառուցման ծրագիրը: Գրադարանի շինարարությունն իրականացվում է ՅՈՒՆԵՍԿՕ-ի փորձագետների միջազգային հանձնաժողովի հսկողությամբ, որը խորհրդատվություն է իրականացնում գրադարանի կառուցման տեխնիկական, դիզայնի և ֆինանսավորման հարցերով: Գրադարանի մասին լրացուցիչ տեղեկությունների համար խորհուրդ ենք տալիս այցելել նրա ինտերնետային էջը՝ www.lnb.lv

Սինգապուր: Այս երկրի ազգային գրադարանը բնութիվով նաև կենտրոնական հանրային գրադարան է, որի համակարգում գործում է հանրային գրադարանների ցանց: Գրադարանի աշխատանքը վերահսկում և ղեկավարում է Ազգային գրադարանի խորհուրդը: Ներկայումս կառուցվում է գրադարանի գերթամանակակից մասնաշենքը: Այն երկու ապակեպատ շենքերից բաղկացած համալիր է, որոնք իրար են միանում օդային կամուրջների միջոցով: Ավելի ընդարձակ շենքում գրապահոցի տարածքն է, իսկ շենքի տանիքին նախատեսված են ժամանցի և հանգստի, հասարակական միջոցառումների գոտիներ: Շենքի շինարարության ընթացքին կարելի է հետևել ինտերակտիվ վեբ տեսախցիկով (տես): Գրադարանի նորակառույց մասնաշենքի բացումը նախատեսվում է 2004 թ-ին:

ՀՈՒՄԱՆԻՏԱՐԱՆԿԱՆ

ԱՆԱԴԻՏ ՄՈՒՐԱԴՅԱՆ

Հայաստանի Ազգային գրադարանի
գլխավոր գրադարանավար

ՀԱՅ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ԵՐԱՆՏԱՎՈՐՆԵՐԻՑ. ՏԻԳՐԱՆ ՍԱՎԱԼԱՆՅԱՆ

Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց վանքում հայկական (Երուսաղեմում առաջինը) տպարանը բացվել է ծայրագույն կառավարիչ Պողոս Ադրիանուպոլսեցու հովանավորությամբ, Միաբանական ժողովի որոշմամբ 1832թ. «ի պարծանս ազգիս հայոց»: Իսկ առաջին հայերեն գիրքն այստեղ տպագրվել է մեկ տարի անց՝ 1833թ-ին: Նախաձեռնողն է եղել պատրիարք Ջաքարիա Տեր-Պետրոսյանը: Գիրքը կոչվում է «Տետրակ աղօթամատոյց վասն ջերմեռանդ աղօթասիրաց որք կամ անձամբ և կամ մտօք ներկայանան ի Ս. տնօրինական տեղիսն Քրիստոսի Աստուծոյ մերոյ»:

Ջաքարիային հաջորդում է Կիրակոս Երուսաղեմցի (1847), որը լինելով իր նախորդի գործակիցը և գաղափարակիցը, շարունակում է ծավալել տպարանի գործը: Կիրակոս պատրիարքը Ջմյուռնիայից Երուսաղեմ է հրավիրում Մեսրոպյան Վարժարանի նախկին աշակերտ, Էոտեմիչ քաղաքի Ազգային Վարժարանի դասախոս Տիգրան Սավալանյանին, որն իր ժամանակի լավագույն մտավորականներից ու ուսուցիչներից մեկն էր: 1848թ. Սավալանյանը ստանձնում է տպարանի աշխատանքի հսկողությունը և տպագրվելիք գրքերի սրբագրության գործը: Սուրբ Աթոռի տպարանից Սավալանյանի հսկողությամբ և ղեկավարությամբ հրատարակված գրքերից են Եփրեմ Խուրի Ասորու «Աղօթագիրքը» (1848), Իսահակ վարդապետի «Յովսեփայ Գեղեցիկի գրոյցքը» (1849, առաջին տպագր.), Պետրոս Բերդույանցի «Մեկնութիւն թղթոյն Պօղոսի առ Եփեսացիս»-ը (1850, առաջին տպագր.), Ջաքարիա Խոջենցի «Կտակգիր հոգեշահ բանից»-ը (1853, առաջին տպագր.), Ղերութնա Եղեսացու, Մատթեոս Ուռնայեցու և Միխայիլ Ասորու «Պատմութիւնները» հաջորդաբար՝ 1868, 1869 և 1871 թվականներին:

Իբրև ուսուցիչ Սավալանյանը մեծ նշանակություն էր տալիս պատանիների բարոյական դաստիարակությանը, գիտելիքների ձեռքբերմանը: Նրա հսկողությամբ լույս տեսած բազմաթիվ գրքերի նպատակն էր «թերուսումն համբակած և չգիտցող արանց» մտքի զարգացումը: Այդ նպատակն է հետապնդում նաև 1852թ. տպարանում նրա ղեկավարությամբ լույս տեսած Պողոս քին. Էոտեմիչցու «Հայելի վիրաց յորում ցուցանին յորութիւնք եօթանց մահացու մեղաց» գիրքը, որի կանխաբանության մեջ գրում է. «Գիտելով եթե զմնացորդս կերակրոց արանց կատարելոց ի չափ մտաց և հանձարոյ յիրաւանց անտի է թողուլ տղայոցն խակաց մտօք և բանի: Յայս դիտումն խորհրդոյ յեցեալ՝ մատուցանեմք ի լոյս գտոյն քերթած» (էջ 2):

1848թ. Սավալանյանը ստանձնում է վարժարանի տնօրինությունը, վերակազմում է կանոնադրությունը և դասացուցակում ավելացնում է քրիստոնեական վարդապետություն, աշխարհագրություն և դիցաբանություն առարկաները:

Ժառանգավորաց վարժարանում, ուր Սավալանյանը դասավանդում էր Հայկաբանություն, նրա ուսանողներից ապագայի նշանավոր դեմքեր են դառնում Եսայի պատրիարքը, Աբրահամ Եպիսկոպոսը՝ Շապինգարահիսարի առաջնորդը, Արիստակես Եպս. Դերձակյանը, Տիմոթեոս Եպս. Սափրիչյանը, Մաթևոս Եպս. Նազարյանը, Աստվածատուր Եպս. Տեր-Հովհաննիսյանը:

Կիրակոս պատրիարքի (1846-1850) հաջորդը՝ զմյուռնիացի Հովհաննես պատրիարքը (1850-1860) կասեցնում է Տիգրան Սավալանյանի գործունեությունը (Տ. Սավալանյան «Պատմութիւն Երուսաղեմի», Երուսաղեմ, 1931, էջ 1087-1089):

1856թ. բազմավաստակ մտավորական և «Երուսաղեմի Պատմության» հեղինակ Տիգրան Սավալանյանը հեռանում է Երուսաղեմից՝ Հովհաննես պատրիարքի «ընթացքից հուսահատված»:

1863թ. երկրորդ անգամը լինելով Երուսաղեմի Սբ. Միաբանությունը նամակով քախանձագին նրան հրավիրում է Սուրբ Աթոռ, և նա պատասխանում է հրավերին, քանի որ մտադիր էր գրել Երուսաղեմի պատմությունը, որը վաղուց էր սկսել և այնտեղ միայն կարող էր գրել ստուգագույն տեղեկությունները ուսումնասիրելով (Տ. Սավալանյան, Կենսագրական հուշեր, Կահիրե, 1900, էջ 43):

«Յօգուտ դպրոցականներու» իտալերենից թարգմանում է «Առաքինութեան ճամբան կամ մենտոր մանկանց և երիտասարդաց» և «Գիտութիւն զԱստուծոյ» գրքերը: Սավալանյանը 1866-1868 թթ. եղել է Երուսաղեմի Հայոց պատրիարքության պաշտոնաթերթ «Սիօն» ամսագրի առաջին խմբագիրը: Կազմել է Սրբոց Հակոբյանց վանքի ձեռագրերի ցուցակը, որոնց թիվը հասցնում է 1700-ի: Ապա կազմում է մեկ ուրիշ ցուցակ, որի մեջ հատորները նշանակված են հեղինակների և նյութերի այբբենական կարգով: Իր այս աշխատությունն ակնարկելով Սավալանյանը վանքի Մատենադարանի հ.95 ձեռագիր ճաշոցի հիշատակարանի վերջում ավելացրել է հետևյալ ինքնագիր հիշատակությունը. «Հուսք ուրեմն յիշեսցիք և զիս զՁմիւռնիացի վարժապետ Տ. Հ. Թ. Սավալանյանին, որ արարի զընդհանուր ցանկ մատենից թանգարանիս 1865-1876»:

Տիգրան Սավալանյանի աշխատանքի գլուխգործոցը համարվում է երկհատոր գրաբար գրված, Մեսրոպ Նշանյանի կողմից աշխարհաբարի թարգմանված «Պատմութիւն Երուսաղէմի» գիրքը (Երուսաղեմ, 1931): Թարգմանիչն իր զեկույցի մեջ ասում է, որ այդ աշխատության ձեռագիրը, որը պահվում էր վանքի Ձեռագրաց Մատենադարանում, տպագրելու փափագ կար վաղուց, սակայն նրա ընդարձակ ծավալը և տպագրական ծախսը պահանջում էին գրասեր մեկենասի օժանդակություն: Ազգային բարերար մեծանուն Պողոս Փաշա Նուբարը Մաղաքիա Օրմանյանի «Ազգապատմի» երրորդ մասի տպագրությանն օժանդակելուց հետո Բաբկեն եպս. Կյուլեսերյանի միջնորդությամբ հոգում է այս գրքի տպագրության ծախսը:

Սավալանյանը որպես աղբյուր, բացի ազգային պատմիչներից, ձեռքի տակ ունեցել է հիմնականում ֆրանսիացի Միշոյի «Խաչակիրների Պատմությունը» և եվրոպական լեզուներով եղած դիվանագիտական գրություններ, հին թղթակցություններ և Սուրբ Աթոռի ձեռագրերի հիշատակարաններ:

Մեծ է Սավալանյանի գործի հարգն ու արժեքը: Նա խղճմիտ պրպտումներով և Սուրբ Երկրի ու մասնավորապես Հայ Երուսաղեմի ազգային իրավունքների հանդեպ ունեցած սիրով ու նախանձախնդիր հոգով գրել է իր «Պատմությունը» առանց աչքից վրիպեցնելու ձեռքն անցած ոչ մի աղբյուր (եջ Ժ-ԺԱ): Հետաքրքիր են հատկապես 19-րդ դարի դեպքերի նկարագրությունները, որոնց մի մասի ժամանակակիցն ու ականատեսն է եղել հեղինակը:

Երուսաղեմի Սբ. Հակոբյանց վանքի տպարանը և գրապահոցը հանդիսանում է մի խումբ նվիրյալների կյանքի գործը. նրանց թվում է Տիգրան Սավալանյանը:

Թող օրինյալ լինի նրա գործը և հիշատակը:

ԲԱՆՏԻՄՐ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

Բանասեր, թատերագետ

ԳՐԱԿԱՆ-ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՆԿԻՐՅԱԼԸ

Գրքասեր մարդիկ շատ կան, անձնական գրադարաններ ունեցողներ նույնպես: Բայց այլ բան է գիրք ունենալն ու նրանից միայնակ օգտվելը, բոլորովին այլ բան այն հասարակության սեփականությունը, լայն մասսաներին մատչելի և օգտակար դարձնելը: Ավո Հովհաննիսյանն այն եզակի նվիրյալներից է, ովքեր գիրք և գրականությունը, ազգային արժեքները ծառայեցնում են հանընդհանուր նպատակների, դարձնում բոլորի սեփականությունը:

Ավո Հովհաննիսյանը նվիրվել է հանրօգուտ մի աշխատանքի, որի նպատակն է ազգային արժեք հանդիսացող ամեն տեսակի նյութերի ու առարկաների հավաքումը: Հիրավի, շնորհակալության արժանի մի նվիրյալ, որի գիտակցությունը քչերին է տրված:

Ավո /Ավետիք/ Սաքոյի Հովհաննիսյանը ծնվել է 1940 թվականի դեկտեմբերի 26-ին Նոր Ջուղայում: Սովորել է ծննդավայրի Հայոց ազգային կենտրոնական և «Հարաթի» պարսկական միջնակարգ դպրոցներում: Ծառայել է բանակում, քաղաքացիական գծով՝ ավիացիայում:

1972-ից Հովհաննիսյանն աշխատանքին զուգահեռ, ակտիվորեն մասնակցել է Նոր Ջուղայի հասարակական-մշակութային կյանքին, թատերա-երաժշտական ձեռնարկումներին: Նա զբաղվել է գրական, մշակութային, ազգագրական և այլ բնագավառների արժեք ներկայացնող նյութերի՝ գիրք, ձեռագիր, մամուլ, օրացույցներ, գրական-թատերական-երաժշտական-գեղարվեստական միջոցառումների ազդագրեր և ծրագրեր, հմայիլներ, ազգային տարազներ, անհատ անձնավորությունների և ճարտարապետական հուշարձանների լուսանկարներ, կենցաղային իրեր հավաքելով:

Երկար տարիներ ՅՈՒՆԵՍԿՕ-ի հավաքել է նաև Նոր Զուղայի հայոց գերեզմանատան տապանաքարերի արձանագրությունները ու մի ծավալուն ցուցակ կազմել այնտեղ հուղարկավորվածների «հասցեներով», թե ով որ շարքում կամ որտեղ է թաղված: Դժվարին մի աշխատանք, որը հեռու է սոսկ ցուցակ կոչվելուց, այն բանասիրական պրպտուն աշխատանքի գեղեցիկ և շնորհակալ գործ է: Ազգօգուտ այս աշխատանքում ՅՈՒՆԵՍԿՕ-ի դրել է իր նվիրվածությունը հայրենի արժեքների կորստից փրկելուն, մի հանգամանք, որը պատիվ է բերում ազգային ավանդներն ու պատմությունը բարձր գնահատող մտավորականին:

Տարիների ընթացում հավաքած իր նյութերի մի մասը՝ գրքեր, մամուլի օրինակներ, ազդագրեր, ծրագրեր, լուսանկարներ և այլ նյութեր ՅՈՒՆԵՍԿՕ-ի նվիրել է Հայաստանի մշակութային խոշոր կենտրոններին՝ Հայաստանի ազգային գրադարանին, Մաշտոցի անվան Մատենադարանին, Հայաստանի պատմության պետական թանգարանին, Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանին: Նրա այդ ազգանվեր ծառայությունը գնահատվել է «Մեսրոպ Մաշտոց» շքանշանով ու շնորհակալագրերով:

Ավո ՅՈՒՆԵՍԿՕ-ի հավաքածուն պատմա-ազգագրական նշանակություն ունի ոչ միայն իրանահայ մշակույթի, այլև առհասարակ հայ ժողովրդի մշակույթի պատմության ուսումնասիրության համար:

Իր գիտելիքներով ՅՈՒՆԵՍԿՕ-ի մեծապես օժանդակում է հայաստանյան բանասերներին, մասնավորապես «Իրանահայ հանրագիտարանին» տեղեկատու նյութերով՝ օժանդակելով նրա ավելի լիակատար լինելուն:

Վաղամեռիկ որդու՝ Շանթի հիշատակը հավերժացնելու համար նա հովանավորել է Շահվելու որդի Սարհադի «Հաշվենատյանի» տպագրությունը:

Ավո ՅՈՒՆԵՍԿՕ-ի հայ գրքի և գրականության, մշակութային արժեքները կորստից փրկելու և այն ժողովրդին վերադարձնելու նվիրական աշխատանքն արժանի է ամենայն խրախուսանքի ու բարձր գնահատության:

ԳՐԱԴԱՐԱՆԱԳԻՏԱԿԱՆ-ՄԱՏԵՆԱԳԻՏԱԿԱՆ

ՂԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ

Հայաստանի Ազգային գրադարանի տնօրեն

ԿԱՐԵՆ ԴԵՄԻՐՃՅԱՆ

Կարեն Դեմիրճյանի անունը, որ խնկելի է ամեն մի հայի համար, հավիտենորեն գրված է մեր ժողովրդի պատմության մվիրյալ գործիչների անվանապատանով: Իր սերնդի համար հավերժ ժողովրդական, բացառիկ իմացության և արտակարգ հմայքի տեր, նաև հնուտ ղեկավար, հեռահայաց քաղաքագետ, տաղանդավոր կազմակերպիչ իրենց ժամանակակիցը: Գալիք սերունդների համար հայրերի սերունդ, և հավիտենորեն որդիական հայացք ու վերաբերմունք առ նա սիրված ղեկավարը, որը կայսերական ամբողջատիրության և ազգերի համահարթեցման բարդություն պահպանեց իր՝ անձի, և իր ժողովրդի կերպարն ու նկարագիրը, առաջնորդելով նրա զարգացումները: Կարեն Դեմիրճյանին սիրել են կենդանության օրոք, սիրում են ետմահու. սիրում է իր ժողովուրդը - մեծագույն գնահատականը նրա ապրածի, անքննելի անցաթուղթը դեպի անմահություն... Սիրելու և հիշելու են նաև գալիք սերունդները նրա կյանքի և գործունեության հետագծի մեջ տեսնելով ղեկավարի անմնացորդ շահախնդրությունը իր ժողովրդի առաջընթացի, գիտական և մտավոր ունակությունների դրսևորման հրամայականը, քաղաքակիրթ ժողովուրդ և ամուր պետություն ձևավորելու մվիրումը... Եվ բոլոր հանգամանքներում նրա կերպարում մարմնավորելու թե զինվորին, թե հրամանատարին:

Կ. Դեմիրճյանը պետական այն գործիչներից է, ովքեր դուրս են կուսակցական դոգմաների կամ հասարակական ֆորմացիաների լարափակոցներից, նրանց սահմանները գծագրված չեն ժամանակի չափումներով, այլ հոգևոր և ավանդական են և միտում են լինել ժողովրդի հետ, ծառայել նրան, լինել նրա հիմնահարցերի լուծման առաջամարտիկը:

«Իմ քաղաքական գործունեության ընթացքում ես միշտ հենվել եմ մեր ժողովրդի վրա: Ինձ անհրաժեշտ էր իմանալ, զգալ, որ նա ինձ հասկանում է ու հավատում»:

Կարեն Դեմիրճյանը մեր նորագույն պատմության այն դեմքերից է, ուն անձն ու կերպարը, գործունեությունն ու մտածողությունը ուսումնասիրությունների, ինչու ոչ, նաև գեղարվեստական երկերի նյութ կարող են դառնալ:

Պատմական, հասարակական-քաղաքական բարդ, փոփոխությունների, անձնական ներքին մեծ ողբերգություն, համաժողովրդական զարթոնք և ամբոխավարական շանտաժ, սակայն դարձյալ իր ժողովրդին զինվորագրված սիրահարի վերադարձով իմաստավորված կյանք. «1998 թվին ես հասկացա, որ պետք է իմ ժողովրդին, որ նա հույսեր է կապում ինձ հետ, սպասումներ, և ես վերադարձա»:

Մատենագիտության հրատարակումը նպատակ ունի ուղեցույց լինի բոլոր նրանց համար, ովքեր կհետաքրքրվեն նրա ելույթներով, ճառերով, մտորումներով, գրառումներով, ինչպես նաև նրա մասին հրապարակումներով:

Հատկանշանական է, որ Կարեն Դեմիրճյանն իր ելույթները, ճառերն ու զեկուցումները՝ և հայերեն, և ռուսերեն, ինքն էր գրում, ինքն էր թարգմանում ու նաև՝ ի տարբերություն Խորհրդային Միության որոշ հանրապետությունների ղեկավարների, մեզ մոտ բոլոր համագումարներում, պլենումներում, կուսակցական գրեթե բոլոր նիստերում և միջոցառումներում հանդես էր գալիս մայրենիով:

Կարծում ենք, Կ. Դեմիրճյանի մատենագիտական երկլեզվյա սույն ժողովածուն կդառնա մասնագետների, ուսումնասիրողների և բոլոր հետաքրքրվողների համար սեղանի գիրք:

ԵԼԻԶԱՎԵՏԱ ԵՐԵՄՅԱՆ

Խնկո Ապր անվան մանկական գրադարանի
մատենագիտության բաժնի վարիչ

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ «ԳՈՒՐԳԵՆ ԳԱՐԻԵԼՅԱՆ» ԿԵՆՍԱՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Խնկո Ապր անվան մանկական գրադարանի կողմից հրատարակված «Գուրգեն Գարիբեյան» կենսամատենագիտությունը նպատակ է ունեցել հավաքել և ներկայացնել ժամանակակից հայ մանկական բանաստեղծական արվեստի լավագույն ներկայացուցիչներից մեկի՝ արցախցի գրող, հրապարակախոս, քաղաքական գործիչ ու

երգահան Գուրգեն Գաբրիելյանի ստեղծագործությունները և նրա մասին հրատարակված նյութերը մինչև 2002թ. հունիս ընկած ժամանակահատվածում:

Գիրքը նախատեսված է ինչպես մանկական գրականության, այնպես էլ մատաղ սերնդի կրթության ու դաստիարակության հարցերով զբաղվողների համար:

Կենսամատենագիտությունը կազմելիս օգտագործվել են գրողի անձնական արխիվը, Ազգային գրադարանի գրքային ֆոնդերը և գիտամատենագիտության բաժնի անհատական քարտարանները, Խնկո Ապրի անվան մանկական գրադարանի ֆոնդերը և այլ աղբյուրներ:

Կենսամատենագիտությունը կազմված է առաջաբանից, «Գրողի ստեղծագործությունները առանձին գրքերով», «Ակնարկները, հոդվածները, գրախոսությունները», «Կատարած թարգմանությունները», «Ստեղծագործությունները ԱՊՀ ժողովուրդների լեզուներով», «Երգերը» և «Նրա մասին» բաժիններից:

Յուրաքանչյուր բաժնում նյութերը դասավորված են ժամանակագրական-այբբենական կարգով, որը հնարավորություն է տալիս հստակ պատկերացում կազմել գրողի անցած գրական ուղու մասին:

Կենսամատենագիտությունն ունի անվանացանկ (հեղինակների և այլ անձնանունների), ինչպես նաև վերնագրային այբբենական ցանկ:

ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ԳՈՐԾԻ ՆՎԻՅԱԼՆԵՐ

Լույս է տեսել Բալաբեկ Մելյանի «Գրքի երախտավորներ» (կենսագրական համառոտ բառարան) գիրքը, որը հեղինակը նվիրել է հայ գրքի տպագրության 450-ամյակին:

Ինչպես գրքի առաջաբանում նշում է հեղինակը, գիրքը կազմելու առիթը եղել է մանկավարժական համալսարանի մշակույթի ֆակուլտետի գրադարանային բաժնի ավարտական կուրսերի պետական քննությունների ժամանակ ուսանողներին գրադարանագետների և մատենագետների մասին տրված հարցերը, որոնք հաճախ մնացել են անպատասխան: Ուստի և Բ. Մելյանը մտահոլացել է ստեղծել մի ձեռնարկ, որը ամփոփ կներկայացնի գրադարանային-մատենագիտական աշխարհի նվիրյալներին:

Հեղինակի իր «Երկու խոսք» առաջաբանում անդրադարձել է Հայաստանում գրադարանային գործի և բարձրագույն գրադարանային կրթության կազմակերպման և մի շարք այլ հարցերի:

Գրքում ներկայացված է նախախորհրդային ժամանակաշրջանի 8 և խորհրդային 43 գրադարանային գործիչների կենսագրությունը՝ այբբենական կարգով: Յուրաքանչյուրին նվիրված հոդվածները կազմում են 1-2 էջ: Տրված են նաև նրանց լուսանկարները: Հոդվածները գրված են ազատ շարադրանքով, որոնցում դրսևորվել է հեղինակի անձնական վերաբերմունքը: Իր իսկ խոսքերով. «Մեր կազմած այս բառարանը լիակատար չէ և չէր կարող լինել»:

Շնորհավորենք հեղինակին և ցանկանանք, որ այս հրատարակությունը լրացվի, ամբողջացվի և լիակատար ներկայացվի գրադարանային հանրությանը:

«ԹՎԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ» ԳՐՔԻ ՔՆՆԱՐԿՈՒՄԸ

ԳՐԱԴԱՐԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՍԲԻՈՆՈՒՄ

Հոկտեմբերի 11-ին Խ. Արուսյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գրադարանագիտության և մատենագիտության ամբիոնում տեղի ունեցավ

Տիգրան Զարգարյանի «Թվային գրադարան», Երևան, 2002 գրքի քննարկումը:

Քննարկումը նախածեռնել էր ՀՀ մշակույթի, երիտասարդության հարցերի և սպորտի

նախարարության գրադարանային բաժինը: Ներկա էին ամբիոնի դասախոսներ և

ուսանողներ, տարբեր գրադարանների ներկայացուցիչներ, գրքի հեղինակը և

խմբագիրները: Ներկայացնում ենք քննարկման սղագրական արձանագրությունը:

Ելույթների մի մասը բերվում է համառոտ, ուղիղ փակագծերի մեջ կախման կետերով [...]

նշվում են ելույթի համառոտած հատվածները: Հիմնականում դուրս ենք թողել բոլորովին

կցկտուր և անհասկանալի հատվածները և կրկնությունները: Ելույթները չեն խմբագրվել:

Վերջում ներկայացնում ենք նաև ամբիոնի նիստի «Տեղեկատվություն» խորագրով

որոշումը քննարկման արդյունքների վերաբերյալ: Եզրակացությունները թողնում ենք
ընթերցողին:
Խմբագրություն

ՍՈՒՔԻԱՍՅԱՆ ՉԱԳԻԿ, ամբիոնի վարիչ, մանկավարժական գիտությունների դոկտոր -
Եթե գոյություն ունի գրքի քննարկման ավանդական կարգ, մենք կարող ենք խախտել
ավանդական կարգը և յուրաքանչյուրն ուղղակի թող ասի իր կարծիքը գրքի նկատմամբ:
Եթե ասելու հարկ կլինի, ես կարող եմ ասել իմ կարծիքը: Նախապես կարող ենք մեր
հարգարժան հեղինակին ի դեպ երկու խոսքով հանդես գալ: Խնդրեմ, պարոն Տիգրան
Զարգարյան կարող ենք սկզբում ձայնը տալ: Ո՞վ կուզենա գրքի հետ կապված ելույթ
ունենալ: Լավ, որ այդպես է ես կսկսեմ:

Խնդիրը կայանում է նրանում, որ համակարգչային, ընդհանրապես տեղեկատվական
տեխնոլոգիաների զարգացումը ոչ միայն Չայաստանում, այլև ամբողջ աշխարհում առաջ է
բերել, այսպես կոչված, գրադարանային ոլորտում աշխատանքների կազմակերպման և
ղեկավարման շարժում, եթե կարելի է այսպես արտահայտվել: Սակայն խնդիրը կայանում է
նրանում, որ այդ շարժումները ոչ բոլոր երկրներում կարող են տպագրել, քան զարգացած
երկրներում: Որքան ինձ հայտնի է մասնագիտական գրականությունից, և տեսությունից և
պրակտիկայից, նաև իմ հանդիպումները միջազգային բազմաթիվ կոնֆերանսներում,
արտասահմանցի մասնագետների հետ և այլն, և այլն: Եվ ահա այստեղ բերված են
բազմաթիվ դրույթներ [...] Ես գիրքը ուշադրությամբ կարդացել եմ [...] Որ գրքում կան, ես
ասում եմ, չեմ առնչվում այն նեղ մասնագիտական հարցերին, որոնք որ հարգարժան
Զարգարյանը բերել է գրքում, ես չեմ առնչվում: [...] որովհետև իրավունք էլ չունեն
վիճարկել, դա հատկապես նեղ մասնագետների, ինֆորմատիկների գործն է և
համակարգչային ոլորտի: Բայց եթե համակարգիչը մենք աշխատեցնում ենք
գրադարանում, ապա, Տիգրան ջան, մենք պետք է պատկերացնենք, թե գրադարանը
իրենից ի՞նչ է ներկայացնում և համակարգիչները գրադարանում և առհասարակ
հասարակական կյանքում ի՞նչ դեր են խաղում: Սրա մասին է խնդիրը: Եվ եթե մենք,
փաստորեն ըստ բերված տեսությունների, որ զարգացվում է գրքում ավանդական
գրադարաններից մենք հրաժարվենք, ավանդական ինֆորմացիոն աղբյուրներից, ապա դա
բերում է ես չգիտեմ ինչի... Սա ուրեմն գրքի տիտղոսաթերթից:

ԳՈՒՐԳԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ, դոցենտ, մանկավարժական գիտ. թեկնածու - Ընկեր
Սուքիասյան, ներողություն, որևէ մեկը արձանագրո՞ւմ է:

ՆԵՐՍԵՍ ՉԱՅՐՎՊԵՏՅԱՆ, Չայաստանի Ազգային գրադարանի փոխտնօրեն - Ես
ձայնագրում եմ, եթե պետք լինի հետո կարող եք օգտագործել:

ՉԱԳԻԿ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ – Չինա սկսում ենք գրքի տիտղոսաթերթից: Որ բացում ենք
«Դեպի տեղեկատվական հասարակարգ», սա երբ որ կարդացի այդ տիտղոսաթերթին
գրված... Գիտեք, ինձ շատ լավ էլ հայտնի է ինչ բան է տեղեկատվական հասարակարգը. ես
նկատի ունեմ իմ իմացած գիտելիքները այդ ուղղությամբ: Բայց հարգարժան Զարգարյանի
գրքում տեղեկատվական հասարակարգը չի ներկայացված այնպես, ինչպես որ մենք
պատկերացնում ենք: Այսօր հայազգի բոլոր ընթերցողները, գրադարանային ոլորտի
աշխատողները այնպես չեն կարող պատկերացնել [...] Իհարկե ճիշտ է, որ գրքում դրվում են
այդ հարցերը, որ ասենք թե հասարակությունը, կյանքը գնում են դեպի տեղեկատվական
հասարակարգ: [...] Ի դեպ ասեմ, որ հիմա ապացուցված չի, թե որ երկիրն է գնացել
տեղեկատվական հասարակարգ [...] Այնտեղ բացատրությունը կա, ես ասեմ դա, ես չգիտեմ,
մի քիչ վիճահարույց է: Այդ առումով ես կուզեի մտքերի փոխանակման կարգով իրար ճիշտ
հասկանանք: Ենթադրենք, եթե գրադարանները կորցնում են իրենց դերը սոցիալական
ոլորտում, հասարակական կյանքում, ապա ի՞նչ է իրենցից ներկայացնում փաստորեն,
բոլոր դեպքերում գրադարանը ընդհանրապես:

Ուրեմն գրադարանը բոլոր դեպքերում մնում է գրադարան, որպես սոցիալական
ինստիտուտ է: Եթե մենք տեղեկատվական հասարակարգ ենք մտնում, ուրեմն էստեղ պիտի
նկատել, որ գրադարանը ավելի է բարձրացնում իր սոցիալական և իր բոլոր ֆունկցիոնալ
կողմերով: Այսինքն՝ ըստ գրքի, ոչ թե գրադարանը մենք պիտի դիտարկենք
համակարգչային տեսանկյունից, այլ հակառակը, գրադարանի մեջ մենք պիտի տեսնենք էլ
բոլորը:

[...] Այդ տեսությունը ի դեպ հայտնի չէ, թե ո՞վ է դա ստեղծել տեղեկատվական
հասարակարգը, հայտնի չի և եթե հայ ազգին մենք կոչ ենք անում գնալ դեպի
տեղեկատվական հասարակարգ, հայտնի չէ, էլ տեսությունն ով է ստեղծել:

Գրքում պետք է լինի ֆունդամենտալ իմացություն բոլորի համար: Տեղեկատվական հասարակարգն առաջին անգամ առաջ է քաշել Դանիել Բելլը Ամերիկայում: Նա առաջ է քաշել մի մեթոդոլոգիա, որի տեսությունը հիմա քննադատվում է ամբողջ աշխարհում, քննադատում են սոցիոլոգները, պատմաբանները: Ըստ նրա տեսության, առաջ են քաշվել վերլուծության երեք ոլորտներ՝ տնտեսություն, տեխնիկա և զբաղվածություն: Ինչպե՞ս է լուծվում գործազրկության հարցը: Դրա համար ստեղծվել են զբաղվածության կենտրոններ:

Հիմա, ով կարող է ասել, եթե գրադարաններում կրճատվում են հարյուրավոր մարդիկ նրանք որտե՞ղ պետք է աշխատեն: Եթե մենք տեխնոլոգիաները մտցնում ենք գրադարաններ և կրճատումներ, ապա հարցը պիտի լուծվի: [...] Սա գլոբալ պրոբլեմ է: Խնդիրը նրանում է, թե մենք ինչպես ենք պատկերացնում այդ հասարակարգը և ինչպես պետք է ապրենք այդ հասարակարգում: [...]

Դուք գրադարանի աշխատող եք բոլորդ, դուք պիտի հասկանաք, թե ինչ է գրադարանն առհասարակ մեր հայկական իրականության մեջ և նա ինչ դեր պիտի ունենա: Սրա մասին է խոսքը:

Հիմա տեսեք ինչ է ստացվում համակարգչային ցանցում: Հիմա հարց է, թե ո՞վ է կառավարում, ամբողջ հասարակական, տեղեկատվական հասարակարգում ո՞վ է կառավարում այդ ամենը: Օրինակ, ես չգիտեմ, Հայաստանը բաժանվել է մարզերի: Այ տեսնում եք, իմ և ձեր միջև չկա տեղեկատվական կապ: Ես պրիմիտիվ օրինակ եմ բերում: Մեր միջև չկա կապ ոչ մասնագիտական, ոչ ինֆորմացիոն առումով: Խնդրում եմ, պատասխանել այդ հարցին, թե ո՞վ է Հայաստանում կառավարում գրադարանային ոլորտը: Ո՞վ է պատասխանատու ամբողջ ինֆորմացիոն տեխնոլոգիաների կառավարման պրոցեսում:

[...] Խնդիրը նրանում է, որ պետք է ոչ թե դեմ կանգնել ավանդական մեթոդներից, այլ հակառակը: Խնդրանքս այն է, որ նման մասնագիտական գրքեր գրելիս խորհրդակցեն նաև մասնագետների հետ: Ինչու՞ է գրքում ամեն ինչ հիմնված ամերիկյան գրադարանների վրա: Մի՞թե ոչ մի հայ գիտնական չի զբաղվել այդ հարցով: [...]

ԱՆՆԱ ՇԻՐԻՆՅԱՆ, հանրապետական գիտա-բժշկական գրադարանի տնօրեն - Չի կարելի ասել, թե ամբիոնի հետ կապ չկա: Ուսանողները գալիս են պրակտիկայի մեր գրադարան, մենք փորձում ենք մեր գիտելիքները փոխանցել նրանց: Ինչը վերաբերվում է արդեն կոնկրետ գրքին, իհարկե Դուք [Գ. Սուքիասյանը – խմբ.] ավելի մանրամասն ծանոթացել եք գրքին, հետազոտել եք, որը, ցավոք սրտի, ես չեմ արել: [...] Եվ երկրորդ հարցի մասին, որ ես կուզեմայի ավելի մանրամասն ասել, դա վերաբերվում է Ձեր բերած մի փաստարկին, որ Տիգրան Ջարգարյանը հերքում է մատենագիտական ավանդական հաշվառումը: Այստեղ բացարձակ խոսքը դրա մասին չէ: Գրադարանային գործը եղել է, կա և պիտի մնա: Այսինքն՝ մենք, գրադարանավարներս արել ենք, անում ենք և պիտի անենք, որն է, ինչն է, մի պարզ բանածև՝ համալրել, կազմակերպել, պահպանել և փոխանցել: Փոխվել են միայն ձևերը և մեթոդները: Այն, ինչն արվել է ավանդաբար, այսօր պետք է արվի համակարգչի միջոցով: Սա է ընդամենը: Իմ կարծիքով էս է շեշտադրվել: Գիրքը ներկայացված է տեխնիկական կրթության, այսինքն՝ համակարգչային մասնագետի տեսանկյունից: Ես պիտի ուղղակիորեն ասեմ շնորհակալություն Տիգրան Ջարգարյանին, որովհետև այստեղ կան նաև գրադարանային գործի վերաբերյալ բաներ, որ մենք չուներք Հայաստանում: Տույց տվեք ինձ մի գիրք, որտեղ ես կկարդամ ավելի շատ վերնախորագրային այդ բառարանների, տեգաուրուսների մասին: Չկա այդ նյութը: Գրադարանի տնօրենները երբ ուզում են վերապատրաստումներ կազմակերպել, չունեն այդ նյութը:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՏԻԳՐԱՆ, Երևանի հայկական պետական մանկավարժական ինստիտուտի գրադարանի տնօրեն - Մեր գրադարաններն աշխատում են 30-ական թվականների մակարդակով: Այստեղ մեթոդների ընտրության հարց է: Գիրքն ունի նաև խոցելի կողմեր: Ավելի շահեկան կլիներ, եթե հեղինակը կոորդինացներ գիրքը ձեռագիր վիճակում, քննարկվեր մեր ամբիոնում, վրան կգրվեր, որ հրատարակության է երաշխավորել գրադարանագիտության և մատենագիտության ամբիոնը և այդ դեպքում այն ավելի շահեկան կլիներ: Գիրքն ընդհանուր առմամբ արժեքավոր է: Առանձին տեսություններ գնում են իրենց ճանապարհով: Տեղեկատվական հասարակարգը գլոբալ հարց է, եկեք դա քննարկենք: Ես շնորհավորում եմ Ջարգարյանին:

ՍԱԹԵՆԻԿ ԱՎԱԳՅԱՆ, Հայաստանի ամերիկյան համալսարանի «Փափազյանի անվան» գրադարանի տնօրեն - Ես չգիտեի գրքի նպատակը և հասկացա, որ այն ներկայացվել է իբրև տեղեկատու և օգնություն գրադարանավարին՝ թե ինչպե՞ս շարժվենք

առաջ: Չկա մատենագիտության մասին: Տալիս է ամբողջ աշխարհի զարգացման նորությունները: Կարևոր գիրք է: Տիգրան Ջարգարյանն այն մարդն է, որ փորձում է մեր մատենագիտության բոլոր ուղղությունները պահպանել և ներկայացնել:

ԲԱԼԱԲԵԿ ՄԵԼՅԱՆ, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ - Շնորհակալություն Տիգրան Ջարգարյանին, մեր մատենագիտության մեջ նոր խոսք ասելու համար: Երբ ուզում էին ստեղծել կատալոգներ և գրադարանների կենտրոնացված համակարգ, այն ժամանակ էլ են եղել ընդդիմախոսներ: Եթե Տիգրան Ջարգարյանը ղեկավարում է բժշկական հանրապետական գրադարանի և պետական համալսարանի գրադարանի համակարգչային տեխնիկայի աշխատանքները, հենվելով իր փորձի վրա, Ամերիկայում ստացած իր գիտելիքները ներկայացրել է, դա պետք է միայն ողջունել: Հենվելով նոր խոսքի վրա, դուք էլ ասեք ձեր խոսքը: Շնորհակալություն այս միջոցառման համար: Պետք է մտածել նաև մեր լեզվի տարրերը մտցնել: Մենք պետք է պահպանենք մերը:

ՆԵՐՍԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ - Ես շնորհակալություն եմ հայտնում կազմակերպիչներին, ովքեր որ նախաձեռնել են այս քննարկումը: Սա միակողմանի նախաձեռնություն չի, նաև հեղինակներն իրենք են ցանկացել, որ քննարկումը կազմակերպվի և մշակույթի նախարարությունը, շնորհավորում եմ գրքի հեղինակային կազմին:

Գիրքը շատ հաջող է, հետաքրքիր և ես այս գիրքն ընկալել եմ ոչ թե իբրև դասագիրք, այլ որպես առաջին փորձ, որը ներկայացնում է թվային գրադարանի կոնցեպցիան, հայեցակարգը: Այստեղ խոսք չկա ավանդական գրադարանի մասին: Խոսք չկա, որ մենք պետք է ավանդական գրադարանից հրաժարվենք, փակենք գրադարանները: Սա օբյեկտիվ իրականություն է, որ գրադարանային աշխարհը շարժվում է դեպի թվայնացում, համակարգչայնացում: Սրանից հրաժարվելը սխալ կլինի:

Ես ուրախ եմ, որ մեր քննարկման սկզբի սխալ ուղղությունը շտկվեց և հիմա մենք խոսում ենք ըստ էության: Գրքում կան հետաքրքիր տերմիններ, բայց կան նաև այնպիսի տերմիններ, որոնք չեն կարծում, որ կյանքի կկոչվեն: Պետք է մենք հայեցենք այդ տերմինները, որպեսզի հարստացնենք մեր լեզուն նաև տեղեկատվական, գրադարանագիտական, մատենագիտական նոր տերմիններով: Գրքի վերջում ոչ այնքան ամհրաժեշտ են ինտերնետի և ինտելի մասին հատվածները, որոնք թվային գրադարանների հետ այնքան էլ չեն առնչվում: Կարելի էր և դրանք չդնել:

Բայց գրքի մեջ կան շատ օգտակար բաներ, առաջին անգամ տրվում է թվային գրադարանի կոնցեպցիան: Հեղինակը չի ասում, որ հենց սա է ճիշտը, նա միշտ տալիս է մի քանի այլընտրանք, բերում է մի քանի տերմիններ, մի քանի բնորոշումներ: Եվ ոչ մեկը չի կարող ասել, թե ո՞րն է ճիշտ, ո՞րն է վերջնական հստակ սահմանումը: Տիգրան Ջարգարյանը բերել է թվային գրադարաններ ստեղծելու ճանապարհը, թե ինչից պետք է սկսել, ինչ պետք է անել, ինչ է հարկավոր: Նա շատ հետաքրքիր օրինակ է բերել, Կանադայի ազգային գրադարանի օրինակը, որը թվային գրադարան ստեղծելու համար ստանդարտի հարյուրից ավելի նախաձեռնություն է առաջ քաշել և դրանք բոլորն էլ ընդունվել են:

Մենք հսկայական անելիքներ ունենք և ես կարծում եմ, որ ամբիոնը պետք է համագործակցի գրադարանների հետ: Գրադարանները կապված են իրար հետ և կոչ ենք անում, որ ամբիոնն էլ կապվի գրադարանների հետ: Ես առաջարկում եմ, որ ամբիոնն ուսանողներին հնարավորություն տա դասընթացներ անցնել գրադարաններում և այս գիրքն իբրև ուսումնական ձեռնարկ, վերամշակելուց հետո, օգտագործվի: Թող հեղինակները կարդան հատուկ դասընթաց՝ թվային գրադարաններ: Հայկական գրադարանային միությունն ունի կոմպյուտերային դասարան, առաջարկում եմ, որ այդ դասարանն օգտագործվի ձեր դասընթացների ընթացքում: Շնորհակալություն:

ՓԵՓՐՈՆԵ ՄԵԺԼՈՒՄՅԱՆ, խնկր Ապրո անվան մանկական գրադարանի աշխատակից - Շնորհավորում եմ: Գիրքն արժեք ունի և կարևոր է: Այն պետք է դառնա ամբիոնի ուսանողների սեղանի գիրքը: Եթե ամբողջ աշխարհը գնում է դեպի թվային գրադարաններ, մենք էլ պետք է գնանք: Ոչինչ անել չենք կարող: Սա առաջընթաց է և մենք ոչինչ անել չենք կարող: Հեղինակը խոսում է այն մասին, որ պահպանելով ավանդականը, համակարգիչի միջոցով պետք է ավելի արագ և ավելի լավ սպասարկենք մեր ընթերցողներին:

ՄԱՂԵՆ ՀՈՎՍԵՓՅԱՆ, խնկր Ապրո անվան մանկական գրադարանի փոխտնօրեն - Միշտ էլ ցանկացած բնագավառում, այդ թվում և գրադարանային բնագավառում, եղել են փոփոխություններ: Պետք է վերցնել նորը, լավը: Հակառակ դեպքում, մեր հասարակարգն առաջ չի գնա: Գրքում կարևոր բաներ շատ կան և ունի իր արժեքը: Ես շնորհավորում եմ:

ՖԱԹՄԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ, ԳԳ Ազգային ժողովի գրադարանի վարիչ, «Թվային գրադարան» գրքի խմբագիր - Գրքի նպատակը թվային գրադարանների մոդելի տալն էր: Իսկ ինչու՞ մենք այստեղ պետք է խոսեինք ամբողջ գրադարանային գործի մասին, ես չեմ հասկանում: Այդ դեպքում 10 հատոր պետք է գրեինք: Ես ինձ գրադարանային գործի լավ մասնագետ եմ համարում: Եվ եթե ասում եք, որ այստեղ կան մասնագիտական սխալներ, ապա կոնկրետ օրինակներ չբերվեցին: Ոչ մեկը դեմ չի ավանդական գրադարանի մոդելին: Թվային գրադարանը ոչ թե խանգարում է, այլ հավելյալ օգնում է, որ Դուք ավելի ինտելեկտուալ սերունդ զարգացնեք: Գիրքը շատ առումներով օգտակար է: Գրքի մեջ գրված է, որ աշխատատեղերի ավելացում է լինում ավտոմատացման միջոցով, ոչ թե հակառակը: Ավելացրեք, գրեք ավելի լավը:

ՏԻԳՐԱՆ ԶԱՐԳԱՐՅԱՆ, ԵՊԳ գիտական գրադարանի ավտոմատացման բաժնի վարիչ - Մեր իրականության մեջ մարդիկ չեն հասկանում, թե ինչ է տեղեկատվական հասարակարգը: Ավտոմատացման ժամանակ կան ֆինանսական դժվարություններ: Ավելանում են աշխատատեղերը: Ինչու՞ ամերիկյան գրադարանների հիման վրա, որովհետև Ամերիկյան աշխարհի թե գիտական, թե տեխնիկական, թե մշակութային ամենազարգացած հարուստ երկիրն է: Թվային գրադարանի գաղափարը, տեղեկատվական հասարակարգը, իրականացվել է ԱՄՆ-ում: Եվ ողջ աշխարհը, այդ թվում Եվրոպան և Ռուսաստանը, հետևում են նրանց: Ոչ մեկը ոչ մի նոր բան չի հնարում: Այդ փորձը պետք է ընդունենք: Այնտեղ թվային գրադարանների վերաբերյալ տարեկան հարյուրներով գրքեր են հրատարակում, եթե ոչ հազարներով: Դա զարգացող ուղղություն է: Մեծ ներդրումներ են պետք: Հիմա համակարգիչներում կա այն հնարավորությունը, որ կարող եք նյութերը մուտքագրել համակարգչի մեջ ցանկացած լեզվով, այդ թվում և հայերեն: Հիմա Հայաստանում գրադարանները սկսել են ավտոմատացման պրոցեսները: Բոլոր հարցերը լուծման փուլում են: Եվ մենք այդ առաջարկները վերցրել ենք: Ես արդեն ասացի, որ գիրքը գրադարանագիտությանն ընդհանրապես չի վերաբերում: Այն եզակի է մեր իրականության մեջ: Գրված է հիմնականում երիտասարդության համար, թող վերցնեն, ուսումնասիրեն: Սա «Դեպի տեղեկատվական հասարակարգ» մատենաշարի առաջին հրատարակությունն է: Խնդրեմ, կարո՞ղ եք նոր գրքեր հրատարակել, ոչ մեկը դեմ չի: Ես ինչքան գիտեմ, Անդրկովկասի տարածքում նույնպես այսպիսի գիրք չկա: Իհարկե, կան թերություններ, մենք պարզապես փորձել ենք պարզաբանել ընդհանուր պրոբլեմները և ներկայացնել: Ես գրքում չեմ ասել, որ գրադարանները պետք է փակվեն, այլ այն, որ բոլորը պետք է անցնեն թվայնացման: Դրանք կարող են իրար հետ համերաշխ ապրել: Հիմա Հայաստանը գտնվում է ինտեգրացման գործընթացների մեջ: Եվ եթե մենք ուզում ենք ինտեգրվել Եվրոպային, դառնալ Եվրոպայի անդամ մասնակից մի պետություն, ուզենք թե չուզենք, պետք է լուծենք այդ պրոբլեմները: Սա քաղաքակրթության պահանջն է: Հիմա գրադարանները գտնվում են մեծ հեղաշրջման մեջ: Վեց խոշոր գրադարաններ ավտոմատացման քայլերն են անում: Մենք կարիք ունենք մասնագետների: Երկու տարի է, ինչ սկսել ենք այդ աշխատանքները, բայց դեռ գտնվում ենք զրոյական վիճակում: Կարևոր է, որ ընդունվի օրենք, մի փաստաթուղթ, որի վրա հիմնվեն գրադարանի աշխատողները:

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Ս/թ. հոկտեմբերի 11-ին /ժ. 12⁰⁰/ ՀՀ մշակույթի նախարարության գրադարանների բաժնի և Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ կուլտուրայի ֆակուլտետի գրադարանագիտության և և մատենագիտության ամբիոնի նախաձեռնությամբ կազմակերպված Տ. Զարգարյանի «Թվային գրադարաններ» /Եր., 2002/ գրքի քննարկման արդյունքների մասին /համառոտակի/:

Քննարկմանը մասնակցում էին ամբիոնի դասախոսներ, ասպիրանտներ, ուսանողներ, գրադարանների տնօրեններ, աշխատողներ և գրքի հեղինակը:

1. Քննարկման ընթացքում «Թվային գրադարաններ» գիրքը գնահատվեց համակարգչային գործում որպես օժանդակ ձեռնարկ:
2. Նշվեց, որ որոշ մասնակիցներ ցուցաբերեցին կողմնակալ վերաբերմունք՝ շրջանցելով գրքում տեղ գտած մի շարք անճշտություններ, բացթողումներ, տեսական-մասնագիտական անընդունելի ձևակերպումներ, անհարկի կրկնություններ: Այդ պատճառով քննարկումից բխող գրադարանագիտական, մատենագիտական, տեղեկատվական, կրթական ու դաստիարակչական մի շարք հարցեր մնացին վիճահարույց: Նշված հարցերի շուրջ ամբիոնն ունի հատուկ կարծիք և զարգացման ծրագիր:

3. Քննարկման արդյունքում պարզվեց նաև, որ հանրապետությունում առկա է գրադարանային գործի զարգացման երկու տենդենց. ամերիկյան և հայկական: Ամբիոնը հայ գրադարանագիտության և գրադարանային գործի զարգացման կողմնակից է՝ ուսումնական և գիտական աշխատանքներում կիրառելով միջազգային առաջավոր փորձը, հայ և օտարազգի գրականությունը:

Գրադարանագիտության և մատենագիտության ամբիոնի վարիչ՝
Գ. Ա. Սուքիասյան

ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԳՐԱԴԱՐԱՆԱՎԱՐԻՆ

ՀԱՅ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՍՈՒԼԸ ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ

ԳՐԾԻ ՄԱՍԻՆ

(մատենագիտական ցանկ - 2002)

Ներկայացվում է 2002թ. լույս տեսած գրադարանագիտական և մատենագիտական գրքերը, ինչպես նաև մամուլում գրադարանների, գրադարանային գործի և մատենագիտության վերաբերյալ հրապարակումների ցանկը: Ցանկը կազմել է Հայաստանի Ազգային գրադարանի մատենագիտության և գիտական հետազոտությունների բաժնի առաջատար մատենագետ Արմինե Հակոբյանը:

ԳՐՔԵՐ

1. Գուրգեն Գաբրիելյան: Կենսամատենագիտություն /ՀՀ մշակույթի, երիտ. հարցերի և սպորտի նախարար. Խնկո-Ապրո անվ. հանրապետական մանկական գրադարան; Կազմ.՝ Ե. Երեմյան; խմբ.՝ Ե. Հակոբյան.- Ե.: Խնկո-Ապեր անվ. հանրապ. մանկ. գրադ., 2002.- 164 էջ, դիմանկ.:
2. Ջագարյան Տիգրան: Թվային գրադարաններ: /խմբ. Ֆ.՝ Խաչատրյան, Հ. Հայրապետյան.- Ե. 2002.-167 էջ, աղյուս., 20սմ.- Հավելված.- էջ 156-162.- Ցանկ. էջ 163-166:
Ջարգարյան Տիգրան: Թվային գրադարաններ: Գրախոս.՝ Ասատրյան Մ.: Բացենք աշխարհին նայող պատուհանները: //Հայաստանի Հանրապետություն.- 2002.- 27 դեկտեմբ. - էջ 5:
3. Դեմիրճյան Կարեն: Մատենագիտություն /ՀՀ մշակույթի, երիտ. հարցերի և սպորտի նախարար. Հայաստանի Ազգային գրադարան; խմբ.՝ Ռ. Մահտեսյան.- Ե.: Գիրք, 2002.- 127 էջ, գույն. դիմանկ., 21 սմ.- Բնագիրը հայ. և ռուս. :
4. Հայաստանի Ազգային գրադարան: Հավելվածություն 2001թ. կատարած աշխատանքների: /Կազմ.՝ Ջ. Կոստիկյան: ՀՀ Մշակույթի, երիտ. հարցերի և սպորտի նախարար. - Ե.: Գիրք, 2001.- 38 էջ, աղյուս. 20 սմ:
5. Հայաստանի Ազգային գրադարան: Նոր գրքեր: Տեղեկատու ցանկ /ՀՀ. Մշակույթի, երիտ. հարցերի և սպորտի նախարար. , ՀԱԳ.- Ե.: Գիրք, 2002.- 20 սմ: 1-ին կիսամյակ: 59 էջ.- Բնագիրը հայ., ռուս. և օտար. լեզ.:
6. ՀԱՅՎԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ: Տարեգիրք N 6 /ՀԳՄ. , Պատր. Ն. Հայրապետյան. Ռ. Ղազարյան, խմբ.՝ Դ. Սարգսյան.- Ե., 2002.- 132 էջ, լուսանկ., 20 սմ.- Մատենագիտ., տողատ. ծանոթ.:
7. Հայաստանի հանրային բնույթի գրադարանները 2001 թվականին: Աշխատանքների վիճակագրական վերլուծություն /Կազմ.՝ Լ. Դանիելյան: ՀՀ Մշակույթի, երիտ. հարցերի և սպորտի նախարար.: Հայաստանի Ազգային գրադարան: -Ե.: Գիրք.- 2002. - 67 էջ:

ՀՈՒՆՎԱՐ

1. Հովհաննիսյան Ա. Հոգու լույսը չի հանգչում. Ավ. Իսահակյանի անվան գրադարանի մրցույթի մասնակից //Զրիստոնյա Հայաստան.- 2002.- հունվար Բ.- թիվ 2:

ՓԵՏՐՎԱՐ

2. Աճենյան Մ. «Փարոս»՝ ոչ միայն հացիվ: Ավ. Իսահակյանի անվ. գրադարանի հյուրեր է Ռադիկ Խամոյանը //Եթեր.- 2002.- 4 փետր.

ՄԱՐՏ

3. Այդինյան Վալտեր: Ինքնատիպ գիտաժողով [Նվիրված Մեսրոպյան ուղղագրության կասեցման 80-ամյա տարելիցին՝ Ավ. Իսահակյանի անվ. գրադարանում, նաև գիտաժողովի ուղերձը նախագահ Ռ. Քոչարյանին]: //Ավանգարդ.- 2002.- 6-12 մարտ:
4. Ապրիլի 17-ը հայտարարվում է Ավ. Իսահակյանի անվան գրադարանի օր //Ավանգարդ.- 2002.- 20 մարտ:

5. Բաղայան Մելանյա: Գիտաժողով Մեսրոպյան ուղղագրությունը վերահաստատելու ջանքերով [Ավ. Իսահակյանի անվ. գրադարանում] //Ազգ.- 2002.- 6 մարտ:
6. Հայրապետյան Ներսես: Գրադարանային օրենսդրությունը ԱՊՀ երկրներում //Հայաստանի Հանրապետություն.- 2002.- 27 մարտ:
7. Ղազարյան Լ. Ճաքած նռան նման... (Ավ. Իսահակյանի անվան գրադարանում նշվեց Յուրի Սահակյանի ծննդյան 65-ամյակը) //Հայաստանի Հանրապետություն.- 2002.- 27 մարտ:
8. Մինասյան Գագիկ: Այդ ապագան սկսվում է այստեղից (Հայաստանի Ազգային գրադարան) [Գրադարանի տնօրեն Դավիթ Սարգսյանի խոսքի մասին] // Հայաստանի Հանրապետություն.- 2002.- 26 մարտ:
9. Նվիրված էր սիրելի գրողին (Ավ. Իսահակյանի անվան գրադարանում հուշ-ցերեկույթ նվիրված Խաժակ Գյուլնազարյանին) //Հայաստան.- 2002.- 29 մարտ:
10. Շաքարյան Հայկանուշ: Գիտատեխնիկական գրադարանը 93 տարեկան է: [Ավավերդի] // Հայաստանի Հանրապետություն.- 2002.- 20 մարտ:

ԱՊՐԻԼ

